

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

ԻՔ. ՏԱՐԻ,

ԹԻՒ 1-2

ՅՈՒՆՈՒԱՐ-ՓԵՏՐՈՒԱՐ

1990

ՊԵՏՐՈՒՔ

Պ. ՄԱՊԵԱՆ



Երբ վերելակէն դուրս ելանք ու Սեպուհ սենեակին բանալին պաշտօնեային յանձնելու համար քանի մը քայլ հեռացաւ մեզմէ, Ատոմ գլխու պտոյտ մը հիմք բռնած խնդրեց, որ գիշերը ես ինքն գրադեցնեմ կիպրահայ իր ազգականը եւ իրեն առիթ տամ ջիղերը խաղաղեցնելու: Այս քախանձանքը գարմանալիօրէն դիւր եկաւ ինծի, եւ ուժգնօրէն միացայ իրեն, երբ Սեպուհ եկաւ եւ սկսաւ միասին ըլլալու ջանքեր ի գործ դնել: Իմ կողմնորոշումիս պատճառը պարզ էր, կը վախճայի, որ մեր կողմերէն անդրժովեան ափերը բնակութեան վայրեր որոնելու փութկոտութիւններ մատնող մարդոց պարագան կրնար դարձնալ նիւթ դառնալ եւ աւելի փոքորկել արդէն յորդելու աստիճանին հասած դառնութեան բաժակները: Մնաց որ, առաջին տպաւորութեամբ իսկ նշդած էի, որ Սեպուհ քիչ մը ինծի կը նմանէր, վտանգներէ խոյս տուող, կենսասէր, վայելքի ախորժակը արթուն պահող անձ մը, ճիշդ հակապատկերը Ատոմին, որ առանց վտանգի չէր կրնար օրը իրիկուն ընել եւ բոլորովին անփոյթ էր կենսասիրական ընթացիկ հակումներուն նկատմամբ:

Կանգ առինք իր նշանակած տեղը, Սինեմա Տիվոլիի առջեւ: Սեպուհ նորէն կրկնեց գիշերը միասին անցընելու բաղձանքը: Անօգուտ:

— Վաղը, — ըսաւ Ատոմ, — յուսամ գլխապտոյտս կ'անցնի շուտով ու գիշերը գուարթ պահ մը ապրելու առիթ կ'ընծայէ մեզի:

Պայմանաւորուեցանք: Իրիկուան դէմ պիտի հանդիպէի Սեպուհին, գուարթ մը բան պիտի առնէինք Ատոմին մօտ եւ հոն պիտի նշգէինք մեր առնելիք յաջորդ քայլը:

Բաժնուեցանք: Անմիջապէս զգացի, որ այս դասաւորումէն ինծի պէս շատ զոհ մնաց նաեւ Սեպուհ, որ ճամբու վրայ սկսաւ աւելի համարձակ ու բիրտ կերպով դրսեւորել իր տրամադրութիւններն ու գանգատները Ատոմին հանդէպ: Ըստ իրեն, Ատոմ իբրեւ Վտանգներու դէմ-յանդիման չէր գտնուած երբեք, մահուան աչքերուն ուղղակի չէր նայած ու նիշդ այդ պատճառով այդքան յախուռն սանձարձակութեամբ կը խօսէր հիւրընկալ երկիրներուն հանդէպ իբր թէ մեզի պակասող անհրաժեշտ հաւատարմութեան մասին: Յոյն-թրքական բնդհարումներուն ատեն ռումբ մը ինկած էր հօրը կերպասեղէնի վահանատան մօտ ու իր աչքերուն առջեւ երկու հոգի տեղն ու տեղը մահացած էին: Այդ տեսարանին յանախանքը կը տանջէր զինք ու կը սարսափէր կրկնութեան հաւանականութենէն: Անզլիւ մեծ երկիր է, կ'ըսէր, անմիջական թշնամիներէ հեռու, ազատ: Կեանքը մէկ անգամ կը տրուի մարդու: Ու ինք չէր կրնար այդ գանձը գոհել յոյնին կամ թուրքին...

Իջանք Սէն Ժորժ պանդոկին ծովափնայ սրճարան-ճաշարանը, ուր կը սիրէի առաջին անգամ հիւրընկալել օտար բարեկամներս:

Մթնոլորտը յագեցած էր տարբեր լեզուներ խօսող յանախորդներու աղմուկներով, որոնք երբեմն կը խաչաձեւուէին մեղմ երաժշտութեամբ, բայց աւելի հանելին գովացած օդին հետ ծովային թեթեւ մրմունջներու վրայէն հասնող ազի ֆաղցր բոյրն էր, գոր պարբերաբար կը ներծծէինք լիաթոք հեշտանքով: Լոյսեր ու լոյսերու պար' լեռներէն մինչեւ ծովափ ու ծովուն վրայ: Սեպուհ բարձրաձայն կը յայտնէր իր սփանչացումը, ինչպէս ըրած էր օդակայանէն պանդոկ երկարող ճամբուն ամբողջ ընթացքին եւ ես գիտէի, որ ինծի հանոյք պատճառելու համար չէին իր պտոթկումները:

Լիբանանի բաց երկինքին ու լիբանանցիներու բաց սիրտերուն ու սեղաններուն մասին խօսելով աւարտեցինք ռիսիֆի առաջին բաժակը, երկրորդ մը՝ նոյն մթնոլորտին մէջ, ու մաղթանքներու փոխասացութեամբ երրորդ մը պար-

պել էտք միայն մտածեցինք այդ չֆնադ վայրէն բաժնուելու մասին:

Հոյիտէլ ինի մօտէն բարձրացանք վեր, աւելի վեր, թեքեցանք աչ եւ ուղղուեցանք դէպի Համրա: Փողոցները գրեթէ պարպուած էին ու հեզասահ մեր ընթացքին մէջ ինծի կը յաջողէր մեր հանդիպած ֆաղափական ու մշակութային կեդրոններուն մասին տեղեկութիւններ հազարդելու հիւսիս: Բայց վարչապետարանին մասին խօսքս ստուեցաւ յանկարծ շրթներունս, երբ քանի մը ֆայլ անդին, կրթական նախարարութեան ցուցասրահին գոց փեղկերուն դիմաց նշմարեցի Ատոմը, որ գլուխը երկու ափերուն մէջ առած՝ կը խուզարկէր ներսը:

— Ինչո՞ւ յանկարծ լոնցիր,— հարցուց Սեպուհ:

— Խօսքիս թելը կորսնցուցի, ոչինչ,— բսի,— ինծի յաճախ կը պատահին այսպիսի անակնկալ դադարներ:

Քառուղիին վրայ կանգ առի ու յետացայց հայելիէն ուզեցի նշդել, թէ տեսածս իրականութի՞ւն էր թէ երագ, բայց իրապէս ինքն էր, հոն էր, անցնող-դարձող մարդոց ու ինքնաշարժներուն հանդէպ անտարբեր, արձանացած: Սեպուհին բան չբսի, ինքն ալ չկատեց լուսութեանս հետ հոգիս զիզուած տխրութիւնը: Ուրեմն գլխու պտույտը պարզ պատրուակ էր ու հանգիստ ընելու համար տուն չէր գացած: Ո՞ւր անցուցած էր արդեօք մեր բաժանումէն ետք թաւալած ժամերը: Ի՞նչ կը փնտռէր հիմա հոս: Ո՞ւր կրնար երթալ ասկէ ետք: Հարցուցի ինքզինքիս արագօրէն ու լուռ կսկիծով մը շարունակեցի ճամբան մինչեւ պանդոկ:

Սեպուհին հետ արագ մը վերահաստատեցինք յաջորդ օրուան մեր հանդիպումին ժամը ու արագութեան նոյն թափով փութացի Ատոմին կանգ առած վայրը: Հոն չէր: Համբուս վրայ խուզարկեցի մօտակայ սրճարանը: Չկար: Քիչ առաջւան հարցումները կրկին խուժեցին միտքս մինչեւ իմ իջեւանս, մինչեւ քունի պահը, նաեւ յաջորդ օրը, մինչեւ յաջորդ օրուան յետմիջօրէն, երբ գրասենեակի կիսկատար գործերուս կէտին կանգ առի եւ ուղղուեցայ դէպի Քարլթոն: Սպասման սրահին մէջ ստիպուեցայ գրեթէ կէս ժամ օտար հրատարակութիւններ թերթատել, մինչեւ որ հետաձայնային լուր մը հազարդուեցաւ ինծի, թէ կիպրացի մեր հիւրը յարգելի պատճառներով պիտի չկարենայ յարգել ժամադրութիւնը: Այդֆան՝ իր ու իմ կողմէ, թէեւ տեսակ մը ցաւ պատորեց արիւնս: Անգլիական կրթութիւն ստացած էր Սեպուհ ու անբարեկիրք մէկը չէր երեւեր: Չէ՞ր կրնար, ուրեմն, կ'ըսէի իւրովի, որ աւելի առաջ կապուէր հետս: Չէ՞ր կրնար: Գործերս անկատար ձգելու պատճառիս մէջ կար հետը նոր տեղ մը այցելելու եւ հոգիին հրճուանք մը աւելի պայթեցնելու միտքը, մինչ ինք

անուղղակի նամբաներով յարգելի պատճառներու տարտամ լուրով մը մոխիրի կը վերածէր այնքան բուխ տրամադրութիւնս: Այդ եղանակով կը փորձէր վրէժ լուծել արդեօք Ատոմէն, անոր հետ նոր բախում մը ունենալու հաւանականութեանէ՞ն խոյս կու տար արդեօք, չեմ գիտեր, թերեւս...

Վերադարձիս անծանօթ ուժ մը դրդեց գիւս, որ ինծի մնացած միւս վայրկեանները յատկացնեմ իր դիմաց պահ մը Ատոմը քարացուցած ցուցահանդէսին: Այդ մղումով անմիջապէս վերադարձայ գրասենեակս, բացի մէկ անկիւնը նետուած փրանսատառ մեծ օրաթերթին երէկուան համարը ու արագ աչք մը նետեցի այդ մասին լոյս ընծայուած գրութեան վրայ, բայց, թող խոստովանանք ըլլայ, ընթերցումը այնքան մեծ հետաքրքրութիւն չյուզեց մէջս: Թերթը կը տեղեկագրէր, որ նկարիչը հայ մըն է, Հայկ Ռիւրեան, կու գայ բուրգերու երկրէն, ուր իր ապրած եօթանասուն տարիներուն կէսէն աւելին յատկացուցած էր տեղւոյն արուեստից վարժարանին, եւ Վիբանանի կրթական նախարարութիւնը, առ ի գնահատութիւն արարական մշակոյթին ընծայած անոր բազմամեայ ծառայութեան, սիրայօժար տրամադրած էր իր ցուցասրահը վաստակաւոր արուեստագէտին անհատական անդրանիկ ցուցահանդէսին:

Կից փարփին սեմին կանգնած ծառայողին յանձնեցի ինքնաշարժս ու վայրկեան մը ճիշդ Ատոմին կանգնած տեղէն ներս արձակեցի աչքերս: Խոնուած բազմութեան պատճառով հեռուէն ոչինչ կրցայ կռահել: Խառնուեցայ դիտողներուն:

Մեծ եւ փոքր չափի պաստառներուն վրայ փոխ առ փոխ կը փողփողէին ու կ'ուրուանային բնութենէն վերցուած տեսարաններ, ձեռակերտ իրեր, նաեւ վայրեր՝ ծովանկար մը, կռկորդիլոս մը, խորտակուած կառք մը, ընդհատուած նամբայ մը, հողմածեծ ծաղիկ մը, կրկէսի մէջ բաժնուած առիւծ մը, սեւամորթ ու սպիտակամորթ սանձարձակ կիներ, ու խորփին, արծաթագօծ մեծ շրջանակի մը մէջ՝ սպիտակ ձի մը:

Տարօրինակ թուի թերեւս, բայց ըսեմ նորէն, որ կենդանական աշխարհին հետ ձին հղած է իմ միակ կապս, որ ծնունդ առաւ շատ վաղուց, Անդրանիկ փաշային ու իր ձիուն հանդէպ մօրս մատուցած ամէնօրեայ պաշտամունքէն: Փաշան հօրս կուռքն էր ու չէր յագեցնար անոր սխրագործութիւններուն մասին կարդացած ամէն մանրամասնութիւն ինծի ու հանդիպած բարեկամին պատմել: Իր յոգնած ձայնով նայիս կ'երգէր անոր նուիրած երգը ու մասնաւոր շեշտով մը կ'արտասանէր թշնամիներուն յիշատակութիւնը ընող մասը, ուր ի լուր անոր անունին, անոնք օձերու պէս պիտի սողային իրենց բոյնը: Կը յիշեմ, երբ իբրեւ բժշկական ուսանող գիւս դէպի Փա-

բիզ նամբու դրաւ, կարեւոր յորդորներուն կարգին չմոռցաւ նաեւ Փէր կաշէզ այցելելու յուզաբաբաւ պատուէրը: Գացի՝ ի հարկէ, տեսայ, ու դողահար շրթներով համբուրեցի յարձակման պատրաստ փետայիններու առջեւէն լեռն ի վեր սլացող ձիաւոր հսկան, եւ նոյն օրը նամակի մը մէջ նկարագրեցի այս բոլորը, մանրամասնօրէն, ու զրկեցի անմիջապէս, բայց անիկա բախտ չունեցաւ բացուելու: Հա՛յր...

Յիշողութեանս մէջ տարիներու մշուշներէն տակաւ առ տակաւ ազատելով փաշային ձին՝ առաջացայ դէպի Բիւրեանի նկարը: Անոր դիմաց կանգնած ու աշխուժ տպաւորութիւններ փոխանակող երիտասարդ երիտասարդուհիներու խումբը պատճառ եղաւ սակայն, որ առաջին վայրկեաններուն շատ մօտիկէն չկարենամ ընկալել անոր կենդանութիւն տուող գոյներուն ու ձեւերուն մանրամասնութիւնները: Անցայ միւսներուն ու ուշի-ուշով գնեցի բոլորը, բայց աչքս եկաւ ու կրկին կանգ առաւ ձիուն վրայ: Ետին գորշութիւն մը ձգած՝ սեւաթոյր ամպերուն մէջէն կ'արշաւէր, անիկա հետու հորիզոնին փողփողող լոյսի շերտի մը ուղղութեամբ ու այնչո՞ք իր բաշերուն հետ կարծես հովը երգ մը կ'արձակէր միջոցին մէջ: Ինձի պէս ուրիշներ եւս իրենց ուշադրութիւնը կենդանացած էին սրաթոխ ձիուն անվախճան ընթացքին վրայ: Այդ տպաւորութեան տակ յանկարծ տարօրինակ մտածում մը այցելեց ինձի: Գնել եւ հօրս յիշատակին պահել պատտաւր: Մօտեցայ աւելի ու անկիւնը կարդացի մանրատառ գիրը՝ «Ծախուած»: Քրտինք մը ողողեց գիւ: Ո՞ր յիմարը այդքան փութկոտ եղած էր արդեօք, ո՞ր յիմարը, ո՞ր, ո՞ր յիմարը...

Մօտեցայ, սեղմեցի նկարիչին դողողչուն ձեռքը ու գլխիկոր ելայ դուրս: Ոտներս կը կթոտէին ու անոնց դողը չափով մը զսպելէ ետք միայն համարձակեցայ անցնիլ դեկին առջեւ: Խունապահար ուղղուեցայ դէպի Աֆաուի, ուր, ըստ իր բացատրութեան, ծովուն նայող անշուք տան մը երկրորդ յարկի մէկ սենեակին մէջ կը բնակէր Ատոմ: Հարկ չեղաւ երկար փնտտումի: Երկրորդ զարկիս՝ բացուեցաւ դուռը:

- Ո՞ր է Սեպուհը:
- Ձեմ գիտեր: Լուր ձգեր է, որ յարգելի պատճառներով պիտի չկարենայ այսօր ընկերանալ մեզի:
- Հը,— ըսաւ,— ուրեմն պիտի չկարենայ,— հը,— կրկնեց մըմունջը գլուխը օրօրուելէն ու օրօրուելէն նեղեց դրան կից պատէն առկախ վարագոյրը, երեցաւ հայրենական շիշ մը բռնեակով ու լեցուց բաժակները:
- Օ՞,— բացազանչեցի,— այս ի՞նչ շոայութիւն:
- Նուէր է,— ըսաւ,— կը պահէի լաւ օրուան մը հա-

մար: Մեղաւորը ես չեմ, եթէ օրը բոլոր առումներով լաւ չեղաւ: Կեանաց:

Տունի շատ չէր նմաներ Ատոմին բնակած սենեակը, քարայր մը՝ գիրքերու եւ թերթերու, որոնց ճնշումին տակ հագիւ շունչ կ'առնէին հնամաշ սեղանը, կիսաբաց անկողիներ ու անկողիներն մօտ գետեղաւած տախտակէ աթոռը: Ձախակողմեան պատին փակած գրադարանը իր կարգին կը տփար գիրքերու տակ, իսկ միւս պատերուն տեղ-տեղ ամրացուած էին նկարներ ու փոքր չափի պաստառներու վերարտադրութիւններ:

— Անախորժ բա՞ն մը պատահած է քեզի,— հարցուցի դէմքին գունաթափութեան ակնարկելով:

— Ոչ:

— Տխուր կ'երեւիս:

— Գիտես ինչ, Պարոյր,— սկսաւ ցաւագին շեշտով մը,— վերջերս տարօրինակ հոգեվիճակի մը մատնուած եմ ու բրտութիւնը դարձած է բնաւորութեանս մայր գիծը՝ Սեպուհի պէս տղոց հանդէպ մա՛նաւանդ: Սեպուհի՞ն...: Դուն չես գիտեր, թէ դեռ տարի մը առաջ ան ի՞նչ եռանդով գովքը կը հիւսէր գինձ ու իր պարագաները, նաև արեանկիցներէն զգալի հատուած մը հիւրընկալած երկրին, որմէ կը հրաժարի այսօր, հոն կուտակած դրամին վստահած անշուշտ: Հարագատ հօրաբնոցս թռն է Սեպուհ, բայց ազգականէ մը աւելի կը թուէր ինծի, խաղաղութեան տարիներուն հոս պտոյտի եկած ասեռն վայրկեան մը չէինք կորսնցնէր առանց իրարու, տարբեր տղու մը տպաւորութիւնը կը ձգէր, ուրիշներուն հոգի տուող հոգի մը, այլ հիմա, ափաղաղը հագիւ սկսած իր կանչին, վտանգի գօտիին մէջ ձգած ամէն ոք ու ամէն ինչ՝ կ'երթայ ուրիշ աշխարհ մը, ուրկէ, տարակոյս չկայ, կրնայ վաղը նոյն դիրքութեամբ բռնել տարբեր հորիզոնի մը ուղղութիւնը՝ հիւրի նոյն բնաւորութեամբ: Հիւր, ամէն տեղ հիւր եմք, հիւրի պէս՝ պիտի ըսէի, տեսակ մը ամերիկացիներ, գուրկ՝ օճախի մը կամ կտոր մը հողի կապուելու արարչական մղումներէն:

Ատոմ գիտէր, որ ես այդպէս չէի մտածեր, գիտէր, որ ես կը մերժեմ որեւէ կաշկանդում ու կողմ եմ լիակատար ազատութեան: Դեռ քիչ առաջ այդ մասին հաղորդած էի իմ կարծիքս: Սեպուհ չէր ուզեր այլեւս կիպրոսի մէջ շարունակել իր կեանքը եւ Սեպուհ ազատ էր, եւ ուրեմն վերջ՝ ինծի համար:

— Ով գիտէ,— ըսաւ,— թերեւս ո՛չ ինք եւ ոչ այլ ոեւէ մէկը մեղաւոր է հոս: Կը պատահի, պիտի պատահին նման խնդումներ: Սփիւռք է ասոր անունը: Գիտե՞ս ինչ է Սփիւռքը:

— Մեր իրականութեան անունն է, ի՛նչ է,— ըսի վիրաւոր:

— Տարտղում:

Աւելի խոր նայեցայ աչքերուն:

— Տարանջատում:

Կախեցի գլուխս:

— Տարբալուծում:

— Զի՞ն,— նշացի մեկէն:

— Ի՞նչ ձի,— հարցուց աչքերը լայն բացած:

Պատմեցի կէս գիշերէն ետք կրթական նախարարութեան ցուցասրահին դիմաց գինեգ լոտարի ընկալուս պարագան, Սեպուհը պանդոկ տարած պահուս: Իր հետքը գտնելու անպարանքս ապա, ապա՝ այսօրուան փորձառութիւններս, ցուցահանդէրը, այցելութիւնս, ձիւն տէր կանգնելու անկարելիութենէն բխած կսկիծս:

— Այդքան իրար անցնելու պէտք չկայ,— բսաւ գրեթէ անտարբեր,— օր մը կրնաս նուէր ստանալ գայն:

— Ինչպէ՞ս:

Հանդարտօրէն էլաւ ոտքի եւ ճախակողմեան պատին մատնանշեց պարզ մատիտով թեթեւօրէն գծուած շրջանակը, վրան՝ մեծկակ կեռ մը:

— Զի՞ն,— նշացի նորէն:

— Նայն ինքը:

— Ծերուկին լուսագոյն կտարը կը թուէր, ինչպէ՞ս բախտ եղաւ քեզի:

— Դիպումածով: Առաջին այցելուն էի:

— Կէս գիշերէն ե՞տք,— հարցուցի գուարթ:

— Ոչ, ցերեկը, յետմիջօրէին, օդակայանին մէջ Սեպուհը դիմաւորելու երթալէ առաջ:

Նշանակուած գինը ծանօթ էր ինծի, շատ էր, եօքը հագար: Զարմացայ նման գումար մը ընդամէնը նկարի մը յատկացնելու իր յանդգնութեան վրայ: Յայտնեցի գարմանքս: Քմծիծաղ մը ուրուացաւ դէմքին: Խնդալով նշեց աղբիւրը: Նոր արձակած էին գինեգ ուսուցչական պաշտօնէն ու թողականները բարի եղած էին անցնող տարիներէն իր հաշուոյն պահ դրուած գումարը միանուագ փոխանցել իրեն: Աւելիի քահախով մը յայտնեց իր երախտագիտութիւնը «ուսուցիչներու ուխտեալ թշնամիներուն»:

— Երեւի դուն ալ ինծի պէս ձի շատ կը սիրես:

— Շա՛տ: Ա՛յն օրէն ի վեր մանաւանդ, երբ ձերմակածին խառնուեցաւ կեանքիս: Կը յիշե՞ս ձերմակածին:

— Աղօտ պատկեր մը կայ մտքիս:

Ատոմ պատմեց, որ այդ ապրումը իր մէջ բռնկած է դպրոցական իրենց անշուք յարկին տակ, պատմութեան ուսուցիչ պարոն Արամի յափշտակութեան մէկ պահուն, պարսից արքայից արքայ Շապուհի եւ հայոց Մուշեղ Մամիկոնեան

սպարապետին փոխյարաբերութիւններէն մէկը դրուագած պահուն:

Թարմացաւ յիշողութիւնս:

Յաղթանակի մը առիթով՝ հայ մախարարներու եւ ազատներու կիներում հանդէպ տեսակ-տեսակ փոքրագութիւններ դուրս տուած էր Շապուհ, մինչ, ընդհակառակն, իր յաղթական գրոհներուն մէկուն ընթացքին գերեվարած անոր կանանոցն ու տիկնանց տիկիներ Մուշեղ ես իրեն՝ Հայաստանի սահմաններէն կորակոյր խոյս տուած Շապուհին ղրկած էր, փոքրագութնէն մինչեւ երախտագիտութիւն յայտնելու մակարդակի մը բարձրացնելով անոր անձնաւորութիւնը: Ըստ Ատոմի, պատմութեան իրենց ուսուցիչը քաջ գիտէր, որ փոխվրէժը անծանօթ ապրում մը չէ եղած Մամիկոնեան սպարապետին համար, գիտէր, որ ան վրիժառութեան նոյն աղբիւրէն ուժ առած յանախ ջարդեր տուած է պարսից զօրքին, տարած բազում յաղթանակներ ու Շապուհի կողմէ մորթագերծ եղած հօրը հոգիին խաղաղութեան համար արքայից արքային բանակներէն հարիւրաւոր անձեր մորթագերծ ըրած է, գիտէր...

— Բայց, — կ'ըսէր Ատոմ, — այդ բոլորին մօտէն թռուցիկ ակնարկներով կ'անցնէր պատմութեան մեր ուսուցիչը, սահմանուած ժամանակին մեծ մասը կը յատկացնէր այդ բացառիկ միջադէպին ու հաւատքի, համոզումի, եռանդի ու հպարտութեան հնոցի մը կը վերածուէր հոգին, մեր հայեացքներուն առջեւ կը կերպարանափոխուէր բոլորովին, երբ կը սկսէր նկարագրել Մուշեղին ու սպիտակ իր ձիուն քանդակներով զարդարել տուած Շապուհի գիւնիին բաժակը եւ անոր միւս երեսին փորագրել տուած երախտագիտական պտուղովը. «Ճերմակածին գինի արբցէ»:

— Այո, — ըսի բուխ տրամագրութեամբ մը, — այո՛, յիշեցի՝ «Ճերմակածին գինի արբցէ»:

Ի դէպ, չե՞ս կարծեր, Պարոյր, որ Շապուհի կանանոցն ու տիկնանց տիկիներ անարատ պահած եւ ապա ազատ արձակած Մուշեղի այս վերաբերումը առհաւական գիծի մը ժայթքումն է: Ձե՞ս կարծեր:

— Ով գիտէ, — ըսի, — կրնայ ըլլալ:

— Ինչպէս թէ ով գիտէ, ամէ՛նքը գիտեն, նոյնիսկ երգը այդ մասին կը խօսի, հազար անգամ լսած երգերէդ մէկը, — ըսաւ ու արտասանելու պէս սկսաւ երգել. «Մի վախեճար, հանգիստ եղիր, բաջի ջան, կանանց երբեք ձեռք տալու չէ վրիժառու քաջ փետան»:

— Այսպէս է, — շարունակեց, — Մուշեղի ատրպատականեան օրերէն մինչեւ համաստրի վարդանին օրը, բայց

մագրիկ ցեղին եւ անոր ոճրագործները հովանաւորոց ճիւղներէն եւ ո՛չ մէկը փոյթ քրաւ ազնուութիւնը զնահատոյց ազնիւ յիշատակ մը ձգել իր հոիւն: Պատմութեան մէջ եզակի է թերեւս Շապուհի բաժակը, գոր աբխան մէկ անգամ միայն չբարձրացուց, գայն կը բարձրացնէր ի պատիւ հայոց սպարապետին, իր սարքած բոլոր խննոյքներուն ատեն: Իմ հոգիէս երբեք չջնջուեցաւ պարոն Արաւիւն նկարագրած այդ պատկերը, ընդհակառակն, անոյ տարիքիս հետ մէջս աւելի խոր արմատներ արձակեց անիկա:

— Այդ տպաւորութիւնը դեր մը ունեցա՞ւ Բիւրեանի ճիւղ գնելու փութկոտութեանդ մէջ, — հարցուցի:

— Թերեւս, — ըսաւ, — բայց ձերմակաձին առանձինն չմնաց իմ համարումիս մէջ, ժամանակին հետ անոր վրայ եկան եւ աւելցան ուրիշներ:

— Առաջինը, հաւանաբար, Սասունցի Դաւիթի Քուրկիկ Ջալալին:

— Եւ ուրիշ Քուրկիկ Ջալալիներ, մեր ժամանակներէն, ձերմակաձինն պէս համարեա՞ր բոլորն ալ սպիտակ, Մուրատի սպիտակ ձին, Զեմլեակի սպիտակ ձին, Գալէի սպիտակ ձին, որոնք կարծես դեռ կը սուրան ու կը վրնջեն հոգիիս հեռաւոր լեռնալանջերուն ու ծործորներուն խորերը, առանձնութեանս վայրկեաններուն թէ բազմութիւններու ներկայութեան: Աչքերուս դէմ ես անաղօտ պատկերներուս պէս կը պահեմ մտնօրինակ անհամար երեսոյթներ, առաջինը՝ ֆետայիներու այն փառաւոր այրուձին եւ անոր նամբայ բացող վեհապանձ սպիտակը, երկրորդը...

— Իսկ Անդրանիկ փաշայի՞ ձին, — ընդհատեցի զինք ու փութով մը նշեցի անոր հանդէպ ունեցած համարումիս ահը, որ տարբեր չէր ձերմակաձինն հանդէպ իր համարումը բարբոս պահող յիշողութենէն:

Լուռ նայեցաւ աչքերուս: Տարուրերեց գլուխը: Հասաչեց:

— Փաշան եւ իր ձին մտոցար, — շարունակեցի վրդոված:

— Ո՛չ, չմտոցայ, — ըսաւ խիստ, — պարզապէս չուզեցի յիշել: Հօրդ, մեռած ուրիշ ազնիւ մարդոց ոգին կամ ապրող հազարաւորներէն ոեւէ մէկուն զգացումը վիրաւորած չեմ ըլլար կարծեմ, ոչ, վստահօրէն չեմ ըլլար, եթէ ըսեմ, որ հերոսութեան արդար ու բազում պսակներով գարդարուած փաշան իմ հերոսս չէ, չէ եղած նոյնիսկ այն ատեն, երբ իբրեւ արծիւ կը սաւառնէր լեռ ու ձոր: Իմ հերոսս դժոխային մեքենաներ լարող Քրիստափորը եղած է, Հրայր Դժոխքը եղած է, դժոխներէն չերկնցող Բարզէն Սիւնին: Իմ հերոսներս եղած

են փաշային ուսուցիչները, գինակիցները, գինուորները՝ Ազ-
բիւր Սերոբը, Գէորգ Չաուշը, Գալէն, միւսները՝ Մակարը,
Քեռին, Մուրատը, արեան լուսապսակով մը յաւերժութեան
անցած յաւերժափառ ֆաջերը՝ Դաշնակցական ինչոն, Փալա-
պէի կարապետը, Սէյտո Պօղոսը: Կրնաս շարունակել եւ
ստոնց վրայ արեւցնել ուրիշ վիշապաֆաղներ, բայց երբեք իր
անունը:

— Բայց փաշային հանդէպ շատ խիստ չէ՞ այս դատաւ-
տանը,— բողոքեցի ուժգին:

— Կրնաս իմ մեղքերէս մէկը համարել ատիկա, եւ՛ այդ-
քան: Ես կը սիրեմ միակտուր մարդերը, պարզ անհատներ ըլ-
լան անոնք թէ հերոսներ, միակտու՛ր մարդերը: Պատանու-
թեան շրջանին օր մը քիթոնիկ-փողկապով նկարուած մէկ
լուսանկարը տեսայ ու զգացի...

Կանգ առաւ: Թաթահարեց գլուխը: Սրբեց ֆրոնաթոք
նակատը...

— Ու զգացիր,— հետապնդեցի զինք:

— Չեմ գիտեր: Դժուար է բացատրել: Ու զգացի իր
բնաւորութեան զիծերուն հանդէպ Ազբիւր Սերոբի գայրոյթին
խորութիւնը ու գայրոյթին հեռարձակ նշմարութիւնը:

Ըսածը անթափանց մնաց ինձի: Աւելին լսել ալ չուզեցի,
այլ այդ մթնոլորտէն վայրկեան առաջ դուրս գալու մտքով յա-
րեցի:

— Ե՞րբ պիտի տուն բերես ձեռք:

— Յուցահանդէսին փակման օրը, անշուշտ, մէկ շաբա-
թէն: Առայժմ անիկա կ'օրօրէ գիս լուսանկարչական իր պատ-
նէնով:

— Մօ՞տդ է,— հետաքրքրուեցայ ժպտուն:

Ելաւ աթոռէն, մօտեցաւ անկողինին, խառնեց աջ կողմը
դիզուած թերթ ու գիրքերը, անջատեց տետրակ մը ու՝ «առ»
ըսաւ:

Առի: Յայտագիրն էր, ինքն էր, ամբողջ էջի մը վրայ:
ձի՛ն...: Երեւակայութիւնս փոխադրուեցաւ իր բնագիրին մօտ
ու խռովակոծ մթնոլորտի մը մէջ պատկերացուցի այդ հիւ-
նալի ոգին, որ թելաւորի մը պէս իրանն ու ոտները իրարու
միացուցած՝ կը սուրար երկինքին մէջ, անծանօթ աշխարհի
մը կարծես յայտնութիւնը ընելու պապակէն հրահրուած, լու-
սեղէն զիծ մը ձգելով ետին...

— Առաջ կը ճանչնայի՞ր նկարիչը:

— Տարտամ տեղեկութիւններ միայն ունէի իր մասին,
բայց մէկ ակնարկը բաւեց, որ ճանչնամ հոգին: Արդարեւ, իր
հալուժաշ մարմինին ու տառապած ակնարկին դիմաց դժ-
ւար չեղաւ կռահել ինձի իր ներքին անձին ազնուական տա-

ընդհատ: Յետոյ՝ անկարելի է անտարբեր մնալ իր առաջին ցուցահանդէսը կեանքի վերջալոյսին տալու խորհուրդին դիմաց:

— Խորհուրդ: Ա՞յդ արարքին մէջ,— գարմացայ ես:

— Ինչո՞ւ չէ: Պէտք է այդպէս կարծել, գոնէ ես այդպէս կը կարծեմ, գուցէ ամուր հասար, որ մարդոց կեանքէն առաւելագոյն չափով մը յարգանքի արժանի կը համարեմ երկու պահ միայն, անոնց յայտնութեան պահը եւ հրածեշտի պահը, յախուռն ծլարձակումը այսինքն եւ խռնական բերքահաւաքը: Զնկատեցի՞ր: Հայկ Բիւրեանի բոլոր գործերը եւ մասնաւորաբար ձին կը կրէին կեանքին հրածեշտ տուող մարդու մը գրոշմը:

Չէի նկատած, բայց իր տեսութիւնը անտարբեր չձգեց գիտ: Կրկին անգամ պատկերացուցի նկարիչն ու նկարը ու զգացի, որ Ատոմին վարկածը աւելի մեծ հնչեղութեամբ մը կ'արձագանգէ սրտիս: Այդ կտաւին առջեւ նկարիչը կարծես իրեն բան չէր ձգած, հոգիին ընդերքէն զուրս բերած էր գոյներու, գիծերու, տեսիլքի ու նախրանքի բոլոր սսկիները ու շռայլած անոր:

— Ես այն համոզումը ունիմ,— ըսաւ Ատոմ կարն լուս-թենէ մը յետոյ,— որ ի դէմս Հայկ Բիւրեանի կերտած ձիուն, պիտի տեսնեմ բոլոր ձիերը, ու պիտի վարգեմ անոնց հետ, ու պիտի վրնջեմ անոնց հետ, պիտի ծառանամ, պիտի խոյանամ անոնց հետ, պիտի մխրճուիմ երազային աշխարհներու մէջ, համբուրեմ հետեւերը, խուսկ ծխեմ ձիաւորներուն...

— Վերջացուցի՞ր:

— «Սրաթռիչ երիվար, նպատակս տկարութիւն չի նանչնար»,— ըսաւ խրոխտ ձայնով,— «Կը դռփեն, կը դռփեն, կը դռփեն» ըսաւ ստէրը գետին գարնելէն,— «Ձի իմ, ես ծարաւ եմ Հայաստանով»,— ըսաւ ու կրկնեց,— ես ծարաւ եմ Հայաստանով, ես ծարաւ եմ Հայաստանով, ես ծարաւ եմ...

— Հայաստանով,— լրացուցի ինքս:

Կանգ առաւ: Խմեց հայրենական խմիչքին վերջին կաթիլը, գնաց դէպի ծովափայտաց պատուհանը, շոյեց ռեհանի թուփը, թարմացուց շնչառութիւնը, դարձաւ նորէն ինծի ու, շողարձակ փայլ մը դէմքին՝ հարցուց:

— Ձի՞ կրնար ըլլալ, որ նկարիչ Բիւրեանի յղացումին մէջ այս բոլորը ազդու դեր մը ունեցած ըլլան:

Լռեցի:

Ատոմ գիտէր, որ ենթադրութիւններու աշխարհին մէջ մխրճուելու շատ գլուխ չունիմ ես, ցնորքներով զբաղելու բնա՛ւ միտք չունիմ, բայց նորէն այդ կարուածներուն մէջ իր

ուղեղը չարչարկող խնդիրներուն կապակցաբար շարունակ
հարցումներ կ'ընէր ինծի:

Պնդեց:

Պատասխան չունէի:

— Ի տես, իրեն կարծես նոր կեանք մը կ'առնէ կեանքը:

— ...

— Արշալոյս մը կը բռնկէ:

— ...

— Յաղթանակ մը կը դարբնուի:

— ...

— Դո՞ւն ինչու բան մը չես քսեր. ի՞նչ կը մտածես:

— Կ'ուզէի գիտնալ, թէ մեզմէ բաժնունելոյ ետք ո՞ւր
անցուցիր ժամանակդ:

— Դեռ հո՞ն եմք, բայց քն՛ը գիտցած տեղդ:

Բացատրեց, որ գլխու պտոյտը քիչ մը քեքեւնալէն յետոյ,
չէր կրցած անկողինին մէջ մնալ ու ռզելորութեան յոր-
ձանք մը ուզակալի ցուցասրահին առջեւ նետած էր զինք:

— Կ'ուզե՞ս միասին հոն երթանք հիմա:

— Ո՛չ, — ըսի չոր:

— Յոգնեցա՞ր:

— Ուրիշ խմիչք կը գտնուի՞ մօտդ:

Արագ մը մտաւ դրան մօտ բացուող խուցը, վերադար-
ձաւ ակնթարթային նոյն արագութեամբ, լեցուց իմ առջեւ
դրած նոր գաւաթը լիբանանեան ածան գինիով, մէկ կողմ
հրեց իրը, ձախ ձեռքով առաւ յայտագիրը սեղանէն, բացաւ
ձիւն յատկացուած էջը, այ ձեռքը հեղ մը տարաւ քունքերուն
ու երկար ատեն հոգիին այֆերուն խլրտացող գիւտի մը յայտ-
նութիւնը յանկարծ ընող մէկու մը խանդով սկսաւ նորէն խօ-
սիլ թիւրեանի կերտած ձիւն մասին, որուն ետեւէն, ըստ
իրեն, տարաշխարհիկ ծաղիկներ զգլխիչ բոյրեր կ'արձակէին,
թռչուններ կը ծլււրային, կը խայտար ողջ բնութիւնը:

Ատով յաճախ ապշութեան մատնած էր զիս, բայց երբեք
այս աստիճան: Գործէն արձակուած մարդ, ատեն մը կեանքը
բաշխելու իր միակ միջոցը ամբողջութեամբ շոյալած էր
պաստառի մը ու, անոր շուրջ հիւսած ցնորքներու աշխարհին
մէջ արձակած հոգին՝ կը ճախրէր հորիզոնէ հորիզոն...

Մտիկ կ'ընէի զինք, նոյն ատեն երբեմն բացայայտօրէն
եւ մերթ գողունի կը քննէի տունը, անկիւնները, խորշումած
պատերը, գիրքերը, փոշիներուն ելեւէջները, տարտղնուած
թերթերը, անոր համընդհանուր քափքփածութիւնը ու այս
անգամ տեսակ մը խնդութեամբ կը լեցուէր սիրտս: Մերթ այն-
պէս կը թուէր ինծի, թէ որեւէ յարկի տակ այդքան ազատ բնա-
լիս չնչած:

— Վերջապէս տեսա՞ր տունս, գո՞հ ես հիմա,— ըսաւ խոնարհութեան վիրաւորած պատկերը երկրորդ անգամ ֆննուփեցնէ անցուցած պահուս,— ըսէ, գո՞հ ես հիմա,— կրկնեց հարցումը ու սկսաւ բարձրաձայն խնդալ, խնդալով կոտորտուիլ, արձակել անօրինակ քահ-քահներ, մարմինին խորերէն եկող ուժգին քափով մը:

Վախ մը սողոսկեցաւ արեանս մէջ: Անսպասելի հարուածներու կամ յուսաբեկութեանց գերագոյն պահուն պայթող նեարդային խնդուփ մը, որուն զուգահեռ՝ երեւակայութեանս մէջ կրկնուեցան շարժանկարի ժապաւէններուն վրայ իմ հանդիպած կարգ մը ցաւագին տեսարանները...

— Ինչո՞ւ այդպէս կը խնդաս,— հարցուցի երկչոտ:

— Ես կը զարմանամ, թէ դո՛ւն ինչու չես խնդար,— ըսաւ մէկէն լրջացած:

— Բայց ինչո՞ւ պիտի խնդամ, ի՞նչ պատճառով, որո՞ւ վրայ,— հարցուցի ջղային անապարանֆով մը:

— Ինչպէ՞ս թէ որո՞ւ: Ի՛մ վրաս:

— Նման պատճառ մը չունիմ:

— Քու վրայ:

— Նայիմք դեռ ուրիշ որո՞ւ,— քսի զսպուած գայրուջքով:

— Աշխարհի մեծ տառապողներուն արեկոծ հարցականներէն զուրկ ապրող մեր հոգիներուն վրայ:

— Ուրի՞շ:

— Այս տիեզերքին մէջ մեր աւելորդ ներկայութեան

վրայ:

— Ատո՞ւմ:

— Ըսէ:

— Ուրեկ՞ կը հանես այս բոլորը, ո՞վ կը ստիպէ քեզի նման հարցեր յուզել:

— Պարզ չէ՞ միթէ:

— Ո՛չ:

— Զի՛ն:

— Զի՞ն:

— Յայտնութիւնը:

Համրացայ-մնացի:

ՊԹՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ



ԱՐՄԷՆ ՇԵԿՈՅԵԱՆ

Բանաստեղծ և թարգմանիչ Արմեն Շեկոյան ծնած է 28 Մարտ 1952ին, Երևան:

1970ին կ'աւարտէ Երևանի Ռ. Աբրահամյան անուն շախմատի մանկավարժական ինժեների բանասիրական բաժանմանը: 1973ին կը պաշտօնավարէ Հոկտեմբերեանի չրջանի Լեւոնդի սովետի միջնակարգ դպրոցին մէջ՝ իբրև շախմատի և գրականութեան ուսուցիչ: Ձիտու տրական պարտադիր ծառայութեան ընթացքին, 1976ին մաս կը կազմէ «Ազգայն քննիչ» թերթին, իսկ 1977-83՝ «Միջին» և ապա «Երևանի խորհուրդ» թերթի գրական աշխատակցի: 1983-85 կը Հասնի Մարտիրոսի Մ. Կորգի անուն գրականութեան ինժեների գրական բարձրագոյն դասընթացքներու և:

Արմեն Շեկոյան պարզ հրատարակած է երկու թերթագրութիւն՝ «Ձեզ հետ միասին» (1979) և «Նօն» (1984):

1981ին, Հրատարակէ մէջ տեղի ունեցած Վ. Մաշակոյանի նուիրում բանաստեղծութեան ուսուցական փառասանի ընթացքին, կ'արժանանայ «Մայակովսկու» սրեր» մրցանակին:

Ա. Շեկոյանի բանաստեղծութիւններն ուսանող թարգմանուած են ռուսերէնի, ուկրաիներէնի, չեխերէնի և Լատուներէնի, իսկ ինք իր մասնակցութիւնը բերած է բանաստեղծական երկու ծաղկաբույսերու թարգմանական աշխատանքներու և:

Ա. ՇԵԿՈՅԵԱՆ

ԲԱԽՏ

(Ստեղծութիւնի պատկ)

1

Այս աստիճաններն այնպէս են շարել,
որ քայլ անելիս վերել չընայես:
Այդպէս գլուխկախ բարձրանում եմ ես
եւ դեռ չեմ տեսել երկինք ու արեւ:

Կոյր շարժում է: Հա: Այսպէս է հաստուած:
Ականջ չենք արել հրամաններին:
Բայց ես տեսել եմ ինձ նմաններին —
ամէն ոք սրտում ունի մի աստուած:

Սա մեր շարժումն է: Մերն է: Իմ ու քո
 յամառութիւնն է, որ հօնուում է դեռ
 այս համատարած երկնքի ներքոյ:

Դու ես շարժումը — Մարդ — կոյր արարած:
 Դու անվերջ գալիս, բարձրանում ես վեր,
 որ սայթափելով գահավիժես ցած:

2

Որ սայթափելով գահավիժես ցած,
 չըկարծես, թէ դա քո ժամն է վերջին:
 Դեռ թռիչք ունես: Եւ մահը դեռ չի
 եզրափակելու ցնծութիւն ու լաց:

Դու ես շարժումը — Մարդ — կոյր արարած:
 Եւ դու ես կրկին քո մահը հերքում:
 Դու ես շողշողում տիրամօր գրկում:
 Դու ես արարում լոյս համատարած:

Քեզ համոզելով՝ ինձ եմ համոզում:
 Ինձ փարատելով՝ փարատում եմ քեզ:
 Այս գրադմունքն ինձ գուցէ չի սագում,

եւ գուցէ ձեւն այս շատ է հընացած,
 սակայն ես պիտի պատմեմ, թէ ինչպէս
 այս նախորոշուած նանապարհն անցայ:

3

Այս նախորոշուած նանապարհն անցայ՝
 պաղ դիմակներէից ժրպիտ մուրալով:
 Եւ մեղրի նման անուշ ծորալով՝
 ներկան կաթում ու դառնում էր անցեալ:

Եւ իմ մարմինը՝ տաք ու ապահով,
 ինձ հագար ու մի ծակուծուկ տարաւ,
 մարմանդ տարածեց հիւսիս ու հարաւ
 իմ սէրը՝ կնքած կեանքով ու մահով:

Մուրացի, սակայն տօթ էր ու հեղձուկ...
 Բայց դուք չկարծէ՛ք, թէ ես եմ եղել
 իմ եղբոր համար եղբայր ու նեցուկ:

Մեր միջեւ ո՞վ այս սեւ պատը շարեց:
 Պատասխան չըկայ: Լուս եմք՝ ինչպէս ձուկ:
 Եւ սոնետացան ինձ էլ պաշարեց:

4

Եւ սոնետացան ինձ էլ պաշարեց:
 Ինձ էլ կը փակի իր պաղ թմբիրով:
 Եւ ես՝ կըլանուած ձեռի խնդիրով,
 էլ չեմ իմանայ, թէ պատն ով շարեց:

Ձեր կապանք է — կռկիկ մահարձան,
 բայց կապոտում եմ ես ինձ սոնետով,
 քանզի կապանքից փրկուելուց յետոյ
 ես կը հասկանամ զինն ազատութեան:

Աւելի ստոյգ ես բան չգիտեմ:
 Եւ դուք չգիտէ՛ք: Ոչ ոք չգիտի:
 Մեզ ո՞ւր է տանում այս բնթացքն անդէմ:

Մենակ եմ դարձեալ: Արդեօք ո՞վ պիտի
 դառնայ ինձ նամբի ընկեր ու վրկայ:
 Մենակ եմ դարձեալ, եւ ոչ ոք չըկայ:

5

Մենակ եմ դարձեալ: Եւ ոչ ոք չըկայ,
 որ արդարամիտ նայի վերելից:
 Ես կասկածում եմ հիմա: Երեւի
 յոգնել եմ արդէն իմ հոգուց տըկար:

Մենակ եմ դարձեալ: Եւ ես էլ մէկն եմ
 ճշգրիտ ու նապուկ խուսափողներից:
 Էլ ես չեմ կարող կիսատ թողնել ինձ
 եւ արդարամիտ մէկի հետ մեկնել:

Առաւօտների սրտուռ երամն ինձ
մնաս բարով էր ասում, բայց դարձեալ
կառչել եմ ահա այս հին տեղերից:

Մանկութիւն — մեծ ու միամիտ անցեալ,
ն՞ւր կորար: Յաւերժ մենակ մընացի:
Ոչ թշնամի կայ եւ ոչ դըրացի:

6

Ոչ թշնամի կայ եւ ոչ դըրացի:
Զրկայ մէկը, որ ինձ մի բան յուշի:
Այս աղիոգորմ լացը բայդուշի
ն՞վ պիտի իր ջինջ ձայնով խրլացնի:

Եւ ցուցամատը դանդաղ բացելով՝
ն՞վ պիտի ինձ իր հրաշքը ցոյց տայ:
Ո՞վ պիտի խամբած երագին գոյն տայ՝
թէկուզ ինձ այսպէս անվերջ խոցելով:

Թէկուզեւ այսպէս անվերջ խոցուելով՝
եւ կրկին մի օր լոյսաշխարհ գայի՝
առաւօտուայ դէմ կրկին բացուելով:

Ոչ թշնամի կայ եւ ոչ դըրացի
այստեղ, ուր մի օր սրտից խոցուելով՝
եւ ընկայ, սակայն կառչած մընացի:

7

Եւ ընկայ, սակայն կառչած մնացի
փոփոխուող օդից — մի գեղադիտակ:
Եւ հեռացել եմ երկինք ու յատակ:
Եւ դեռ ճօճուում եմ այսպէս ցանուցիր:

Մի քամի գար ու ինձ իսպառ ցըփնէր՝
որպէս ապագայ սիրոյ սերմացու:
Եւ ես՝ բօթափած կսկիծ ու հեղձուկ,
գուլարուած ձայնով մըջայի — Յ՛նոք

հանդիպում, դժուար ժամի ընկերներ,
մոռանա՞նք դարձեալ կապանք ու լրկամ
եւ հանենք սիրոյ մեր բարբերկներ:

Լուս ենք: Ձայն չըկայ: Եւ քամի չըկայ:
Եւ... գարմանք — ես կամ — ես դեռ չեմ
յոգնել
այս հայեացքներից՝ ողորկ ու չըկամ:

8

Այս հայեացքներից՝ ողորկ ու չըկամ,
բան չեմ հասկացել: Ձեմ նայել ես ինձ
նրանց աչքերով: Տոչորուող ես-ից
դեռ չեմ բարձրացել: Ինձնից դուրս—չըկամ:

Հպարտ անցնում եմ ես նրանց կողքով:
Ասել է՝ ես էլ դիմակ եմ մի պաղ:
Եւ չեմ արթնացել ես գունէ մի պահ:
Լոկ հիացել եմ իմ թեթեւ շողքով:

Այսպէս ձմրան մէջ տնօրէն ու մրսիք:
Այսպէս — առանց սէր ու առանց ձգտում:
Այսպէս ջնջել են ինձ ներսուղրսից:

Այսպէս իմ ձայնն է դեռ անկոչ ձգում՝
ֆոփարկելով ինձ ներսից ու դրսից:
Ընկել եմ ու էլ վերեւ չեմ ձգտում:

9

Ընկել եմ ու էլ վերեւ չեմ ձգտում:
Ամէն ինչ արդէն սուտ է եւ օտար:
Ինձ չհանդիպեց հաւատարմատարն
այն ամէնի, որ դեռ կայ ձեր սրտում:

Մինչ ես խօսում եմ ձեզ հետ այն մասին,
թէ ոնց մնացի վըտիտ ու կիսատ,

ինձ երեսացին մեղքերըս — մի սար,
որ կուտակել եմ ձեզ հետ միասին:

Այսպէս ձմրան մէջ տնօրէն ու մրսիք,
մինչեւ հասկանաս, թէ ուր ես հասելի,
մինչեւ որ մաքրես ինձ ներսուդրսից,

մինչեւ որ կրկին նայես զարմացած
եւ զարմանալով ցնծաս ու ասես.—
թոչում եմ ու էլ չեմ նայում ես ցած:

10

Թոչում եմ ու էլ չեմ նայում ես ցած,
ուր տարածուել է անցեալի փոշին:
Իմ նըմանակն է յայտնըում՝ դոչին
մի ներմակ ծագիկ — նըշան հարսանեաց:

Հիմա անհանգիստ այս հոգի վրայ
եւ այս տօնական երկնակամարում
մենք կանք եւ տօնը մերն ենք համարում,
եւ չենք դողդողում մեր կեանքի վրայ:

Կարճատեւ պահի ամէն մի գեղում
մեր մէջ թողնում է զնզուն արձագանգ:
Մենք հրմայուած ենք ու էլ չենք շեղում:

Մեր սիրտն է ներող: Մեր միտքն է նըկուն:
Եւ տօնը մերն է: Եւ այսօր մենք կանք:
Եւ լոյսն է ուժեղ: Եւ հոգն է ձրգում:

11

Եւ լոյսն է ուժեղ: Եւ հոգն է ձրգում:
Եւ արդէն հոգու պարապուրդ չըկայ:
Ես եմ իմ ցաւի ու սիրոյ վրկան:
Եւ ես իմ ցաւն ու իմ սէրն եմ երգում:

Աւելի ստոյգ ես բան չըզիտեմ:
 Եւ դուք չզիտէք: Ոչ ոք չզիտի:
 Պիտի ինձ ու ձեզ համոզեմ: Պիտի
 մի օր համոզուեմ, որ բան չըզիտեմ:

Հիմա անհանգիստ այս հողի վրայ
 եւ այս տօնական երկնակամարում
 իմ իմացածը դնում եմ գրքաւ

Եւ պարտութիւնըս իմն եմ համարում,
 քանզի ժպտում եմ ես իմաստնացած,
 եւ իմ հայեացքն է շողում զարմացած:

12

Եւ իմ հայեացքն է շողում զարմացած
 մօտեցող օրուայ ննչող ոսկու մէջ:
 Մենք, որ չենք մըտել դեռ մեր խօսքի մէջ,
 նայում ենք իրար խեղճ ու համբացած:

Նայում ու իրար ոչինչ չենք ասում:
 Մեր բառը դեռ չի ելել իր բրնձից:
 Մենք արթնացել ենք մեր վերջին քրնձից,
 սակայն նախքան ենք դեռ մեր երազում:

Սա թորչքն է մեր: Հոսանքն է գետի:
 Աւելի ստոյգ ես բան չզիտեմ:
 Եւ դուք չզիտէք: Ոչ ոք չզիտի:

Քանի դեռ ստոյգ չզիտեմ, պիտի
 եւրս մի անգամ դանդաղ պրտրտուեմ
 այն ամէնի շուրջ, որ անգիր գիտեմ:

13

Այն ամէնի շուրջ, որ անգիր գիտեմ,
 ես կամ — նայում եմ վար ու վերելից:
 Ես մի հերթական նայող եմ, եւ ինձ
 չի ահաբեկում անցողիկն արդէն:

Արեւը կրկին կեանք է աւանդում:
 Ես տրում եմ իր ասորուշաններին:
 Եւ ցայգալոյսի տաք նշաններն ինձ
 շարունակում են ու չեն աւարտում:

Սա մեր ներկան է: Մերն է: Իմ ու քո
 համբերութիւնն է, որ ճօճում է դեռ
 այս համատարած երկնքի ներքոյ:

Ո՞վ է տարածել իր քեթել ձեռքով
 այս փոփոխական հրաշքը մեր դէմ —
 յաւիտենական դրժոխք ու եղեմ:

14

Յաւիտենական դրժոխք ու եղեմ —
 փոփոխուող՝ ինչպէս մի գեղադիտակ:
 Ես հիմա կրկին մքսում եմ՝ մետակ
 շապիկով կանգնած քամիների դէմ:

Ու տերեւի պէս դողում եմ: Բայց ես
 գիտեմ, որ դժուար այս ժամն էլ կ'անցնի,
 եւ ծանօթ մի ձայն կը տեղեկացնի —
 ես առա՞ջ գրնամ, քէ՞ն ներում հայցեմ:

... Սպասում էի այսպէս կարկամած:
 Դողում էր ձեռքը, որ գիրն այս շարեց:
 Դողում էր ձեռքս, բայց կամաց-կամաց

այս փոփոխական երգն ինձ կաշառեց...
 Ընկած տեղիցս ելնեմ — ի՞նչ արած —
 այս աստիճաններն այսպէս են շարել:

15

Այս աստիճաններն այնպէս են շարել,
 որ սայթափելով գահավիժես ցած:
 Այս նախորոշուած նախապարհն անցայ,
 եւ սոնետացան ինձ էլ պաշարեց:

Մենակ եմ դարձեալ, եւ ոչ ոք չըկայ:
Ոչ թշնամի կայ եւ ոչ դրբացի:
Ես ընկայ, սակայն կառչած մընացի
այս հայեացքներից՝ ոգորկ ու չըկամ:

Ընկել եմ ու էլ վերեւ չեմ ձգտում:
Թռչում եմ ու էլ չեմ նայում ես ցած:
Եւ լոյսն է ուժեղ, եւ հողն է ձրգում,

եւ իմ հայեացքն է շողում՝ զարմացած
այն ամէնի շուրջ, որ անգիր գիտեմ —
յաւիտենական դրժոխք ու եղեմ:

ԱՐՄԷՆ ՇԵԿՈՅԵԱՆ

Գ. ԱԲԷԼԵԱՆ

ԱՆՆԱ ՀԱՐՍԸ



ԲԱԺԱՆՈՒՄԸ

Սկիզբը Գերբի մեկնու մը շատ նանր ազդեց բուրբին վրայ: Իր մեկնու – մին թողած վերջը, ոմանց համար, հետզհետէ սպիացաւ, բայց Աննայի և Օսանի համար, բնդհակատակն, աւելի խորացաւ:

Անտոն, կիւր, աղջիկները և փեսաները բնաւ առանձնութիւն զգալ չէին տար Աննային, կամ այդպէս կը կարծէին: Տուել միշտ լեցուն էր, ա՛յն-բան՝ որ երբեմն տնեցիք շփոթի կը մատնուէին, կը փնտուէին իրենց սան կամ բնտանիքին առանձնութիւնը:

Անտոն յանախ կու գար, Աննան և թուրիկը կ'սանկր և կը տանէր իրենց տունը: Աննա հոն կը մնար քանի մը օր, բայց շուտով անհամբեր կը դառնար, ծորը կը խեղդէր զինք: Հակառակ ծնողացը, մա՛նաւ տեղ կարագեւտ եղբոր թախանձանքներու, կ'ուզէր ի՛ր տունը վերադառնալ:

Կարոն արդէն աւարտած էր Տարտնի զոյճը և նկատուած կրթական ասպարէզի մէջ: Անտոնի միակ գաւակը, թիկնեղ, բանձրահասակ, զիւղին մէջ մատով ցոյց կու տային բուրբն ալ: Եսաւ մը մայրեր կ'երագէին իրենց աղջիկներէն մէկու ն փեսայացնել զինք: Գիւղին մէջ ամենաուսեայ անձն էր ան և Անտոնի այբին լոյսը:

Ոմանք յատուկ աշխատանք կը տանէին քահանայութեան սրեմը վրան անցընելու: Իր սրախն մօտ էր եկեղեցին, բայց կը տասամսէր: Տարբեր երազներ սուներ: Դեռ կ'ներեւակայէր երթալ և ուսու մը կատարելագործել, բայց

տարիկա Անտոնի սրտովը չէր կը վախնար, որ աւելի կատարելագործուած ուսուցիչ կրնար գաւկին ոտքը կտրել գիւղէն, իր կայուածնները որո՞ւ պիտի մնային: Կր նախնարէր, որ գաւակը գաւնար զիւ զին քահանան, թէ՛ աւելի կր յարգուէր եւ թէ չըջանը կ'օժտուէր զարդացած քահանայով մը, ինչ որ անհրաժեշտ բան մըն էր: Բողոքականները իրենց ուսեայ պատուելիներով կրնային վտանգի ենթարկել իրենց եկեղեցին:

Կարապետ խենթ կ'ըլլար քրոջը գաւկին՝ Երրճիկին համար: Կ'երկննար զհանին վրայ, մանչու կը կը նստեցնէր կուրծքին եւ ժամերով կը խաղցնէր գայն: Կր մանկանար անոր հետ: Երգեր կ'երգէր զեռ հազիւ մէկ ու կէս տարեկան մանչուկին համար, յեղափոխական երգեր, մա՛նաւանդ Գեորգ Զաւուչին նուիրուած երգեր:

Աննա, երբ չըջապատուէր իր հարազատներով, պահ մը կը մոռնար իր առանձնութիւնը: Բայց երբ առանձինն մնար, սիրտը կը սեղմուէր: Արդէն իր մէջ սաղմնաւորուող նոր հակը հետզհետէ իր գոյութիւնը աւելիով զգայի կր դարձնէր եւ ինք անօգնական կը զգար ինքզինք՝ ամուսինն բացակայուած թեւեր: Կեսուրը՝ Օսան, եւ տալը՝ Գարուն, շարունակ շուրջը կը գաւնային, կարելի եղածին չափ անոր հոգեկան տաղնապը մեղմելու համար: Մանչու կը ձեռքէ ձեռք կը խլէին: Աննա երբ քանի մը օրով ուշանար իր ծնողքին տունը, Օսան ամուսինը կը ճամբէր խնամիկնէ՞ր ըսելով:

— Այ մարդ, կարօտցանք թէ՛ տղեկին եւ թէ՛ այ մեր Աննային: Գնա՛ բեր զիրենք:

Հաննոն, կարծէք այդ խօսքին կը սպասէր. անմիջապէս շարին տունելով կը դիմէր խնամիկնէ՞ր, հարսն ու թուռիկը տուն կը բերէր, բնականարար վշտացնելով Անտոնը եւ, մա՛նաւանդ՝ կարապետը:



Քերորի մեկնումէն երկու ամիս ետք ստացան առաջին նամակը: Ողջատողը հասած էր Նիս Երբքի Լոնկ Այլէնա շրջանը: Եղբայրն ու ինք արդէն կ'աշխատէին: Ինք՝ օթէլի մը մէջ: Եղբոր զործը շատ որոշ չէր, կամ շիբցան հասկնալ, թէ ի՞նչ բան էր սքախ մարտէրը...: Հաննոն նամակը կարդալ տուած էր պատուելի Տիգրանին: Թէ՛ յու գու մով եւ թէ ու բախտ թեւած էր նամակի բովանդակութիւնը: Դարձին՝ ջանացած էր բովանդակութիւնը բացատրել անցիկներուն, բայց չէր յաջողած: Մտիպուած՝ տունով-տեղով գացած էին պատուելիներն, մարդը իրեն, կամ աւելի ճիշդը՝ պատուելիներուն յատուկ համբերութեամբ, երեք անգամ կարդացած էր նամակը: Թէ՛ յու գու տած եւ թէ ուրախացած էին: Քերոր կը շնչուէր, որ շատ հոգ տանին իր Աննային, մանչուկին, մա՛նաւանդ անոր, որ պիտի գար:

Քանի մը ամիս ետք, Աննա երկրորդ եւ վերջին անգամ ըլլալով պիտի մայրանար:

Իր փափաքն էր, որ տշտ անգամ աղջնակի մը ծնունդ տար: Աղջիկ գաւակը տարբեր հմայք ունէր: Օրական քանի մը անգամ պիտի սանարէր, մազերովը պոչիկ պիտի կապէր, անոր վրայ ամէն անգամ տարբեր գոյն ժապաւէն պիտի կապէր: Արդէն իսկ աւելցած շիրի կտորներէ փոքրիկ հազու ստոնք կը կարէր ու կը պատրաստէր իր «աղջնակին» համար: Ետտ կ'ուրախանար, երբ զիւղի կիները, մա՛նաւանդ տարեցները, մաղթէին, որ բարով ազատուէր՝ Աստուծով, եւ աղջնակ մը ունենար:

Օր մը, փայտահաւա ծրնոր իրենց եկած էր այցելի: Զուր խնդրեց Աննային: Գարուն տալը անմիջապէս ոտքի ցատկեց: Փայտահաւա զճգուն մնաց կարծէք: Պզինձէ թափն քառորդը միայն խմեց: Քիչ ետք, երբ Գարունը գուրս

զացած էր, փայտահատը դարձեալ ջուր ու գնդ, դժուհեւով, որ շատ թթու աչ — թուրքի — կերած էր այդ օր: Աննան, սիրայօժար, սաքի ելաւ եւ գնաց ջուր բերելու: Փայտահատ ձրճուս, ուշադրութեամբ գիտած էր Աննայի վէլը: Ապա, կամացուկ, Հաննոյին բան էր, որ դարձեալ մանչ թոռնիկ պիտի ունենար — նարբ աջ ու ճիւղ առաջ նետած էր: Հաննոն չուզեց հուսատալ փայտահատին դուշակութեանը: Բայց իսկապէս, քանի մը ամիս ետք, Աննա հարաւ ծնունդ տուաւ երկրորդ մանչուկին:

Ասոր ալ անունը Ամերիկայէն եկած էր: Նախքան երեխային ծնունդը, Աննային ամուսինն ու տաղըր, միասնաբար, նամակ գրած էին: Նամակին մէջ փափաք յայտնած էին, որ եթէ մանչ ծնէր, անունը ձուն կամ ձէլճա գնեն: Հաննոն, որ նամակը պատուելի Տեղբանին կարգացնել տուած էր, շատ բան չէր հասկցած: Վերջապէս իր արդար իրաւունքն էր, որ անունը տար թոռնիկի մը: Աւտոյին անգամ միջնակ տղուն փափաքին տեղի տուած էր: Այս անգամ կ'ուզէր, որ իր անունը տար՝ մանչ թոռնիկ աննայու պարագային: Աննա համաձայն էր, թէ պէտք է ուզէր Անդրանիկ անունով կոչել իր զուակը: այդ ձևով թէ՛ չօրը անունը տուած կ'ըլլար եւ թէ այդ օրերուն Հերոս Անդրանիկին անունը նորոգեալութիւն եղած էր: Ասանոյ երկրորդ պատասխանութեան վրայէն դեռ հասցի քանի մը ասորի անցած էր: Գէորդն ալ սիրելի անուն էր եւ արդէն առջինն էր այդ անունը կր կրէր, հոգ չէ թէ թարգմանուած ձևով:

Հաննոն երբ դուրս ելաւ պատուելին քովէն, անորտու թեան մասնը — ւած էր: Իր երկու զուակները, դարձեալ 25 տարի հետ, մանչուկին անունը կր կրէին: Հարկաւ, Ամերիկայի մէջ, անունը բան մը գիտէին, զարգացած մարդոց հետ կը նստէին: Պատուելին բացատրած էր, որ ձուն նաև Յովհաննէս կը նշանակէր, բայց Հաննոն թէ՛ չէր համոզուած եւ թէ չէր սիրած այդ անունը: Հաննոն Հաննո էր, իսկ ձունը ուրիշ բան էր: Տակաւին ուրիշ անարկութիւն մըն ալ ունէր, եթէ մանուկը ձուն կոչէին, փոտահարար խաղի տանն ընկերները ըսնա, այսինքն՝ չուն, պիտի կոչէին գինը, ինչ որ անբնական էր իրեն, Հաննոյին համար: Աւտոյ՝ համոզեց պարագաները, որ եթէ թոռնիկը մանչ ըլլար, պէտք էր ձէլճա կոչել զայն: Աննա հարաւ տեղի տուաւ, թէև այդ օտար անունը բնաւ սրտովը չէր:

Երբ երկրորդ թոռնիկը ծնաւ, դարձեալ մանչուկ էր: Աննա ուրախացաւ նախ պատուելուն համար, ապա զուակը զուակ էր, ձորճիկը եղբայր մը պիտի ունենար: Անտոնենք եւս ուրախացան, թէև անունը շատ չհաւանցան: Կարապետ քեռին բացատրեց, որ ձէլճա՝ Յակոբ կը նշանակէր: Ասոր, միւսին շափ, սիրեցին բոլորն ալ:



Աննային օրերը լեցուն էին, բայց ծանր, շատ ծանր կ'անցնէին անոնք: Որքա՞ն շաւ պիտի ըլլար, եթէ երբեք ամուսինը քովը ըլլար: Ընչդ է, որ անցնէն երբ պակաս չէին ձգեր եւ պէտք եղածէն աւելի կը գուրգուրային վրան, բայց ան կը դարար ամուսնոյն շուքին պակասը: Այդ մարդուն չուքը տուելն ներս, մեծ օրհնութիւն էր: Աւելի՛ն եթէ այրը քովը ըլլար, ազնուակին համար կարած հազուաանհրուս տիրուհին ալ կու գար, եւ կ'ուրախացնէր զինք...

Ամուսինը, սակայն, գալու մասին բնաւ իտեք չէր ընէր: Կը գրէր, որ գործը թէև շաւ էր, բայց այնքան ալ չահարեր չէր: Նաև գրած էր, որ եղբայրը չսթաք մարզէթնին մէջ կորսնցուցած էր եւ թէ ինք օգնած էր անոր: Տնեցիք բան չհասկցան այդ կորուստէն, բայց զգացին, որ շաւ բան մը չէ եղածը:

Աննա հարսին մաքին մէջ կամաց-կամաց սկսաւ խմորուիլ միտք մը, որ գրացի պատու մը փոխանցած էր իրեն, այդպէս՝ շաւ հարեւանցի կերպով:

կամաց-կամաց սկսաւ ինքզինք համոզել, որ լաւ ազոյն լուծու մը պիտի ըլլար իր Ամէրիկա երթալը: Ինչ կար որ, կ'երթար, ինքն ալ ամուսնոյն ձեռք կու տար, միասնաբար կ'աշխատէին եւ քանի մը տարիէն ետ կը գտնային: Գոնէ ազջնակին տարիքի տարրերու թիւնը շատ չէր ըլլար իր եղբայրներէն...

Երկար, շա՛տ երկար մտածեց այդ մասին: Կը շափէր-կը ձեւէր: Երբեմն նախամեծար կը գտնէր հոգ մնայն ու սպասելի, վերջապէս գիշերին բան չէր ծով կտրելը, այն ալ երկու փոքրիկներով: Յետոյ, ինքզինք կը համոզէր, որ նախընտրելի էր մէկ ամիս ծովու վրայ շարժարուիլ, երկանը շուքը գտնելու համար:

Օր մըն ալ բացու եցաւ ապուլը: Բացատրեց միտքը: Գարու նը անմիջապէս լացաւ, բացատրութիւնները իր սրտովը չէին: Ինչպէ՞ս պիտի գտնուէր այդ երկու անուշիկ ձագու կներէն եւ Աննա հարսէն: Տար կաթիլ արցունքը մէկէն կ'իջնէր աչքերէն: Այդ գիշեր շատ ատուապեցաւ Գարուն: Աննան աւելի ատուապեցաւ ի տես Գարունի վշտին: Բան մը իր մէջ, սակայն, կը համոզէր զինք, որ երթար ու միանար ամուսնոյն:

Հակառակ իր խոստումին, Գարուն չկրցաւ գաղտնապահ ըլլալ: մօրը յայտնեց հարսին միտքը: Օտան երկու օր բան չգորու բերանը: Հարսէն բաժնորէիլը մահ էր իրեն համար: Ետտ մը անկարելի բաններու հետ կրնար հաշտուիլ, բայց չէր կրնար բաժնուիլ հարսէն ու թոնիկներէն: Դեռ, ուրիշ մտափախութիւն մըն ալ կար. եթէ հարսը միանար գուհին, այլեւս վերջ, աղան չէր վերադառնար:

Աննան նախ չիմացաւ թէ ինչո՞ւ վշտացած էր կեսուրը: Երբ հասկցաւ իրողութիւնը, խոտք բացաւ անոր հետ: Խնդիրը իր սրտովը եւս չէր, բայց ներսէն միտք մը կը կրծէր զինք: Կ'ուզէր մեկնել...

Հակառակ այրած անդուհանքին՝ Օտան երկու օր ետք ինքզինք պտաւ: Երբ սկսաւ աւելի պաշարի նութեամբ մտածել, ինքզինք համոզեց, որ հարսին երթալը պէտք չէր արգիլել: Կրցաւ ամուսինը եւս համոզել: Հանձնու, որ իր գաւակներուն մեծնայուն հետ ինքզինք հանգստեան կոչելու մասին երազներ կը սնուցանէր, հիմա կը տեսնէր, որ սխալած էր: Յեղճացաւ, շա՛տ խեղճացաւ, բայց ի՞նչ կրնար ընել:

••

Անտոն, կինը, Կարապետ տղան եւ միւս վեց աղջիկներն ու անոնց ամուսինները շափազանց վշտացան: Անտոն, որ դեռ նոր մտանայ սկսած էր Աննայի փախուստին առթած վիշտը, ահա առիկ, նոր վերջի մը կուտանքը կը զգար սրտին մէջ: Աննիկին մայրը երեսը թթու եցուց օրերով եւ շարաթներով, դեռ նոր վերազանած էր աղջիկը, որ ահա առիկ կը մեկնէր: Գիտէր, որ այդ անտար երկիրը մեկնող ընտանիքները չէին վերադառնար: Տարբեր էր երիտասարդներու պարագան, որոնք կ'երթային եւ կը վերադառնային: Ընտանիքները չէին վերադառնար: Կարապետ եղբայրը չզիմացաւ ու լացաւ: Քոյրերը եւ քնոյրները շատ լեզու թափեցին, համոզելու համար Աննան, բայց անօգուտ:

••

Աննա, պատու էլի Տիգրանին ձեռքով նամակ մը գրել տուաւ ամուսնոյն, յայտնելու համար, որ չուտով ճամբայ պիտի ելլէր: Պատու էլին թուղթի մը վրայ, անդիւրեղնով գրեց, որ այդ մանկամարդ տիկինը լեզու չէր գիտեր, եւ թէ՛ փափաքելի էր օգնել իրեն: Նաեւ գրեց ամուսնոյն հասցէն վրան:

Այդ օրերուն վերջալի հարց չկար, բաւ էր ճամբու ծախս մը ապահովել եւ

Յոթ այլևս աներևութացաւ Աննա, գիւղացիները պահ ժըն ալ կանգ առին ու դիտեցին այն ճամբան, ուրկէ անցած էին բոլոր մեկնողները դէպի Հեռաւոր քաղաքներ ու երկիրներ... Ապա, ծանր քայլերով, ցրուեցան իրենց բան ու գործին:

Հակառակ բլուրին, Աննա կը շարունակէր եւս—եւս դառնալով նայիլ, ա՛յն աղօս յոյսով, որ իր Հարազատներին մէկն ու մէկը երևի էր: Իր նախագագացու մը չէր խորած դինք: Քիչ ետք բլուրին վրայ յայտնուեցաւ իր կարօ հղբայրը, որ ետանդով կը ճօճէր մեծ թաշկինակ մը: Աննան լացաւ ու լացաւ... Իր մէկ հատիկ հղբայրն էր, բոլորին աչքին լոյսը, շրջանին ամենազարգացածներէն մին, որ դիւզ կը մնար. միւս զարգացածները դիւզ չէին վերադառնար ընդհանրապէս... Երկար, շա՛տ երկար մնաց կարօն բլուրին վրայ, մինչև որ ըորինները վերածուեցան մէկական կէտի...:

Կէսօրէ ետք տեսնուեցաւ Անտիօքը: Երջանի մեծագոյն քաղաքն բլլալու համար ու ունէր անիկա: Քնսապցիներու ն եւ ճէպլիմու սապցիներու ն համար կարեւոր կեդրոն մը, որ իր սիրայով եւ շուկայով մեծ հռչակի տիրացած էր: Խորքին մէջ, սակայն, Կզեպատարայի եւ Մարկոս Անտոնիոսի սիրաբանութեան վայրը եւ սէլեւիկան մեծ պետութեան երբեմնի փառքը հանդիսացած մայրաքաղաքը վերածուած էր սամանեան համեստ քաղաքի մը: Բայց եւ այնպէս, քնսապցիներուն «Քաղաքն» էր ան: Եւ Աննայի առաջին այցելութիւնն էր այս: Նոր տեղ մը տեսնելու հետաքրքրութիւնը որով չափով կը խանդավառէր դինք: Իջան խան մը: Աստուած ի՞մ, որքան խնոցում կար հոն: Տեսակ-տեսակ մարդիկ, ասարեր ասարացիներով եւ գիմապիծներով: Թուրքերէն, արաբերէն, Հայերէն եւ քնսապցիներէն իրարու խառնուած էին: Տեղատարուեցան անտանձին տեսնակի մը մէջ:

Աննա կ'ուզէր «Քաղաք»ը տեսնել: Հաննոն դուրս հանեց դինք: Երկու փոքրիկները գրկած՝ իջան գլխաւ որ փողոցը: Այդքան մեծ իրարանցութեամբ անսած չէր Աննան: Խանութները շատ եւ լեցուն էին: Հաննոն բարեկեց սուէտիացի ծանօթները: Ասանք փայտէ սանաթ, զգալ եւ չիքիփ բերած էին: Աւրիշներ անուխ իրենցուցած էին շուկայ: Տարբեր գիւղերէ զանազան գեղջու կներ իջած էին «Քաղաք», իրենց բազմազան գործերուն համար: Ոմանք եկած էին դասի, ոմանք՝ Արայ. սակաւին ուրիշներ՝ գնումի: Ոմանք ալ պարզապէս «Քաղաք»ը տեսնելու: Հաննոն նաեւ տեսաւ Թեոֆիլիանը: Երբեմն կանանկը մօտեցած ըլլալուն, այս վերջինը կարգէն դուրս քաղաքավարի եւ սիրայի բարեկեց Հաննոն, որ շատ յոյուեցաւ այդ բարեկեց ալիս եթէ ամբողջ քեզքը ճիշտ ար վաճառական Թեոֆիլիանին, ի՞նչ պատ...:

Հաննոն հարաք տարաւ նաեւ քնսապի ճաշարան մը: Յոյն ճաշարանատէրը իսկապէս փարաւ որ «քնսապ» մը կերցուց իրեն: Աննայի համար նորութեամբ տեսնելու նորութիւնն էր այս: Երևակայեցէ՛ք մէկ մը. աղածարդիկ ճաշ կ'նփէին ու սեղան կ'իջնցնէին: Քնսապին ետք, Հաննոն իր հարսն ու թոռները, եւ ըրրեանները Արբաւամբ տարաւ ամուսնավաճառին: Հարսին «Քաղաք»ի ամուսն պիտի կերցնէր: Անուշտ ու տեղէ ետք, մեծքերը լուսը գոյնի մը մէջ: Արբաւամ անհանդիսա շարժումներ կ'ընէր: Հագու գուրու կլամ՝ քոքիպանք յիշեցուց, թէ պէտք էր շուտով Հեռաւոր այդ տեղին, որովհետեւ Հաննոն մեծքերը լուսացած էր շարժումը իր մէջ: Հաննոն նոր միայն անդրադարձաւ, թէ ինչո՞ւ մեծքերը այդպէս կը փակչտէին:

Ճամբուն վրայ ուրիշ նորութիւն մը եւս տեսաւ Աննա: Մարդ մը երկու անիւներու վրայ նստած, ասրերը զարձնելով կ'երթար: Գեղջիկու հին ակամայ, կեցաւ ու հեռուեցաւ մարդուն, մինչև որ վերջինը աներևութացաւ: Կա՞ռք տեսած էր, հասկնայի էր այդ մէկը, բայց այս գոյգ անիւները ինչպէ՞ս չէին իյնար: Եւ որքա՞ն արագ կ'երթար մարդը: Անչա՛յ...

Ճամբուն վրայ Հաննո միշտ կը կրկնէր, որ Օպետին ճաշարանը շատ աւելի բարձր էր, քան Նոն կրթական կրթարանը: Հոշակաւ որ ճաշարանի մէջ ճաշէր ջրհեղանի իրաւունք էր:

Այդ գիշեր խանին մէջ աչքերը շիրջաւ գոցել Աննան: Ողբն ու մտադրութիւն չէին աւարտանայ: Ուրախացաւ, երբ յոյսը յրացուած, Հաննոն կարգադրեց, որ ճամբայ կլինէ: Իսկէնտրուի ն պիտի հասնէին:

Ճամբան հետաքրքրական էր, ծայր ատարին, անոր համար, որ Աննան առաջին անգամ ըլլալով կ'անցնէր այնտեղէն: Փոքրիկներէն մին գրկած էր Արբաշամը, իսկ միւսը՝ Ինք: Փոքրիկները շարունակ շարքումներ կ'ընէին: Ո՛չ Արբաշամ եւ ոչ ալ մանուկն Աննան կրնային պատասխան հասցնել անոնց: Ճամբուն կարծես անգործ ծրարութիւններ կային, որոնք, բոլորն ալ, մանկական օրնոթութեանն էր կարտաւերն:

- Այդ ի՞նչ ծառ է:
- Ան տունը ինչո՞ւ կը շարժի, (նկատեցիք ճիշտ մասին էր հարցը):
- Ինչո՞ւ տուն չենք կրթար:
- Ո՞ր է Գարուն հօտը:
- Ինչո՞ւ Օսան մաման միտին չէ:
- Կալո ջեղին ո՞ւր է:
- Անտն պապու կը ի՞նչ կ'ընէ հիմա...

Այս հարցումները տակնուվրայ կ'ընէին Աննան: Ինք թէև ուրախ էր, որ շուտով ամուսնոյն պիտի միանար եւ նոր աշխարհներ պիտի տեսնէր, բայց մնացեալ հարցաւորներէն բաժնու իլը շատ ծանր կը ճնշէր: Կը մտաբերէր, որ այդ որ միջին երեսն քարտաշար թանթանեց քաղաքին (արտին) մէջ քաղաքի ախտի ընէր: Երեսնայութեամբ կը տեսնէր Օսանը, որ քաղաքի ընդ կիներուն վրայ կը հսկէր: Իւրաքանչիւրին բնակիչք մը ունէր, մէկը կը գոգէր, ուրիշ մը կը յանդիմանէր: Կէտորին Գարունը խոշոր գոյլով մը թանապուր եւ հսկայ ծրար մը հաց եւ շոր թուգ պիտի բերէր կիներուն, որոնք իրենց քաղաքի խոտերուն մէջէն պիտի գտնէին նաեւ կանկաւտ եւ ճաշակելի այլ խոտիկներ, եւ ուտէին: Աննայի բերանը ջրտակաւ...

Կ'անցնէին մեծ ու վոքր գիւղերէ: Հաննոն բացատրութիւն կու տար իւրաքանչիւրին մասին: Ինք թէև շատոնց էր, որ այս ճամբին չէր անցած, որովհետեւ որոշ ատեն մը, նոյնիսկ ջրհեղանութենէ զազրած էր, երբ իր Քերթ օդան ժառանգած էր իր արհեստը: Անոր Ամերիկա մեկնելէն ետք, գարձեալ վերադարձած էր հին արհեստին: Բայց չէր համարձակած միջնի: Իսկէնտրուի ճամբորդել: Հիմա, Աննային եւ թոռնիկներուն սիրոյն, ահա ասիկ գարձեալ կ'անցնէր հին ճամբաներէն: Ո՞վ գիտէ, թերեւս այդ բոլոր իր վերջին տեսութիւնը այդ մտերիմ ու վաղեմի ճամբուն եւ գիւղերուն ու զեմքերուն...

— Այս գիւղը, հարսնա, հայկական է, որուն կէտը յոյն եւ կէտը այստեղ եւ...: Այս գիւղը, հարսնա, կէտ հայ, կէտ հոռո՛ եւ...: Այն վերի գիւղը կը տեսնենք, հարսնա, հայկական է...: Ե՛, ո՞վ գիտէ, թէ ուրիշ՝ ուր այդ յերան գլուխը թառած են այն խեղճերը...: Այն գիւղը կէտը թուրք, կէտը ֆրանսիացի հայ եւ...

Աննա հարսնան ուշադրութեամբ կը հետեւէր կիսաբարձր բացատրութեանց: Ինք գիտէր, որ ջրհեղանի հայը Քիսապի, Սուէտիոյ եւ Հայաստանի մէջ կ'ապրէր: Հա, նաեւ գիտէր, այսինքն՝ լսած էր, որ Իսկէնտրուն ալ հայ կար, բայց այդ մեկուսի խոտերուն մէջ ի՞նչ հայ...

Կէտըրը անց էր, երբ հասան Ծարթալը կոչուած գիւղը, որուն մեծ մասը բնակուած էր հայերով, իսկ վոքր մեկ մասն այ՛ թուրքերով: Հաննոն եւ Արբաշամը ջրհեղանի կապելին զրաստներու յատկացուած ճողի մը բնոյնը վար առին: Յլան գիւղի մուխթարին շրջանթան: Մուխթար Պեղճաւանին ճաշարանը, կամ շրջանթան, խորքին մէջ խեղճ ու կրակ բան մըն էր: Մէկ-եր-

կու խորխոր սեղանիկներ, ճսճոսան քանի մը աթուակ: Այս բոլորը գրուած էին հսկայ մայրիկ մը ասկ, որ կայծակէ զարնուած՝ կհոսով այրած էր:

Աննան յիշեց Մաթիսեանց մայրին կարծես թէ նոյն ծառն էր, ան այ կայծակնահար եղած էր: Այնքան այ նմանութի՛ն...

Մութթար Պեղճեանը բերաւ տապկուած հաւկիթ, «սիրբէ՛ք»՝ վրան մանրուած սոսո՞ք եւ արգար ձկնով, կապոց մը հաց եւ կուժ մըն այ թան: Ախորժակով կերան այդ բոլորը: Յետոյ, Պեղճեանը, որ հարազատի մը պէս դիմաւորած էր գիրենք, մէկական նարինջ հրամցուց հիւրերուն, ի՛ր հաշուոյն: Մութթար այ խմեցին, կաւէ փայլեցուած դաւաթներով: Արրահամ թիչ մը երկրնցաւ ծառին տակ եւ թեթեւ քուն մը քաշեց:

Հաննոն կ'անապարէր: Մութթը շփոթած՝ պէտք էր հասնիլ Իսկէնաէրուն: Բնացուցին ջորիներք եւ ճամբայ ինկան: Դեռ արեւը երկու ժամուան կեսնք ունէր՝ պէտք էր արագ շարժիլ: Զորեպան Արրահամ այնքան այ մտահոյզ չէր՝ կ'ըր հասնէին՝ հասնէին. ի՛նչ կար:

Երեկոյեան, երբ արեւը արդէն ժար մտած էր, բյրակի մը դադաթէն փուռ եցաւ Իսկէնաէրունի հրաշալի համայնապատկերը: Մեծն Աղեքսանդրիոյ ճեմար, որ կանգուսն կը մնար: Այդ որքա՞ն լոյս...: Աննան սքանչւցած էր: Դեռ երէկ էր, որ սքանչւցած էր Անտիոքով, բայց այս մէկը տարբեր էր...: Զորեպան Արրահամ քանի մը անգամ գիտել տուած էր, ճամբուն ընթացքին, որ Իսկէնաէրունին քով, Անտիոքը ծրարտու գիւղ մըն էր, եւ Աննա չէր համոզուած: Իսկ հիմա, ի՛ր աչքերով կը հաստատէր Արրահամի հաւաստիքները...: Աստուած ի՛մ, այդքան մարդիկ ինչպէ՞ս կ'ապրէին քով քովի: Այդքան լոյս ուրիշ՝ ճարած էին:

— Այն Հետուն կը տեսնե՞ս, հարսնա... Հո՞ն՝ ուր շատ լոյսեր կան...

— Այո, հայրիկ, կը տեսնեմ. ի՛նչ տուներ են անոնք:

Հաննոն յաղթական ակնարկ մը նետեց Արրահամին կողմը, ըսելու համար, որ որքա՞ն միամիտ էր իր հարսնան:

— Աստուք տուներ չեն, հարսնա, աստուք վափոք են...: Վաղը հոն պիտի երթանք եւ գուց անոնցմէ մէկուն վրայ պիտի բարձրանաք: Թող այդ Ամերքան իճատ ընողին վիզը փրթէր, հարսնա...

Հաննոն, որ կրցած էր իր վիշտը մեւով մը ծածկել մինչ այդ, չէր կրցած համբերել այլեւս...: Ամերիկեան շինարար ընողը անիծելով, իր ծանր վիշտը գուրս կու տար...

Աննան եւս սոսկաց: Ինչ, զեռ փոքր աղջիկ, ծովը տեսած էր իրենց տան բակէն, պզտիկ, փոթ-փոթ եռանկիւն մըն էր անիկա. կապուտ, կապոյտ: Երազած էր որ մը հասնիլ ծով եւ կտրելով անցնիլ ու երթալ ուրիշ աշխարհներ: Հիմա, որ այդ ուրիշ աշխարհներ հասնելու երազը մարմնաւորուիլ սկսած էր, սոսկաց: Ի՛նչ պիտի բնէր ինք միմակը, իր երկու մանչուկներուն հետ, այդ շատ լուսաւոր շփոթութիւն մէջ: Անձանոթը եւ միմակութիւնը անով կը լեցնէին այդ քաջ գեղջկու հին...

Գացին թիւ անելու Գէլփտեանց աղոց օրէլը: Աստուք քեռապցի էին: Տարիներէ ի վեր հոն հաստատուած էին: Նշանաւոր էր իրենց օթելը: Տակաւին նշանաւոր էր անոնց հիւրընկալութիւնը: Ամէն յանախորդ հարազատ մըն էր իրենց համար, ո՛րք մնաց Հաննոն, որ ազգականական հեռաւոր կապ ունէր հետերին: Գէլփտեանց մեծ ազան գիմաւորեց Հաննոն եւ ներս առաջնորդեց հետերին: Գէլփտեանց ազաքը, իրենց կիները, մայրը եւ հարազատներ զան բացուեցաւ: Գէլփտեանց ազաքը, իրենց կիները, մայրը եւ հարազատներ — հիւրերը ախորժակով կերան: Աննան Գեապէն հետը բերած կարգ մը ու-

տելիքներ դրաւ սեղանին վրայ, ինչ որ մեծապէս զնահատուեցան պանդոկաւտերերուն կողմէ: Յատուկ աղատիւ՛քի արժանացաւ Օսանին թխած պանիրով

Հայր: Գէլփաննց ժնն ողան, Անդրանիկ, այնքան ախորժակով կերտ: պանի-
րով Հայր, որ գրեթէ պիտի պայթեր:

Ընթրիքի սեղանէն ու զգակի ննջարան դնաց Աննա, իր հրկու մանչու կ-
ներու ն հետ: Այս ի՞նչ մաքրութիւն: Սասանները ճեփ-ճերմակ: Հապա մահ-
ճակա՛լը: Այդ ի՞նչ փառաս որ եւ զարգարուն բան էր: Աննան երբ երկննայ
փորձնց մահճակալին վրայ, գեղջկու հին գարձանքով թիչ մը օրօրու եցաւ: Ի՞նչ
բաներ կային այդ քաղաքին մէջ, Աստուած իմ: Որքա՞ն աղու որ բան էր սա
մահճակալը: Հապա Ամերիկայի մէջ ո՞վ գիտէ, թէ ինչիւր պիտի տեսներ:

Մանչու կները, սակայն, հակառակ իրենց մօրը թելադրանքին, որ մահ-
ճակալին վրայ խաղան, բռնեցուցին լաց մը: Իրենց ժնն մայրիկները, քեռին եւ
մօրքուրները կ'ու գէին: Ո՛չ սաստելը օգուտ կ'ընէր, ո՛չ դովասանջը եւ ոչ ալ
խոստումը: Գէլփաննց կինն ալ փորձնց խաղաղեցնել մանկիկները, բայց անօ-
գուտ: Բաւական երկար լացէ մը ետք, ու մասպատ, քնացան: Այս անգամ կար-
գը եկաւ Աննային: Հիմա ինք սկսաւ լալ: յիշեց ետին ձգած հարազատները,
աբար, կոմերը եւ գարնանային յորդու ն կեանքը իրենց գիւղի բնութեան մէջ:
Թէն ուրախ էր, որ մարդուն պիտի միանար, նոր աշխարհներ պիտի տեսներ,
բայց եւ այնպէս՝ վրդով էր հոգին: Այդ նոր աշխարհները տեսնելը գիւրբին պի-
տի չըլլար, իսկ մինչեւ մարդուն միանալը չուրջ մէկ ամիս մամանակ կար: Այդ
մէկ ամիսը: Ո՛վ գիտէր, թէ ինչ անակնկալներ պահած էր իրեն համար: Երկա-
րտան ու լուռ լացը իր բարեբար ազգեցութիւնը ունեցաւ: Ինք եւս քունի
անցաւ:

Առաւ օտու ն, երբ աչքերը բացաւ, պահ մը ինքզինք իր հարազատ տան
մէջ զգաց: Բայց յետոյ, մա՛նաւանդ՝ երբ մահճակալը թեթեւ կերպով շարժե-
ցաւ իր սլացիկ իրանին տակ, վերջիւնց, թէ ուր էր: Ետևտով տեղէն ելաւ, ան-
կողիւր շտկել սկսաւ: Ենթա մտաւ: Գէլփաննց մայրը եւ թելադրեց ամէն բան
եզածին պէս ձգել: Սպասեակը պիտի գար եւ շտկէր ամէն բան: Աննան ընդ-
դիմացաւ: Կարելի՞ բան էր անկողինը առանց շտկելու գուրս գայ սենեակէն:
Մինչ այդ, սպասեակը ներս մտաւ եւ հտանդով սկսաւ շտկել անկողինը: Ան-
նա մէկ աչքը ետին, գարձանալով, որ տղամարդը անկողին կը շտկէր, դուրս
եկաւ իր մանուկներուն հետ:

Նախանաչի նստան. Հաննուն եւ Արրահամը, որոնք առանձին սենեակի
մը մէջ գիշերած էին, միացան նախանաչի: Եստ նոխ սեղան էր: Աննա գիտէր,
որ նախանաչին հաւկիթ կը տապկեն եւ կաթ կը խմեն: Լու ինչե՛ր չէին
գրուած սեղանին վրայ, — կարագ, քամած մածուն, անուշիղջներու տեսակ-
ներ, թէյ, կաթ...: Աննա, մէկ-երկու պատառ ուտելէ ետք, քաշուեցաւ սեղա-
նէն, գալիք գէպեկը ախորժակ չէին ձգած իրեն: Ներսէն աագնայ մը կը
կրծէր գինջ. անորոշութիւնը ստակայի բան էր: Եվափորթին մէջ ի՞նչ պիտի
ընէր: Մանչու կները գազելը հարց էր: Նոր Երկրին մէջ, ինչպիսի՞ կեանք մը
պիտի ապրէր: Այս անձկութիւնը եւ կարօտը խորապէս կը տագնապեցնէին
գինջը: Հիւրընկալներուն պնդումները, որ շատ ուտէր, որովհետեւ յոգնեցու-
ցիլ օր մը կը սպասէր իրեն, օգուտ չըրին...

Գէլփաննց Եօրճը նաեւ յուսանկարչու թիւն կ'ընէր: Առաջարկեց յու-
սանկար մը նկարել, յիշատակի համար: Աննան չընդգիծացաւ: Փորբիկները,
սակայն, վախճալով այդ նորութենէն, սկսան լալ: Հաննային հաւաստիքները,
որ տարօրինակ մեքենային մէջէն ձագրուկ մը պիտի թռչէր, պահ մը լռեցուց
մանչու կները: Մինչ այդ, յուսանկարիչը, կիսամութ սենեակին մէջ նախա-
պատրաստական աշխատանքի լծուած էր: Ապակին պատրաստեց, ապա՝
նստեցուց Աննան եւ անոր գիրիչ գրաւ փոքր մանչու կը: Հաննային գիրկն ալ
դրաւ մէծ մանչու կը: Հազի թէ կոճակը պիտի կոխէր, մեծ մանչու կը, Գէլ ուն,
լալ սկսաւ, մեծ եզրօր օրինակին հետեւեցաւ փոքր՝ ձիմին: Մայր, մեծ հայր

և լուսանկարիչ ահագին ֆանք թափեցին, մինչև որ կարելի եղաւ լուսննէլ երկու մանչու կներբ: Գրեթէ գողու թեան պէս բան մը եղաւ: զանոնք լուսանկարելը:

Աննան պատրաստու եցաւ դուրս ելլել, երբ Գէլփտենց շորճը առաջարկեց առանձին նկարել Աննան: Աննան անճրկեցաւ: Վայն'ի բան էր առանձին լուսանկարուի: Նայեցաւ կետուրճօր, որ նոյնպէս շկրցաւ վճռական բան մը փոխանցել: Լուսանկարիչը իր ճարտասանական ճիւղը ի գործ դրաւ և համոզեց հարսը: Աննան դարձեալ նստաւ աթոռին վրայ: Փորթիկները փորձեցին փաթթուիլ ուղեբուռն, բայց նկարիչը կրցաւ, բազր սնով մը, հեռացնել զանոնք: Ետտ արագ պատրաստեց ազակին, շակեց Աննային զէմքը, որ շատ ազու նստ էր: Անցաւ քամերային ետին, գլուխը մտցուց սեւ լաթէ պարկին մէջ, լաւ մը դիտեց Աննան: Աքանչիլք մըն էր գիմացը նստողը, հակառակ երկու անգամ մայրացած ըլլայուն: Վերջնապէս, կոխեց կոճակը: Աննան խորչու նշ մը քաշեց: Դէմքին կարծրու թիւնը աւելի խորացած էր: Մեղաւ որ ակնարկ մը նետեց կետուրճօր կողմը: Վերջնապէս, դուրս ելան սենեակէն: Նկարիչը ներքը կը յամենար. կարծէք կ'ուզէր իր շղուխ-գործոցը վայրկեան առաջ փերճակ խաւարտին յանձնել: Իր նորարաց լուսանկարչատան ցուցափեղկին զարդը պիտի ըլլար այդ լուսանկարը:

Դուրս ելաւ լուսանկարիչը: Ազգթական ակնարկ մը պարզացուց շորթ կողմը: Աննան և պարագաները պատրաստուած էին ծոփափ իջնելու: Գէլփտենց տղաքը կարողազրեցին և կառք մը կանչել առին: Աննան մանկական հրճուանք մը ապրեցաւ: Երկմի կառքը նորու թիւն էր իրեն համար: Երկու ձիերու ն համաշարփ դոփի նը սեւ սալայատակին վրայ երաժշտական անուշ շուրթի մը ունէր: Աննան, արագ-արագ, ակնարկը ալէն ձախ և ձախէն ալ կը դարձնէր, այս նոր քաղաքին նորու թիւանց հազարդու կու համար: Նորու թիւնն էր շատ էին: Բազմաթիւ խանութներ, մեծ ու ճոխ, իրարու կը յաջորդէին: Այդքան հարստութիւն ուրկէ՞ զիդուած էր այս քաղաքին մէջ, Աստուած իմ: Այսքան հազուասեղէն և կտորեղէն, ո՛չ հազուելով կը վերջանար, ոչ ալ ծախելով: Դարձեալ իրաւ ունք տու: Գործարան Արքանամին: Անտիքը պարզապէս մեծ գիւղ մըն էր Իսկէնալբուռնի քով: Ապա՛ ուղղակի ապշեցաւ, երբ իրենց կառքին քովէն անցաւ ասորիական կառք մը: Ասիկա ո՛չ միաբար էր և ոչ ալ եզնաքար: Պարզապէս ինքնիրենը կը քալէ. մեղա՛յ, Յիսուս Քրիստոս: Յիշեց, որ Քերոք մէկ նամակին մէջ գրած էր այսպիսի կառքերու մասին, բայց կարեւորութիւն առաւ չէր: Հիմա՛ երբ աչքերովը կը տեսնէր, ուղղակի կ'ապշէր: Հաննոն և ա, որ երկար ատենէ ի վեր Իսկէնալբուռնն եկած չէր, իր կարգին, ետեւ գարձաւ ու երկար, շա՛ա երկար հետեւեցաւ կառքին, մինչև որ այս վերջինը անկիւնը գարձաւ: Դարձաւ թուրիկներուն, անոնց կարծիքը առնելու համար: Երկուքն ալ փոքր էին, շկրցան որոշ բան մը ըսել, բայց հիացած էին, իրենք և ա:

Քսան վայրկեանէն տեղ հասած էին: Մովեզրքին վրայ ահուկի հոու-գիւն կար: Մարդիկ կու գային և կ'երթային: Բազմաթիւ կառքեր կային նոստանք թեոնաւ որու ան, ուրիշներ՝ կը պարպուէին կամ կը բնունաւ որու էին: Աննան նաև տեսաւ քիչ առաջ տեսած կառքին նման կառք մը, որ արեւուն սակ կը փայլէր: Չկրցաւ հասաբքը թիւնը զայն և, ակամայ, ձեռքը քսեց անոր իրանին: Փորթիկները և ս հեանեցան իրենց մօր օրինակին: Մեծը, Գէլտն, մօրը ձեռքը ձգելով, սկսաւ շոյիլ կառքը: Առջև ի կողմը երկու խոշոր սալքեր՝ կային, գանձք և ս շոյից: Աննան և ա գարձաւ ու տղուն ձեռքէն քաշեց, որ գծկամութեամբ հեռացաւ այդ ասորիական շահատունձէն:

Գէլփտենց ազաքը շատ օգակար եղան կարողադրու թիւնները ամբողջ ջացնելու համար: Արդէն տոմսեր ապահոված էին նաև ուն համար: Աննան

դեռ բնաւ այդքան մօտեցած չէր ծովուն: Այդ ի՞նչ ահուկի բան էր: Ջուրը կու գար ու կ'երթար, կը գարնու էր քարափին, փեր կը բարձրանար ու ետ կ'իջնար: Հապա նաւե՞րը: Այնքա՞ն մօտ էին անոնք եւ այնքա՞ն հսկայ: Այդ հսկայ գանգու անները, որոնցմէ ի բազանչիւրին մէջ իրենց ամբողջ դիւ գին բնակիչներն ու անասու նենքը կրնային տեղաւ որու իլ, փեր—վար կը շարժէին: Այս բոլորին խիչք հասցնելը դժուար բան էր: Մարդու որդին ինչե՛ր չէր հնարած, մեղա՛յ, մեղա՛յ:

Երբ նաւ պիտի բարձրանային, Աննան, տարուած ծովով եւ նաւերով, տեղէն չէր շարժեր, մինչեւ որ Հաննոն կամացուկ քաշեց անոր թիւը:

Վերջին բաժանու մին պահը հասած էր: Աննան նոր միայն սթապիցայ: Երեք օր առաջ բաժնու ան էր իր ծնողներէն, կեսուրէն, տալէն եւ, մա՛նաւանդ՝ դիւղէն եւ այնքան սիրած բնութիւնէն, գարնան հեա պոռթկացած էր կհանքով: Մանր եզած էին այդ բոլոր կորուստները, բայց կեսուրէնը անբեկանալի էր: Երկու դեռ կապ մը պահած էր: Հիմա անկէ այ պիտի բաժնու էր: Պրկու եցաւ սիրաւ: Արցունքները սկսան ինքնաբերաբար հոսիլ: Հաննոն համբուրեց հարսին ճակատը: Երբ թոռնիկները եւս գրկեց, մանկան մը պէս սկսաւ լալ: Դժուարին, շատ դժուարին պահ մըն էր այդ: Երկու գաւազները ճամբած էր գէպի Ամերիկա ըտուած անիծեալ անծանօթը եւ այսքան չէր յուզուած: Հարսնէն եւ թոռնիկներէն բաժանու մը ահուկի էր: Հարկ եղաւ, որ իր բնկերը, ջուրեպան Արբանձակ, թիւը մտնէր եւ նոյնիսկ յանդիմանէր զինք:

Գէպիտեղ մէկ աղուն օղնութեամբ՝ Աննա գաւազները նաւ բարձրացուց: Վերէն, թաշկիճակը ճօճել սկսաւ: Հաննոն գգակը հանած՝ խնայելիքօրէն կը ճօճէր զայն: Նաւը երկար տուրջով մը մեկնու մի նշանը տուաւ: Մեծ մուրը բարձրանար ծննդոյն: Յայտնի էր, որ մեծ ճիւղ կը թափէր անդէն շարժելու համար: Վերջապէս, սկսաւ սահիլ ջուրին վրայ ու հեազհեաէ հեռանալ: Աննան կը շարունակէր իր թաշկիճակը, իսկ Հաննոն իր գգակը ճօճել...: Բաւորող ժամ ետք, այլիս անիծեալ գարձաւ: Նաւու եւ կամրջակին կամ ծովեզերքին վրայ կանգ չէր: Աննան ճամբողները վերադարձան պանդոկ, ուրկէ նոյն օրն իսկ պիտի վերադառնային Անտիոք: Իսկ Աննա իրեն արուած ցուցմունքներուն հետեւելով, գնաց այն սրահը, ուր համեստ դասակարգի ճամբորդները պիտի կեցութիւն հաստատէին...

Նաւու վրայ, Աննա նախ հող տարաւ իր եւ երկու մանչերուն տեղաւորման: Իրեն ցոյց տուին երկու յարկանի մահճակալ մը. մեղա՛յ Քրիստոս. ինչպէ՞ս պիտի քնանային հոն: Չափեց, ձեւեց եւ, վերջապէս, համոզուեցաւ, որ ինք եւ իր ձապուկները վարի յարկին վրայ պիտի կ'ընկուէին: Սակայն, մեծը Հաճօղով փեր մազլցեցաւ եւ յայտնեց, որ ինք վերի յարկին վրայ պիտի քնանայ: Աննայի պնդումները օգուտ չըրին: Փոքրն այլ լացաւ, վերի յարկը բարձրանալու համար, սակայն ի գուր:

Ինու կէսօր չեղած, Աննա զգաց անօթութեան առաջին ազդանշանները, սակայն շատ սիրտ չուներ ու տեղու: Փոքրիկներուն համար մահճակալին տակէն քաշեց—հանեց մէկական բոկեց: Քիչ ետք ուղեց դուրս կլիկ: Մանչու կենթուն ձեռքերէն բուսած՝ էլաւ: Նաւու եւ կամրջակին վրայ: Մանչու կենթուն երեւոյթը, մէկական բոկեց ի ձեռքին արտօմակով ու տեղը նաւ աստիներուն հետաքրքրութիւնը շարժեց: Նոյնիսկ ոմանք ուղեցին մօտենալ եւ գրկել կամ շոյիլ գանձեց: Աննան, սակայն, գեղջկական ամօթխածութեան տարուած, աչքերը յառած էր հեռուն: Ձտանել իսկ ձեւացուց հետաքրքիր նաւ աստիները:

Մտեցաւ կամրջակին: Վար նայեցաւ: Նաւը կը ձեղքէր ջուրի հսկայ գանգու անը, իր ետին ձգելով ճամբայ մը, որ շուտով կը հայէր: Վեր նայեցաւ. նոյնպէս կապոյտ երկինքն էր: Վերը կապոյտ, վարը կապոյտ. միայն հեռուէն կ'երեւէր ցամաքը, որ հեազհեաէ կը փոքրանար: Ինք տարիներով երազած էր

այս պահի: Դեռ աղջիկ, իրենց բակի հսկայ թթենիին տակ նստած, փոքր եռանկիս նստել ծովը գիտելով, երազած էր որ ժը կարելի-անցնիլ գայն: Հիմա այդ էր որ կ'ընէր եւ չէր հաւատար, թէ իրականութիւն եղած էր երազը: Յիշեց իր հօրենական տունը. յիշեց մա'նասանդ իր փախուստը. յիշեց իր եւ ամուսնոյն ծնողներն ու պարագաները: Տժգունեցաւ զէմքը: Մտաբերելով հարազատները, ինք իրեն հարց տուաւ, թէ արդեօք հիմա անոնցմէ իւրաքանչիւրը ի՞նչ կ'ընէր: Հաննօ կեարայրը ճամբայ էլած ըլլալու էր: Կեսուրը քաղհանի գացած. վստահարար Գարու ն տալը քաղհան ընող կիներուն ճաշ կը պատրաստէր. մայրը եւ հայրը ծխախոտ անկելու գացած ըլլալու էին՝ քանի ժը փնստներ էւ աղջիկներ հեռերին տանելով: Կարապետ կզրայրը, իր աշակերտները ծառի ժը տակ նստեցուցած՝ դաս կը բացատրէր անոնց: Երեկոյեան բոլորն ալ շերամներուն թթենիի թաքտ տներու ներս պիտի տանէին: Է՛հ, մէկ-երկու շաբաթէն շերամները խոզակ կազմելու պիտի սկսէին: Կը յու գու էր Աննան, անոր համար, որ ինք այդ բոլոր աշխատանքներէն անմասն կը մնար, նսեւ հետու՝ հարազատներէն:

Կը գիտէր ծովը. կը ներշնչէր ծովուն թաքտ ու զով ողը: Այդ ի՞նչ անուշ փոքր էր: Կը գիտէր նաև ուն չուրջ խայտապող ձու կերը: Փոշնգայն եւ տարբեր շափի ձու կեր: Երբեմն խուճերով կ'անցնէին: Փոքրիկներուն ցոյց կու տար անցնող ձու կերը: Զորհիկը կը յաջողէր հետեւիլ անոնց, մինչ փոքրը՝ ձիմին՝ ոչ, եւ ասորը համար ալ շարունակ հարցումներ կ'ուղղէր, թէ ո՛ր եւ, ո՛ւր գալիս կամ ի՞նչ եւ:

Գրեթէ ամբողջ օրը կամրջակին վրայ անցուցին: Հիմա ցամաք բնաւ չէր երևի: Վերը կապոյտ, վարը կապոյտ, չորս կողմը կապոյտ: Գեղեցիկ էր այդ կապոյտը, բայց եւ այնպէս միօրինակ:

Վերի յարկերուն վրայ, յաճախողները աւելի մաքուր եւ կոկիկ հալուած էին: Աւելի ազատ-համարձակ կը խօսէին-կը խնդային: Անոնք երկրորդ եւ ատարին կարողերու յաճախողներ էին: Յայտնի էր, որ հարուստ էին, ասորը համար էր, որ այդքան ազատ-համարձակ կը խօսէին ու կը խնդային:

Արեւը մար մտնելու կը ժառանգար: Մովեղերեայ արեւամարը ծանոթ երևի այժմ էր Աննային, բայց ծովուն մէջէն ատարին անկամ ըլլալով պիտի տեսնէր անոր մար մանկը: Իսկապէս, երկինքի եւ ծովուն կապոյտը սկսաւ սեղի տալ: Կարծէք արիւն կը խառնուէր ջուրերուն: Հետզհետէ խոշորցաւ արեւը, խոշորնայուն հետ՝ աւելի գոց կարմիրով կը ներկէր հորիզոնը: Վերջապէս, հետու ջուրերուն մէջ սուգուեցաւ անիկա: Ասկապէս սեւ ներկով ներկուիլ ամէն բան: Աղջիմու գլխի ծովը ստեղծուեց արտօնուող Աննային: Փոքրիկները առնալով՝ ուղղակի անկողին գնաց: Ընթրելու մասին չէր իսկ ուղեր մտածել: Հակասակ փոքրիկներուն պնդումին, սրա՛ շղնաց: Մի կական բոկեղով լուսնուց զանոնք: Հաս մըն ալ ինք կերաւ:

Կանուխ, շատ կանուխ քնացան: Դուրսի աղմուկէն բնդոտ արթնցաւ Աննա: Նախ կարծեց, թէ ասաւ օտ էր: Երբ աչքերը բացաւ, նկատեց, որ բոլոր անկողինները լախուած կը մնային: Կարծեց, որ ուշ մնացած էր: Անմիջապէս դուրս ելաւ անկողինէն: Դուրսը մութ էր գետ: Պահ մը շղիացաւ, թէ ո՛ւր էր: Կամայ-կամայ կրցաւ ճշդիլ, որ տակաւին միւս յաճախողները շին իսկ քնացած: Դուրսն էին եւ կը գրտանէին: Ինք եւս գուրս կաւ: Ուրիշ նա մը կ'անցնէր իրենց մօտէն: Անիկա աւելի հսկայ էր, եւ աւելի լուստաւոր: Երկու նաւերուն ճամբորդները զիբար կ'ողջուներին, ձեռքերու շարժումներով:

Աննա շուտով վերադարձաւ անկողին: Նշմարած էր իսկէնտրուեցին: Անկողին մտաւ եւ մինչեւ ատուտ շիրջաւ աչքերը զոցել: Առտուան զէմ, սիրտխառնուք զգաց: Մովու հիւանդութենէ բանուած ըլլալու էր: Փորձա-

ոտուները պատմած էին իրեն այդ մտտին: Աստուած իմ, որքա՞ն դժուար պիտի ըլլար շիմա ճամբորդութիւնը շարու նակել, մանաւանդ ինչպէ՞ս հող պիտի տանէր ձագուկներուն:

Անկողին վերագարձաւ բաւական հանգստացած:

Փոքրերը ևւս արթնացան: Անոնք այ բռնուած էին ծովախաւ: Մոզու ն առաջին օրուան հմայքը կը վերածուէր տառապանքի: Եթէ այդ պէս պիտի մնային, շարու նակ սիրտխառնութիւն փոխուէր, Աստուած միայն կրնար օգնական ըլլայ իրենց:

Նաւը կ'օրորուէր: Նախորդ օրուան հետ բազդատած՝ այիքները մեծացած էին: Մովը նաև սկսած էր կորսնցնել իր միապագայ լազուրը: Աննա նկատեց, որ միայն իրենք չէին, որ ծովախաւ բռնուած էին: Մինչ ծովուն վարժ սպասակներն ու նաւաստիները անփութօրէն կ'երթնէին, յաճախորդ ներու՛ն մեծամասնութիւնը, սմբած էր պարզապէս: Նոյնիսկ առաջին կարգի յաճախորդներուն ծիծաղները զսպում էին: Կարծէք մէկ օրէն միւսը աղքատացած էին: Այդ օր կերտուիւմք, ճաշարանին մէջ, անչափ անցաւ:

Գծուար անցան երկրորդ օրը: Մանաւանդ երկկոյնան ղեմ, նաւը սկսաւ աւելի մեծ թափով ճօճուիլ: պարզապէս կատաղած էր ծովը: Իսկ գիշերը վերածուեցաւ մղձաւանջի: Առաջին գիշերուան հոռու գետր մեռած էր: Մարդիկ շարու նակ կը դիմէին բազմիքները, փոխելու համար: Եթէ ծովուն մէջ այսքան կը շարշարուէին, հապա որքա՞ն պիտի տառապէին, երբ ովկիանոս նստնէին: Իսկէնտէրու նցին, ի սարսափ Աննայի, յայնանց էր, որ Փրանսայէն տնցին կը սկսէր հսկայ, շատ հսկայ ծով մը, որ Միջերկրականին թով, պարզապէս անասմանութիւն էր: Օրերով ցամաք պիտի շտեմնուէր: Այիքները հսկայ շնչերու հասակ ունէին հոն: Ինք չէր տեսած, բայց լսած էր իրազեկներէ: Այս տեղեկութիւնները ասէր չմկնուցի Աննան: Բարեբախտաբար փոքրիկները, ախտին պատճառով, թմբած վիճակի մը մէջ էին և օրն ի բուն անկողինն վար չկրցան իջնել: Եթէ արթուն ըլլային, անոնց շացք անտանելի պիտի ըլլար:

Յաջորդ առաւօտ, մօտեցան յաւ նական նաւաճանգիտսի մը: Իսկէնտէրու նէն հետք, առաջին նաւաճանգիտսի էր, ուր կանգ պիտի առնէր նաւը: Մէկ օր հոն պիտի մնար, պարենաւորուելու համար փութով, ու տեղիքներով, ինչպէս նաև նոր յաճախորդներ և բռններ պիտի առնէր: Յաճախորդներն շատեր, թոյլ և տկար, վար իջան նաւէն: Յամաքի վրայ քանի մը ժամ անցընելը կարգուրիչ կրնար ըլլայ: Աննա վար չիջաւ, հակառակ իսկ նտէրու նցին պնդումներուն: Նախընտրեց նա ուն վրայ մնալ: Եթէ նաւը յանկարծ քայլեր ու երթա՞ր, ի՞նչ պիտի ընէր այս անձանօթ երկրին մէջ:

Վերէն, նաւուն կամրջակին վրայէն գիտեցին նաւաճանգիտսին մէջ հոսացող կեանքը: Յոյները արագաշարժ և հոսանք ուն մարդիկ կը թուէին ըլլալ: Բարձրածայն կը խօսէին և կը կանչուրտուէին: Իսկէնտէրու նցին նաւէն իջնել տուաջ ըսած էր, որ յոյները հայհոյելու ուժ կու տան: Աննա յաճախ կը լսէր նոյն բառերը, օրոնք կը կրկնուէին: Ենթադրեց, որ մարդիկ իրարու կը հայհոյէին: Միայն չէր չէր...

Նորութիւն էր այս մարդոց նիստն ու կացը: Ոմանք վաճառորդներ էին, ուրիշներ՝ բռնակիրներ: Տակաւին երաժիշտներ կու գային, օրոնք իրենց տարօրինակ մանտիլներով տխուր, շատ տխուր երգեր կ'երգէին: Աննա սիրեց այդ երգերը, յաւ նակն երաժշտութիւնը... Իրեն տարօրինակ թուեցաւ ա՛յն, որ այս մարդիկը ընդհանրապէս ճերմակ կը հագուէին:

Երկկոյնան, նաւը իր խարխիւր վերցուց: Կամաց-կամաց յաւ նական ամբի աղճուկը կը նուաղէր: Նաւը կը հետանար: Գիշերը աւելի հանդարտ էր ծովը: Մարդոց տրամադրութիւնները աւելի բարձր էին: Աննայի երկխառնորդութիւնը ուղեցին: Մահակալին տակ պահած մեծ ծրարէն գարձնայ նանց

մէկական բոկեղ: Փոքրիկները թէեւ կերան, բայց ուզեցին ճաշարան երթայ: Հակառակ իր շկամութեան, Աննա զնայ ճաշարան: Գտաւ իրենց սեղանը: Հոն էր չայրենակիցը, իսկէնտէրու նոցին: Սեղանակիցները ախորժակով կ'ուտակին հիմա Աննայի երկչոտութիւնը, որոշ չափով փարատած ըլլալով՝ մղեց դիւր փառաս որսակն ու տեղու եւ կշտանայու: Առաջին անգամ ըլլալով զղջաց, որ այդքան մեծ ծրարներով ու աւելիք բերած էր հետը: Այնքան աստեղ, որ վճարած էր, պիտի ուտէր:

Ընթրիքէն ետք, քաշու եցաւ իր անկիւնը: Երկու ան փոթորիկին հետքն իսկ չկար: Կամաց-կամաց ծովեզերքի լոյսերը կ'աղօտանային:

Աննա խոր քու նի անցաւ:
 Յաջորդ առաւօտ, էրը արթնցաւ, արեւը բաւական բարձրացած էր: Նաւ ուն փրայ յաւելիւ կ'ուտայ մը կար: Յոյն ճամբորդ մը, իր երաժշտական գործիքովն ու մէլանուշ ձայնովը բաւական հետաքրքրութիւն կեդրոնացուցած էր իր փրայ: Ծամբորդները կը հասարակին այս ժարդուն շուրջ, եւ մտիկ կ'ընէին զինք: Աննան այ, հետուէն, կը դիտէր ու մտիկ կ'ընէր: Եսա առտապանք կար այդ երաժշտութեան մէջ:

Կէսօրին յաւ ճաշեցին: Փոքրիկներուն տրամադրութիւնը լաւ էր: Կը դիտէին ծովը, ծովային թռչունները եւ կը զրազուէին: Առաջին կարգի ճամբորդներուն տրամադրութիւնները եւս բարձր էին: Կարծէք փերադտած էին երկու օր առաջ կորսնցուցած իրենց հարստութիւնները...: Աննային եւ իր երեխաներուն, ինչպէս ուրիշ յաճախորդներու համար, հետաքրքրական էին նաւ ուն բնկերացող տարօրինակ եւ խոշոր ձուկեր: Աստիճ, ուրախ-ցուարթ, ջուրէն զուր կը խոյանային, օդին մէջ կը զատնային եւ գարձակայ ջուրին մէջ կը սուզուէին:

Գէտն, ներս երթալով՝ քանի մը բոկեղ բերաւ եւ ինք ու փոքր եղբայրը սկսան ձուկերու նետել: Տուֆիները ախորժակով կերան Քեապի շարժադանք...: Տղեկը գարձակայ պիտի երթար ուրիշ բոկեղներ բերելու, բայց մայրը արգելեց: Կեսրոջ, սալով եւ գրացիներուն պատրաստած ու տեղիքները օտար ծովերու անասուններուն ինչո՞ւ, նետէին:

Հիմա Աննա աւելի համարձակութեամբ կը խօսէր իսկէնտէրու նոցի չայրենակիցին հետ: Կրցած էր որոշ չափով յաղթահարել առաջին օրու ան սոսթիսածութիւնը: Դարգը Աննային անգեղութիւններ կու տար իր քաղաքին, ծովու եւ ընդ-աւերապէս աշխարհի մասին: Յայանեց, որ երկու օրէն պիտի հասնէին Նափոյի:

Նափոյի...
 Հոն պիտի ըլլար Աննայի առաջին հանդրուանը: Գլխիսանց ազաբը բռած էին, որ Նափոյի մէջ պիտի փոխուէր նաւը, աւելի մեծ նաւով պիտի ճամբորդէին: Ներկայ նաւը, Հակառակ իր մեծութեան, ոգիկանոսի համար յարմար չէր: Տակասին ուրիշ բան մըն այ կար, — իր վերջին նամակին մէջ Քեբուրը գրած էր, որ հետը պիտի խօսէր Ամերիկային: Աննա կատակ համարած էր այդ մէկը: Երբ իսկէնտէրու նոցին բաւ, թէ կարելի՞ էր բան էր Ամերիկայէն մինչեւ Նափոյի խօսիլ, այս վերջինը բացատրեց, որ «թէլեֆոն» ըստ ան բան մը կայ, որուն միջոցաւ կարելի է շատ հեռուներ խօսիլ: Աննա որոշ չափով համոզուեցաւ կարծէք: Երբ մարդ ըստ անը այսքան հսկայ նաւ կը շինէ, որ այսքան հեղաճառ կերպով այսքան մեծ թիւով ճամբորդներ կը փոխադրէ, հարկաւ կրնայ նաեւ ուրիշ բաներ այ ստեղծել: Կրնայ Քեբուրը խօսեցնել ծովուն մէկ ափէն միւր: Բայց զի ոչ շատ չէր համոզուէր:

Նաւը, եթէ ուղիղ ընթացքով ընթանար, հասնաւորար կարենար 4-5 օրէն կարելի իսկէնտէրու նէն Նափոյի միջոցը: Բայց որովհետեւ անբիկա կ'այցնէր մէկ աւելի նաւ անանդիստներ, ճամբան երկարեցաւ ու երկարեցաւ: Յու-

նական նաւանդաբանի ետք, այցիկց սլաւական քանի մը նաւանդաբան եւս, ապա հասաւ Ատրիական ծովուն հիւսիսային սահմանը եւ մէկ լժան օր կանդ առաւ Քրիէսթէ նաւանդաբանի մէջ: Բոլոր նաւանդաբաններն ալ հետաքրքրական նորութիւններ կը պարզէին: Տարբեր տարազներ, տարբեր լեզուներ եւ, բնականաբար, ծովու մարդոց տարբեր հայեցողութիւն: Բայց, բոտ Աննա հարսին, բոլորն ալ նոյնն էին, բոլորն ալ հացի վաղոր մէջ էին: Կեանքը կեանք էր, անկախ տարազներու եւ լեզուներու տարբերութիւնէն...

Վերջապէս, իններորդ օրը, նաւուն բարձրախօսէն յայտարարուեցաւ, որ երկու ժամէն պիտի մտնէին Նափոյի նաւանդաբան: Աննա միմիայն Նափոյի բառը կրցաւ հասկնալ: Ենթադրեց, որ հասած կամ հասնելու վրայ էին: Իսկ նախորդ օրը եւս հաստատեց Աննայի ենթադրութիւնը: Պատուիրեց, որ Աննա կուրծքին վրայ հաստատէր պատու ելի Տիգրանին գրած անզլիւրէն թուղթը՝ «Օղնեցէք ինձի, լեզու չեմ գիտեր»: Ինք պիտի երթար իր գործին: Աննա շնորհակալութիւն յայտնեց այս մարդուն, որ ամբողջ ճամբու տեսողութեան, մեծ երբոր մը պէս հետեւած եւ օգնած էր իրեն:

Երբ նաւը երկար սուշոցով մը ազդարարեց իր ժամանումը, Աննա մահճակալին տակէն քաշեց պաշարի ծրարը, ուր գեո բաւական յիշատակ մնացած էր: Նաւուն վրայ շատ բան չէին կրցած ուտել: Յետոյ, պէտք էր խոստովանիլ, նաւուն ճաշերը այնքան ալ անտեսուելիք չէին: Աննա հիմա կարօտեցած էր ճաշերուն ամենապարզին՝ ստնկ աղուօր պազուկ թանապուրի մը, բայց ուրկէ՞...

Իսկ նախորդ օրը սօսեց իրեն նաւին: Մարդը Աննան առաջնորդեց յատուկ գրասենեակ մը, ուր Ամերիկա գտնողները կը հասարակէին: Երբ տեսան Աննայի թուղթերը, յայտնեցին, որ առնուազն մէկ շաբաթ պիտի սպասէր հոն: Իտալերէնով բաներ մը բացատրեցին, որ իսկ նախորդ օրը իսկ չէր հասկնար, ո՞ր մնաց ինք: Միայն հասկցան, որ շաբաթ մը պիտի մնային: Տէր Աստուած... Աննան կը կարծէր, որ նաւէն պիտի իջնէր եւ ուրիշ նաւ մը պիտի բարձրանար: Ի՞նչ պիտի ընէր երկու երեխաներուն հետ: Իսկ նախորդ օրը նախորդ օրը իսկ մաղթել է ետք, մեկնեցաւ իր գործին:

Աննային, ձեռքի նշաններով, ցոյց տուին օթեւան մը: Տեղաւ որեցին սննու կները: Լաւ էր, որ նաւուն վրայ սպասած չէր բոլոր պաշարը: Ի՞նչ բարձրար օգտակարութիւն ունեցան Քեասպի համով-հոտով բոկեղները, ծոթ-րինով հացերը, էօփթիները: Խէն իրենց թարմութենէն հետք իսկ մնացած չէր, բայց եւ այնպէս շատ օգտակար եղան: Լաւ որ կեսօրը, տալը եւ դրացի կրները այսպէս համով բաներ պատրաստած էին...

Տարակալի, շատ տաղտկալի պիտի անցնէր շաբաթը: Ի՞նչ պիտի ընէր: Եթէ լեզու չէր, կ'ստնէր փոքրիկները ու կը քաշէր փողոցներուն մէջ: Երբ վերադառնալ ուզէր, կը հարցնէր եւ կը պտնէր իր օթեւանը: Իսկ կուրծքին գրութիւնը, փոխանակ օգտակար բոլորու, բնականապէս, սկսած էր փորձանք ըլլալ: Իտալացի երիտասարդներ, նոյնիսկ տարեցներ, իրր թէ գրութիւնը կարգալու պատրուակով՝ կը մօտենային, բայց իրենց ակնարկները կ'ուղղէին այս գեղջուկ կնոջ փարթած ստիւքներուն եւ սեւ ու խոշոր աչքերուն: Ատոր համար ալ պատուեց-նետեց փորձանք թուղթը:

Մէկ-երկու օր ետք, համարձակեցաւ օթեւանին դուռնէն քիչ մը հեռանալ: Քանի մը պատկերներ նշանակեց եւ ստնկ քանի մը հարիւր մեկըր հեռացաւ: Փորձի համար շուտով ետ դարձաւ. փորձին յաջողութիւնը յաղթանակի մը նկատեց: Յետոյ մտարեց, որ շաղագքի համբաւու որ ծորէն գիշերով անցնողը անշուշտ որ կրնար գլխուն ճարր գտնել, հոգ չէ թէ լժան անծանօթ այս շրջապատին մէջ:

Օր մը բաւական հեռացաւ օթեւանէն: Նկատեց դուռ մը, որուն վրայ

Պաղ րառին Հևո մտարերեց պաղու կ թանապու րը. հակասակ կու շու բլլայու ն, փափաքեցաւ, որ չող ըլլար պղինձէ մեծ թաս մը թանապու ր եւ պլխու ն քաշէր զայն:

Հաղի սթեւանի դուռնէն ներս մտած՝ կանչեցին զինք. Աննա սի՛, Աննա թէլէֆոնն ըսելով: Նախ շուղեց կարեւ որու թիւն ապ. յետոյ պաշասոնեայ մը ժօտեցաւ՝ «թէլէֆոն Գերօ՞, սի՛», ըսելով աստիճանողեց զինք իցիկ մը: Ձեռքը տուաւ իրենց ճէյրան կողմու ն կոտորին նման բան մը, հասկցու ց, որ մէկ կողմը ականջին տանի: Մեզա՛յ, այս ի՞նչ խայաաակ բան էր: Երբ բնկայու շին մէկ ծայրը ականջին տարաւ, միւս ծայրը բերնին ժօտեցաւ: Եւ, ո՛ր չրաշք, լսեց ձայն մը, որ ճիշդ ու ճիշդ Գերորին ձայնը կը յիշեցներ:

— Աննա՞, հոգիս...

— Աս Գերոր զո՞, ն ես. ո՞ր ես... Ամերիկայէն ինչպէ՞ս կը խօսիս... մեզա՛յ, աս թէլէֆոնն ըսուածը չրաշք բան է եղեր... տղաքը շատ լաւ էն... հայրիկն ու մայրիկն ալ լաւ են... Գարունը ձեռքերնիդ կը համբուրէ... Տիրան եղբայրը սամանցիին բանակին մէջն է... ինչպէ՞ս է Արոր եղբայրը... Ի՞նչ, ե՞տ գտնեմ, ինչո՞ւ, զո՞, ք այ... շիֆիլիզ... անգամ մը գայինք չոզ, միասին կը դառնայինք... ո՞չ, բայց կէս ճամբան հասնելէ ետք... շո՞ւտ պիտի դառնաք... կո՞մ, ոչխո՞ր... Արոր եղբայրը... եղբայր, զո՞, ն ես, շատ լաւ եմ... տղաներն ալ լաւ են: ... Դու ն գիտեա, եղբայր, դու ն գիտեա... միայն թէ Երանի հասնինք քովերնիդ, միասին ետ կու գանք...

Գոցու եցաւ Հեռաձայնը: Աննա շտապու նած էր, շէր գիտեր, թէ ի՞նչ ընէր: Տագրը, հակաակ անոր, որ ամուսինին կրտսերն էր, կը կարգազրէր, որ ետ դառնար: Երկու եղբայրներն ալ շուտով, երեք, շատ-շատ վեց ամիսէն ետ պիտի գտնային. ազարակ պիտի բանային. նոր տու ներ պիտի շինէին: Ատոնք լաւ լուրեր էին, ամէն գաղթած քեանայցի կ'երազէր Էտ դառնալ, շէնցնել չօրեան կան տունը, նոր անտեսութիւն շինել եւ ազա կոչուիլ: Սակայն Աննա, այսքան ճամբայ կտրելէ ետք, կ'ուզէր հասնիլ սա շղանու էլիք Ամերիկան, տեսնել նոր աշխարհներ եւ ետ դառնալ: Ի՞նչ կրնար ընել:

Յթեւանին պատասխանատուներէն մին պահարան մը տուաւ իրեն: Տագրը եւ ամուսինը իրեն յիտու ն տղար զրկած էին: Ծամբու ծախսի հարցն ալ կարգազրած: Իրեն կը մնար քաշու իլ իր սենեակը եւ սպասուլ:

Յաջորդ օրը, մարդիկ եկան եւ հասկցուցին, որ ունեցածը հասաքէ: Ծարու նակ կը կրկնէին՝ «մակնտերու ն, սի՞, սի՞...»:

— Ան բլլայ մեր սին, — դուրս տուաւ Աննա...:

Չաւակներու ն Հեռ Հետեւեցաւ այս մտղոց, որոնք Իսկէնտերու ն վերադարձող նաու մը վրայ բարձրացուցին զիրենք:

Աննան տեղաւորու եցաւ սրահի մը անկիւնը: Հիմա բաւական վարժ էր այլեւս: Վարք, իտայացի տղայ մը իր պաննոն կը նու ազէր եւ կ'երգէր... Ուրախ-զուրախ մարդիկ էին սա իտայացիք...: Ամէն օր կը լսէր նու ազի եւ երգի ձայներ. կարծէք կ'ախորժէր ալ անոնցմէ, սակայն այսօր տրամադիր շէր եւ ատոր համար ալ դուրս տուաւ:

— Գետնին տակը անցնիս զո՞, ն այ...:

Աննայի երազները ցնդած էին շատ բիրտ մեւով: Տագրը քիչ մը շատ կտրուկ եւ խիստ եղած էր...

Նաւը երկար սուրճոցով մեկնու մի ազդանշանը տուաւ...

ԳԼՈՐԳ ԱՏԷԼԵԱՆ

(Շար. 2)

Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԱՍՏՂԱՆԻՇ

Թող յօրինուի յուշամատենը կեանքիդ՝
 նակատագրի երկաթագիր վկայութեամբ.
 ինչ փոյթ, թէ ես մնամ հեռու եւ օտար
 անօրինակ գեղեցկութեամբ յօրինուած՝
 իր կոթական յգացքին,
 բայց ես կրկին կ'ընդելուզուիմ
 կենսավէպիդ յուշամորմօ՛ տարերքին,
 ներանճնայոյզ սիրանքներուդ շոգարձակուած՝
 գերթ ծածկագիր աստղանիշ...

Ես կը ճուլուիմ,
 հանգրուան առ հանգրուան,
 շոքայայար ապրումներուդ հանդիսութեան,
 ուր ամէն բան,
 խոհամտութեան է ծածուկ՝
 յիշատակի մը անշոգ...

Եւ կ'ընթանամ խոհերուդ հետ տող առ տող,
 պարագրելով դաշտանկարն յուշերուդ՝
 իմ աստղայոյս թեւերով,
 ուր հեռասոյզ ներաշխարհիդ
 գազտնախորհուրդ մտաբին
 յոյս խորհուրդներ կը սփռես՝
 խոհամատոյց իմ կեանքով...

Կը ծաւալիմ յուշավէպիդ էջերուն,
 ստուերական ինքնութիւնդ լուսերանքոյ՝
 գերթ եռայոյս աստղանիշ,
 եւ իմ եռեակ բնութեամբ,
 եռախորհուրդ մեկնութիւններ կ'ընծայես՝
 գազտնաբաւալ յոյզերուդ հին հծծերգին...

կը վերածուիմ ես էու մէջ՝
 ժամանակի իմացութեան հետախոյզ.
 եւ աւերիչ խորշակէն ետք երէկի,
 յիշատակիդ անուղեցոյց նանապարհին,
 ես կը դառնամ վկայութիւնն աստղանիշ,
 ծիրաներոց տառապանքէն առկայծոց՝
 կեանքի ցաւոտ հրնուանքին,
 ոսկեծպիտ ինչպէս սազարթը աշնան,
 որ դայկախոհ աւետումն է՝
 գարնան շունչին ցնծաբեր...

ՄԵԶԻԵՐՈՒՄ

Մէջբերեցի քեզ կրկին
 բեւեռագիր խոհագիրքէն դարերու,
 երբ ուրուականը մահուան
 կը սերմանէր նոր արհաւիրք մը ահեղ՝
 երազանքիս դաշտերուն.
 իսկ միջօրէս՝
 մոխրամորմոք իր ցաւին մէջ
 նոր յուշագիր մը կը յղէր
 խղճմտանքի ատեանին...

Մէջբերեցի քեզ կրկին
 նշմարտութեան մատեաններէն ծաղկագիր՝
 իբրեւ ապում խոհական,
 որ խորանաս ոյրտներուն մէջ մտքիս՝
 ծաւալական քաղցրութեամբ.
 ոգեճուլուի՛ս տրոփներուն հետ սրտիս
 եւ դառնաս ձա՛յնն հարագատ
 իմ էութեան ներանձնալուր ցաւերուն.
 եւ յարակցիս բոցերուն հետ վարդաշուրթ
 միջօրէիս կիզողական նաճանչին.
 բիւրեղանաս եւ տեսլանաս դուն իմ մէջ,
 դարձած իմաստը լուսայայտ՝
 նակատագրիս անդռհանքին...

Իմ անցեալի խորագիբէն փրցուած
 Տառապանք իմ,
 մէջքերեցի քեզ կրկին,
 որ ոգեհունչ ձայնարկութեամբ
 շնչաւորուի՛ս դուն իմ մէջ
 իբրեւ խոստում բարեյոյս-
 յայտնակերպես վերստին
 կասկածանքի սէզներուն մէջ կորսուած
 մտապատկերն իզմերուս-
 էախառնես գոյութիւնն իմ
 ոգեբարբառ բազմանկերով քոցավառ
 Գազափարի աբարչաստեղծ տարրերուն-
 մակընթանաս խոհերուս մէջ՝
 համագրբաւ ներդաշնակութեամբ կեանքին,
 հոգեգրաւ վսեմութեամբ սիրոյ,
 ժամանակի խոհապատկերն ընդգրկող
 աստղաթաւ ընկալչութեամբ լոյսին-
 եւ ոգեյուշ յարակցութեամբ՝
 էափոխուի՛ս դուն իմ մէջ,
 նակատագրի բաւիզներէն ընծայուած՝
 իբրեւ ծագի՛կ տեսլային...

Իմացութիւ՛ն գոյակից-
 կ'ընթեռնում քեզ տողադարձ առ տողադարձ,
 խոհանիշ առ խոհանիշ,
 իբրեւ ոգին կենսալիր
 ցայգախորհուրդ երգերուս-
 եւ կ'ըմբռնիս նմ շո՛ւնչն անանց
 խորերդակիր բառերուդ,
 որ օրերուս շիրմածաղիկ ամայնֆներուն
 լոյս օրհնանքներ կ'անձրեւեն...

Զգայնութի՛ւն էակից,
 մէջքերեցի քեզ կրկին,
 որ չդառնաս ա՛յ բարբառը ծածկագիր,
 մեր ընդմիջուած հարսներգութեան
 կարօտներուն ազուակէզ-
 ինչպէս մահր,
 որ շիրմաբար մէջքերումն է՝
 կեանքի յոյսին անաւարտ...

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ



Կարճ գուրգուրույ խաղաղութիւնն ըն յիսկ
մէկ վարկեանին մըս:

Ի նշ է նշարանութեան պոստը, եթէ անկիս ան-
մեղներուն զվերք պիտի չդատուայ:

Մարդկութիւնը մարտիրոսներուն շարք կրտս-
տապարան է իր ներկայացուցչական տրոպարներուն:

Գուրգուրույ մէկ պարպէ... Անկիս միակ ան-
գակութիւնն է, որուն պէտք ունի աշխարհ:

Ոչոք զմտախնայք ինծի նաւասար կը նկատեմ,
եւ կ'ընդունիմ զիրենք այնպէս՝ ինչպէս որ են:

ԺԱՆ ՓԻՊՈՏԻՍ

Համայնարձային երկու ՄԵՃ պատերազմներուն միջև ինկած ժամանակահատուակին մէջ, ժան Փիրոսու կը հանդիսանայ Փրանսական թատերգութեան թեան ամենէն անբնական զվարկեան մէկը, որուն ասկզմունքները ո՛ն խանցադատանքով զիմաստը եղան մեծանուն քննադատներուն կողմէ՝ Լուի ֆու վիլն միջոց ժան վիլյար աս ապարկզին նարպայն ներկայացուցչները: Ըստ Փրանսացի քննադատներուն, զու պիտիտուսութիւնը, վարկեանային գրուածքները, Նոյն-
նանքն ու երկհաստութեան փայլատակու մները իրենք են, որ մտայուն հետաքրքիր անտուած կը պատեն Փիրոսու ի գործերը, մանաւանդ անոր գրուած գործերը: Արտնայմ մէկը կը Համարուի Նետազայ Վիլլուսն թարգմանարար ներկայացուցչու Վերոլանայի պատերազմը տեղի պիտի յուճեալայ խորագրեայ խաղը:

ժան Փիրոսու նման 1882ին, Պլյարի մէջ, նախնական կրթութիւնը ստեղծուած մըս ստանալէ ետք, ուսուցիչ կը շարունակ յաջորդարար Եւթօրուսի Լու Լաբանայի ինստիտուտ մէջ, իսկ 1908ին կը սկսի յաճախել Էրոլ Նորմալ Սի ֆրիէտը, ուր ի միջի այլոց կը նետուի նաև զեր-
մանական գաղտնիագրներուն:

Համայնարձային Առաջին ՄԵՃ պատերազմի նախորդին կը զօրակոչուի Լու Լաբանայի ինստի-
տուտ կը մասնակցի զիմաստը քանակաբար ճակատամարտներուն: Կը ստանայ երկու վերք ու
աստեղ մը անկողնոյ կը մտայնէ, իսկ պատերազմի աստիճան, զրախանու թեան ատրոններ՝ կը վա-
րկ նաև զի անադիտական պաշտաններ:

ժամանակակից նիթերու Ներքով կատուցուած իր թատերախաղերուն քաճի ի վեր՝ Փի-
րոսու իր գործերն մէկ կարևոր մտախնայ ստացիք ուսած է Ան Լաբանային, ինչպէս նաև, յու նա-
կան ու գրեմանական առաջնորդներն, յաջողելով միշտ նաւասարքի մնայ թատերգութեան ող-
բերական սետը աշխատանքի թեան բնազդով, նորը նաշակելով ու մտքի նկուտութեամբ վերանա-
րոգան արու կատաղակ իր Համարուին:

Լու աստեղական արամագրութիւններով թատերական ապարկզ մուտք գործած Փիրո-
սու ի ոճը աստեղականարար կը սկսի ողբերգական երանգներ ստանալ, մանաւանդ 1833ին Լաբ-
անայ ինքնապատճառ Կերմանիան սկսուած մտնացու պատմայիք մը պատեայ ամբողջ ուրուայի նու-
մար: Այս կուսակցութեամբ թարացուցական արեանակ մըն է Վերոլանայի պատերազմը, որ
միամասնակցականն արևմտեայ արևմտեայ արևմտեայ թեան ի ինչպէր շղթայագրներու ան թ-
րոսուսութիւնը:

ժան Փիրոսու կը մեռնի 1941ին, ասանց կարևոր տեսնելու Ֆրանսայի ազատագրու-
թիւնը գերման գրաւու մէն:

ԺԱՆ ԺԻՐՈՏՈՒ

ՏՐՈՎԱԴԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՏԵՂԻ ՊԻՏԻ ԶՈՒՆԵՆԱՅ

ԵՐԿՐՈՐԿ ԱՐԱՐ

Պալատի շրջափակում պարտեզը: Անոր իւրաքանչիւր անկիւնը
կը բացուի ծովուն: Մէջտեղը՝ կորոզ մը: Լայն բացում են պատերազմի
դարպասները:

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ՀԵԼԷՆ ՊԱՏԱՆԻ ԹՐՈՒԼԻԻՍ

ՀԵԼԷՆ.— Դու ն, գու ն, չէ՛յ, քեզի՛ եմ... Հո՛ս եկուր:

ԹՐՈՒԼԻԻՍ.— Ո՛չ:

ՀԵԼԷՆ.— Ի՞նչ է անունդ:

ԹՐՈՒԼԻԻՍ.— Թրոփիս:

ՀԵԼԷՆ.— Հո՛ս եկուր:

ԹՐՈՒԼԻԻՍ.— Ո՛չ:

ՀԵԼԷՆ.— Հո՛ս եկուր, Թրոփիս: (Թրոփիս կը մտնենայ): Հա, գերջապէս
եկար: Ուրեմն կը հնազանդես, երբ անուծովդ կանչեմ քեզ: Դու ն
դեռ հագի: որսկան շնիկ մըն են, թէն քսեմ, որ ասիկա գէշ բան մը
չէ: Գիտե՞ս, որ առաջին անգամ ըլլալով կը ասիպուիմ այգամարդու
մը հետ պոռալով խօսիլ: Անտեք, այդ ազամարդերը այնքան կը կրպ-
չին ինծի, որ հագի կը յաջողիմ չքմեքս բանայ: Ես կը պոռամ թրո-
չու նենքու, աստրակենքու, արձագանդներու, բայց երբեք՝ մարդու
մը: Ասիկա սուղ պիտի արժէ քեզի...: Դու ն ի՞նչ ունիս: Կը դողա՞ս:

ԹՐՈՒԼԻԻՍ.— Ո՛չ, չեմ դողար:

ՀԵԼԷՆ.— Բայց գու ն կը դողաս, Թրոփիս:

ԹՐՈՒԼԻԻՍ.— Այո, կը դողամ:

ՀԵԼԷՆ.— Ինչո՞ւ միշտ ետեւս կը մնաս: Երբ կունակս արեւուն տուած կը քա-
լեմ ու կանդ կ'առնեմ, քու շուրջ միշտ ուղեբուս կը գարնուի: Կը
գարնուի եւ նայն տեղը կանդ կ'առնել: Ըսէ ինծի. ի՞նչ է ուզածդ:

ԹՐՈՒԼԻԻՍ.— Բան մըն այ չեմ ուզեր:

ՀԵԼԷՆ.— Ըսէ ինծի. թէ ի՞նչ կ'ուզես, Թրոփիս:

ԹՐՈՒԼԻԻՍ.— Ամէ՛ն ինչ: Ամէ՛ն ինչ կ'ուզեմ:

ՀԵԼԷՆ.— Ամէ՛ն ինչ: Լուսի՛նք:

ԹՐՈՒԼԻԻՍ.— Ամէ՛ն ինչ, եւ ամէ՛ն ինչն աւելի բան մը:

Հեկէն.— Արդէն հասուն մարդու մը պէս կը խօսին: Այդ կը նշանակէ, որ դուն գիտ համբուրելի կ'ուզես:

Թրոնիլիս.— Ո՛ր:

Հեկէն.— Դուն գիտ համբուրելի կ'ուզես, այնպէս չէ՞, իմ փոքրիկ Թրոնիլիս:

Թրոնիլիս.— Անմիջապէս ետք ինքզինքս կը սպաննեմ:

Հեկէն.— Աւելի մտախփր...: Քանի՞ տարեկան ես:

Թրոնիլիս.— Տասնհինգ, աւագ:

Հեկէն.— Կեցցես այդ «աւագ»ին համար...: Քեզի ասրեկեց աղջիկներ համարուած ես:

Թրոնիլիս.— Կ'ատեմ գանձը:

Հեկէն.— Աղջիկ համարուած ես բնաւ:

Թրոնիլիս.— Մենք սահմանուած ենք համբուրելու աղջիկներ: Անոնցմէ ոեւէ մէկը համբուրած չըլլալու համար կեանքս պիտի տայի:

Հեկէն.— Ինծի այնպէս կը թուի, որ դուն չիտրաւ քանի մը կեանք սպասած ես: Ինչո՞ւ, անկեղծօրէն չըսիր ինծի. «Հեկէն, կրնա՞մ համբուրել քեզ...»: Ես անպատեհութիւն մը չեմ տեսներ ատոր մէջ...: Համբուրել գիտ:

Թրոնիլիս.— Երբե՛ք:

Հեկէն.— Իրեկուան դէմ, երբ նստած կ'ըլլամ պարիսպին վրայ՝ կ'զգենք որուն վերջալույսը գիտելու, դուն կրնայիր կամաց մը գալ, դարձնել զլուխս քու կողմը — որ այդ գիրքով մտքին մէջ պիտի ըլլար եւ յաւ պիտի չտեսնէիր զիս — ու համբուրէիր, շատ ուրախ պիտի ըլլայի: Տ'ի՛նչ, — պիտի բացագանչէի իւրովի, — փոքրիկն Թրոնիլիսը զիս համբուրեց...»: Համբուրել գիտ:

Թրոնիլիս.— Երբե՛ք:

Հեկէն.— Կը հասկնամ: Դուն կը կարծես, որ եթէ անգամ մը համբուրես, այլ ինչ պիտի սկսիս ատել գիտ:

Թրոնիլիս.— Ա՛հ, այդ մարդերը շատ բախտուաւ որ են անոր համար, որ գիտեն ըսել՝ ինչ որ կ'ուզեն ըսել:

Հեկէն.— Այդ մարդին մէջ դուն եւս բաւական յաւ կ'երեւիս:

ԵՐԿՐՈՐԻ ՏԵՍԱՐԱՆ

ՀԵԿԷՆ, ՓԱՐԻՍ, ՓՈՔՐԻԿՆ ԹՐՈՆԻԼԻՍ

ՓԱՐԻՍ.— Ուշադրութիւն ըրէ, Հեկէն, Թրոնիլիսը փոփոխուեցաւ որ մէկն է:

Հեկէն.— Ընդհակառակն: Ան համբուրելի կ'ուզէ գիտ:

ՓԱՐԻՍ.— Թրոնիլիս, գիտցած եղիր, որ կը սպաննեմ քեզ, եթէ Հեկէնը համբուրուի:

Հեկէն.— Անոր համար մեռնիլը մեծ հարց մը չէ. նոյնիսկ եթէ քանի մը անգամ մեռնի:

ՓԱՐԻՍ.— Ի՞նչ ունի: Իր ասրերքին մէջն է...: Վրս՞ո՞ղ պիտի յարձակի...: Շատ ազնիւ է: Թրոնիլիս, համբուրէ Հեկէնը, կ'արտօնեմ քեզի:

Հեկէն.— Եթէ կարենաս իրեն յաջողեցնել այդ բանը, կը նշանակէ դուն ինձմէ աւելի ճարպիկ ես:

(Թրոնիլիս, որ կը պատրաստուէր համբուրել Հեկէնը, յանկարծ կ'ընկրկի):

ՓԱՐԻՍ.— Մտիկ ըրէ, Թրոնիլիս, անաւտիկ մեր մեծամեծները, որ կու գան փակելու պատերազմին դարպասները...: Անոնց ատիկ համբուրել Հեկէնը: Այդ համբուրը հոշակաւ որ պիտի դարձնէ քեզ: Ձե՞ս փափաքիր հոշակաւ որ մէկը դառնայ ապապային:

ՔՐՈՒԼԻՒՄ— Ո՛չ: Ես կ'ուզեմ անծանօթ ճնայ:
ՓԱՐԻՍ— Հոչակաս որ շե՛ս ուզեր բլլայ: Ձե՛ս ուզեր հարուստ եւ պօրուս որ բլլայ:
ՔՐՈՒԼԻՒՄ— Ո՛չ: Կ'ուզեմ աղքատ ու տղեղ բլլայ:
ՓԱՐԻՍ— Ձգվ, որ վերջացնե՛մ...: Որպէսզի բոլոր կիները քու տրամադրու—
 թեանդ տակ ու նենայիր:
ՔՐՈՒԼԻՒՄ— Նոյնիսկ մէկ հաս շեմ ուզեր ու նենայ անոնցմէ, ո՛չ իսկ մէկ հաս:
ՓԱՐԻՍ— Ահա ասիկ մեր ծերակուտականները: Որոչէ՛ կամ գու՛ն Հելէնը կը համբուրես անոնց առջեւ եւ կամ կը համբուրեմ գայն քու առջեւ:
 Կը նախընտրես, որ ե՛ս համբուրեմ: Շատ լաւ: Նայէ...: Օ՛, այս ինչ անեման համբոյր տուիր ինձի, Հելէն:
ՀԵԼԷՆ— Համբոյրը, զոր պատրաստուած էի տալ Քրոիլի սին:
ՓԱՐԻՍ— Ձեռ գիտեր, թէ ինչ կորսնցուցիր, մանչա: Օ՛, կը մեկնես, գիշեր բարի:
ՀԵԼԷՆ— Օր մը պիտի համբուրուիս, Քրոիլի ս: Ես պիտի փոխադարձեմ քու համբոյրդ: (Քրոիլի ս կը մեկնի): Քրոիլի՛ ս:
ՓԱՐԻՍ (Բիչ մը զղայիմ)— Շատ բարձր կը պտտաս, Հելէն:

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՀԵԼԷՆ, ՏԷՄՈՔՈՍ, ՓԱՐԻՍ

ՏԷՄՈՔՈՍ— Հելէն, գայրկեան մը: Եւ լաւ նայէ ինձի: Ձեռքիս մէջ ունիմ չբաշալի թռչուն մը, զոր պիտի արձակեմ...: Հոն, կը տեսնե՛ս...: Ծիչդ այդպէս...: Մազերդ յարդարեւ եւ ազու որ մը ժպտէ:
ՓԱՐԻՍ— Ձեմ հուսկեար, թէ ինչու թռչունը աւելի լաւ պիտի թռչի, եթէ Հելէնին մազերը յարդարուին եւ ինչ ազու որ մը ժպտի:
ՀԵԼԷՆ— Բոլոր պարագաներուն, այդ յարդարանքները սեւ է մէկուն գիտաս շէն պատճառեր:
ՏԷՄՈՔՈՍ— Մի շարժիր...: Մէ՛կ, երկու՛, երե՛ք: Եղա՛ւ: Կրնաս մեկնել...
ՀԵԼԷՆ— Ո՛ր է թռչունը:
ՏԷՄՈՔՈՍ— Անիկա այն թռչուններէն է, որ գիտէ ինքզինք անտեսանելի դարձնել:
ՀԵԼԷՆ— Յաջորդ անգամ պահանջի անկէ իր գաղտնիքը:
 (Հելէն դուրս կ'իջնի):
ՓԱՐԻՍ— Այս Ի՛նչ ինչպատակու թիւն է:
ՏԷՄՈՔՈՍ— Հելէնի գէմբին մասին երգ մը կը յօրինեմ: Պէտք ունէի լաւ մը գիտել զինք եւ յիշողութեանս մէջ գրոշմել ժպտան ու գանգուրները: Եզաւ: Յաջողեցայ:

ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՏԷՄՈՔՈՍ, ՓԱՐԻՍ, ՀԷՔԻԻՊ, ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒԲՍԷՆ, ԱՊՆԵՍՍ, ԵՐԿՐԱԶԱՓԸ, ՔԱՆԻ ՄԸ ԾԵՐՈՒՆԻՆԵՐ

ՀԷՔԻԻՊ— Վերջապէս պիտի փակե՞ք դարպասները մեզի համար:
ՏԷՄՈՔՈՍ— Անչո՛ւ չու որ ոչ: Այս գիշեր իսկ կրնանք պետք ու նենայ գանձուք վերատին բանալու:

Հէֆիօ՞Պ.— Հեքթորը կ'ուզէ, որ փակուի անոնք: Ան պիտի փորձէ ապահո-
գիչ նաև: Փրիտմի համաժողովի նր:

ՏէՄՈՔՈՍ.— Վերջը կը տեսնուի ինք: Մի և կուզմէ՝ արդէն անակնկալ ժը վերա-
պահած եմ Հեքթորին:

ՓՈՔՐԻԿՆ, ՓՈՒԻՔՍԷՆ.— Դարպասները ո՞ր կ'տուփնորդեն, ժամա:

ԱՊՆԷՈՍ.— Պատերազմի, աղջիկս: Երբ բաց տեսնես զանոնք, ըսել է պատե-
րազմ կայ:

ՏէՄՈՔՈՍ.— Բարեկամներս...

Հէֆիօ՞Պ.— Պատերազմ կամ ոչ, ան՛նթեթ է ձեր այդ խորհրդանշանը: Այսպէս
ժիտ բաց պահուած զրան այդ երկու փեղկերը շատ անխնամ երե-
ւոյթ ժը կը պարզեն: Բոյրը չուներ հոն կանց կ'առնեն:

ԵՄԿՐԱՋԱՓԸ.— Հարցը կոկիկու թեան չի վերաբերի: Կը վերաբերի պատե-
րազմին եւ աստուածներուն:

Հէֆիօ՞Պ.— Ես այ ճիշդ նոյնը կ'ըսեմ. աստուածները չեն գիտեր փակել իրենց
դուռները:

ՓՈՔՐԻԿՆ, ՓՈՒԻՔՍԷՆ.— Ես դուռները լաւ կը գոցեմ, այնպէս չէ՞, ժամա:

ՓԱՐԻՍ (Խամբուրեյով փոքրիկն Փալիսէնի մատները).— Նոյնիսկ ժառ-
ներդ անոնց չես կը գոցես, անուշիկս:

ՏէՄՈՔՈՍ.— Կրնայի՞ վայրկեան ժը լուռ թիւն պահանջել, Փարիս...: Ապնէոս,
եւ դու ն' երկրաչափ, եւ դու ք' իմ բարեկամներս, ես ձեզ ժամանակէն
ստալ հոս կանչեցի, որպէսզի դու ժարենք ձեր առաջին խորհրդածո-
ղովը: Անկէկա լաւ նշան ժրն է անոր համար, որ այս առաջին խորհրդ-
զածողովը ոչ թէ հրամանատարներու խորհրդածողով ժրն է, այլ՝
ժառանգականներու: Որովհետեւ, պատերազմներու ժամանակ չի
բաւեր ժիայն գինու որականներուն գէները իւր զոռել: Անհրաժեշտ
է նաև իրենց ողբի որով թիւն վառ պահել: Գրոհի պահուն իրենց
զեկավարներուն Ֆիդիքական գինովու թիւնը այնպիսի՝ գինի է ժրն է,
որուն թունը հի թը յոյներուն հանդէպ անզոր պիտի ժնայ, եթէ
կրկնապատկուած չըլլայ բարոյական գինովութեամբ, զոր ժենք՝
բանաստեղծներս պիտի ժատուակենք: Քանի որ տարիքը թոյլ չի
տար ժեզի կուռելու, կրնանք առնու աղն ներշնչել, որ կոխի բատանայ
վայրագ ընթացք ժը: Կը տեսնեմ, որ այս ժասին ըսելիք ու նիս, Ապ-
նէոս, խառք թեզի կը պատկանի հիմա:

ԱՊՆԷՈՍ.— Այո, ու նիմ: Ռազմերդ ժը պետք է ժեզի:

ՏէՄՈՔՈՍ.— Եստ ճիշդ է: Պատերազմը կը պահանջի ռազմերդ ժը ու նենայ:

ՓԱՐԻՍ.— Յարգ նման բանի ժը պետք չենք ու նեցած:

Հէֆիօ՞Պ.— Պատերազմը ինչը բաւական զօրեղ ձեւով ժը կ'երզի արդէն...

ԱՊՆԷՈՍ.— Մենք ռազմերդի պետք չենք ու նեցած, որովհետեւ ժիւնչեւ չիմա
բարբարոսներու զէմ ժիայն պատերազմած ենք: Այդ պատերազմնե-
րը որսորդու թեան կը նմանիին: Փողը բաւական է: Յոյներուն չես
ժենք կը զանուիք պատերազմական տարրեր աստիճանի ժը վրայ:

ՏէՄՈՔՈՍ.— Եստ ճիշդ է, Ապնէոս: Յոյները ամէն ժարգու զէմ չեն պատե-
րազմիր:

ՓԱՐԻՍ.— Մենք արդէն ունինք ազգային քայլերդ ժը:

ԱՊՆԷՈՍ.— Այո, ու նիմք: Բայց անիկա խաղաղութեան քայլերդ է:

ՓԱՐԻՍ.— Կը բաւ է ծամածոութեամբ ու կապկու ժներով երկու խաղաղու-
թեան երդ ժը, որպէսզի անիկա ռազմերդ ժը դատնայ...: Արդէն
ուրիշ ինչ որակ ունին ժեր երզին բառերը:

ԱՊՆԷՈՍ.— Դու ն լաւ կը ճանչես զանոնք. անզոր բառեր են, ոպի չկայ
անոնց ժէջ.

Մենք ենք արտիճ հնձուորնները,
Եւ Բաժնորդները՝ խաղողի երկրի...

ՏԷՄՈՔՈՍ— Առաւելագոյնս կրնանք զայն շամարել ընդդէմներու դէմ
գրուած ուղղակիք մը: Դուք չէք կրնար վախճանել սպարտացիները՝
սպառնայով անոնց ցորեանի դաշտերուն:

ՓԱՐԻՍ— Երգել այդ երգը՝ մեռելիք նիգակ մը, եւ սաքեբուդ՝ մեռել մը, եւ այն
աստե՛ն դու ն պիտի զգաս անակնկալք:

ՀԷՔԻԻՊ— Կոյ շարի նշ րատը, միշտ կայ անիկա:

ՓԱՐԻՍ— Եւ նո՛ւնք րատը եւ ս: Պատերազմը շատ կը սիրէ այն րատը:

ԱՊՆԷՈՍ— Ինչո՞ւ վիճի՞նք, երբ Տէմոքոս երկու ժամէն կրնայ նոր ուղղակիք
մը յօրինել մեզի:

ՏԷՄՈՔՈՍ— Երկու ժամը շատ քիչ է:

ՀԷՔԻԻՊ— Մի վախճար. ասիկա հարկ եզածէն աւելի ժամանակ է: Ուղղակիք—
դի մը զերէն ետք, անիկա կրնայ նաեւ քայլերդի մը դերը կատարել,
իսկ քայլերդէն ետք՝ ծիսական մեղեդիի մը: Այն պահու՛ն, որ պատե-
րազմը յայտարարուի, անկարելի կ'ըլլայ այնչա՛ս զուգել քանաստեղծ-
ները: Անոնք զիս կը շարունակէ ըլլայ յաւազոյն թմբու կը:

ՏԷՄՈՔՈՍ— Եւ ամէնէն օգտակարք, Հէքիւ պ: Ձեռ գիտեր, թէ ի՞նչ իմաստուն
խօսքեր կ'ըսես: Եւ կը ճանչնամ պատերազմը: Երբ պատերազմը չկայ
եւ փակ են անոր զարկանները, կրնայ ամէն օր նախատել զայն ու
նշուակել: Անիկա կ'արձամարտէ իրազարու թեան աստե՛ն գրական օր-
ւած թշնամանքները: Բայց երբ ներկայ է, զգայուն է իր հպարտու-
թիւնը: Ձեռք կրնար մեր ու զամին պէս օգտուիլ անիկ, բացի այն
պարագայէն, երբ զովքը կը չիտենք ու կը շոյենք զայն: Կրնան
ատաքեղութիւն մը պատկել անո՞նք միայն, որոնք գիտեն խօսիլ, գրել,
ու ներբողել պատերազմը, որոնք բոլոր ժամերուն պաշտել զայն,
զոմիլ իր հակայ մարմինին յատակ կամ տարտամ մասերը, այլապէս
զուր կը մնան անոր շնորհներուն ծիրէն: Տեսէք սպաները, «Քիչնա-
միին զէ՛մ քաջ, իսկ պատերազմին զէ՛մ վատ»: ասիկա է Տէմարիտ հը-
րամանասարներուն նշանաբանը:

ՓԱՐԻՍ— Այդ կը նշանակէ, որ դու ն արդէն զազափարք մը ունի՞ս քու երգիք
մասին:

ՏԷՄՈՔՈՍ— Հրաշալի զազափարք մը, զոր դու ն պիտի շահնաս ոեւէ մէկէն
աւելի...: Մաշած զազափարք մըն է, Միտի զի մտկերուն մէջ, Կորկոնի
չրթներուն պէս: Պատերազմի զէ՛մքը եւ պիտի շամեմատեմ Հելլէի
զէ՛մքին հետ: Պատերազմը ուրախ պիտի ըլլայ այն նմանութեան:

ՓՈՔՐԻԿԸ ՓՈՒԹՍԷՆ— Մամա, ի՞նչ բանի կը նմանի պատերազմը:

ՀԷՔԻԻՊ— Հելլէն չօրքու ըրից:

ՓՈՔՐԻԿԸ ՓՈՒԹՍԷՆ— Ուրեմն շատ գեղեցիկ է:

ՏԷՄՈՔՈՍ— Լաւ, օրակարգը աւարտած է: Դուք կ'ու՛նենաք մեր ուղղակիքը:
Դու ն, Երկրաշափ, ինչո՞ւ մտատանջ կ'երեւիս:

ԵՐԿՐԱՉԱՓԸ— Որովհետեւ ուղղակիքն աւելի կարեւոր չարքեր կան, շատ
աւելի հրամայական:

ՏԷՄՈՔՈՍ— Կը կործնիր, որ մենք պիտի խօսիլի՞նք մեռողներու հարցի՞ն մա-
սին, ստայօզ լուրերուն ն, վայրագ պատմութիւններուն եւ այլնի՞ մա-
սին:

ԵՐԿՐԱՉԱՓԸ— Աւելի ճիշդը՝ մտկործանումն:

ՀԷՔԻԻՊ— Վերաւ որակա՞ն մակդիրներուն:

ԵՐԿՐԱՉԱՓԸ— Իրենց նիգակները արձակելէ առաջ, յայն մարտիկները իբր-
բու նախասայլից մակդիրներ կը շարունակեն...: Դուք օ՛ր գամբիկ՝ կը
բու նախասայլից մակդիրներ կը շարունակեն...:

պտտան, ևզան որդիներ՝ կը պտտան... Այդպէս կը նախատեսն գիրար ևւ իրաւունք ունին: Գիտեն, որ ժարմինը աւելի խոցելի է, երբ անձնասիրտ թիւր արթուն է: Ձիւնու որներ, որոնք ճանչցուած են իրենց պաղարիւնութեամբ, անմիջապէս կը կորսնցնեն իրենց այդ առաքելութիւնը, երբ նման մակդիրներով դիմաւորեն գիրենք ժարդիկ: Մենք՝ տրոյապաշտներս խիստ պակասը ունինք այդ պիտի մակդիրներու:

ՏԷՄՈՔՈՍ.— Երկրաշափը իրաւունք ունի: Երապէս մենք միակ ժողովուրդն ենք աշխարհի մէջ, որ սպաննել առաջ չենք անտրդէր մեր թշնամիները:

ՓԱՐԻՍ.— Ձե՞ս կարծեր, որ քաղաքացիներուն փոխադարձ անարգանքը բաւարար է:

ԵՐԿՐԱԶԱՓԸ.— Բանականները պէտք է բաժնեն քաղաքացիներուն ն տաճած նոյն ասելութիւնները: Գիտես, այս կէտին մէջ անոնք խիստ վշատեցուցիչ են: Երբ տոանմին մնան, իրենց մամանակը կ'անցընեն իրարու վրայ զմայլելով: Իրենց ճակատի դիմերը շուտով կը դառնան իրական և կրայրութեան միակ նշանը աշխարհի մէջ: Այնքան բնական, որ երբ պատերազմի թատերարեմբ լի է նման փոխադարձ նկատու մներով, ատելութիւնը կը շեղանայ դպրոցներէն, սայուններէն ու ատեւատրի շուկաներէն: Եթէ մեր գիւնու որները մակդիրներու պատերազմի մէջ չկարենան առնուազն հաւասար ըլլալ յոյներու չեւ, անոնք պիտի կորսնցնեն նախատիւններու ևւ գրպարտութեան ամէն ճաշակ, չեւտարար և՛ անխուսափելիօրէն, պատերազմի ամէն ճաշակ:

ՏԷՄՈՔՈՍ.— Առաջարկը բնզու նուած է: Այս պիշիւր իսկ մենք պիտի կազմուկերպենք մրցում մը:

ՓԱՐԻՍ.— Ես գիւնու որները բաւական հասուն կը համարեմ, որպէսզի առտոնմինն գտնեմ այդ մակդիրները:

ՏԷՄՈՔՈՍ.— Կը սխալիս: Դու ն, որ ճարպիկ ես, դու ն միմակը կրնա՞ս չակառակորդը գգնանոց մակդիր գտնել:

ՓԱՐԻՍ.— Կը կարծեմ:

ՏԷՄՈՔՈՍ.— Դու ն ինքզինքդ կը խարեն: Կանգնէ Ապնէոսին դիմաց ևւ սկսէ:

ՓԱՐԻՍ.— Ինչո՞ւ, անպայման Ապնէոսին դիմաց:

ՏԷՄՈՔՈՍ.— Փորեկ ևւ ոտքերը ծուռ ըլլալու ն՝ ահա ստիթ կու տայ մակդիրներ ճարելու:

ԱՊՆԷՍ.— Դե՞ս, ուրեմն խօսէ՛, կարկանդակի մըու բը:

ՓԱՐԻՍ.— Ո՛չ, Ապնէոս չի ներշնչեր: Դու ն, թերեւս:

ՏԷՄՈՔՈՍ.— Ե՞ս: Հոյակա՞պ: Դու ն պիտի տեսնես, թէ ինչ կը նշանակէ տեղուոյն վրայ կազմուած մակդիրը: Հաշուէ տասը քայլ...: Հասայ...: Ոկու...

ՀԷՔԻԻՊ.— Էս նայէ Տէմոքոսին ևւ կը ներշնչուի:

ՓԱՐԻՍ.— Մե՛ր մակարոյն: Ազտառ ոտքերով բանաստեղծ:

ՏԷՄՈՔՈՍ.— Վայրկեան մը...: Սխալներուն առաջըր առնելու համար յապիտի ըլլար բռնի, թէ ով է մեզի չեւտուողը:

ՓԱՐԻՍ.— Ծիչդ է, իրաւունք ունիս...: Տէմոքոս, արիւնամած ցուլի աչք, արուեստական ծառ:

ՏԷՄՈՔՈՍ.— Քերականականօրէն ճիշդ է բաճոց, բայց խորքով շատ պարզուեակ է: Արուեստական ծառ կոչուիլը ինչո՞վ կրնայ փրփուր բերել շրթներուս ևւ զիս մզել սպաննելու: Արուեստական ծառ մակդիրը բոլորովին անիմաստ է:

- ՀէՔԻՓՊ**— Ան ջեղ կոչեց նաեւ արի նամած ցուլի աչք:
- ՏէՄՈՔՈՍ**— Արի նամած ցուլի աչքը նախընտրելի է: Բայց դու ն կր տեսնես, թէ ինչպէս կր կոկոզեմ, Փարիս: Փնտել բան մը, որ կարենայ գիտ ընկնել: Ըստ ջեղի, ի՞նչ են իմ թերութիւններս:
- ՓԱՐԻՍ**— Ինչն վատ մըն էս, շունչդ գարշահոտ է եւ անտաղանդ էս:
- ՏէՄՈՔՈՍ**— Միտքդ կոխի փնտտել է կարծես:
- ՓԱՐԻՍ**— Կր փորձեմ ջեղի նամոյք պատճառել:
- ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒՔՍԷՆ**— Մամա, ինչո՞՞: Տէճոքոս Հորեղբայրը այդպէս կր յանդիմանենք:
- ՀէՔԻՓՊ**— Որովհետեւ զէզձանիկի մը պէս կր զեղզեղ, սիրելիս:
- ՏէՄՈՔՈՍ**— Ի՞նչ բոխք:
- ՀէՔԻՓՊ**— Ըսի, որ դու ն պեղձանիկ մըն էս: Ըսի, որ էթլ պեղձանիկները ունենային զիշտախնկներու յիմարութիւնը, յատկենտութիւնը, ազնուութիւնն ու գարշահոտութիւնը, այն ատեն զեղձանիկ մը կ'ըլլային:
- ՏէՄՈՔՈՍ**— Նայէ, Փարիս, մայրդ աւելի զորսուր է ջեղմէ, օրինակ առ իրմէ: Եթէ Հէքի պ խրատանիք զինքու օրի վարժութեան համար օրական մէկ մամ յատկանցնէ, մենք կրնանք զերազանց ըլլալ մակդիրներու գործածութեան մէջ: Իսկ ինչ կը վերաբերի ռազմերգի մը յօրինման, յեմ գիտեք, թէ ինչ կր ստացուի, էթլ այդ պարտականութիւնը էս իրեն յանձնելիք...
- ՀէՔԻՓՊ**— Եթէ կ'ուզես: Բայց ես պիտի չըսեմ, որ պատերազմը Հելէնիսն կը նմանի:
- ՏէՄՈՔՈՍ**— Ըստ ջեղի արտ է կը նմանի պատերազմը:
- ՀէՔԻՓՊ**— Կ'ըսեմ՝ երբ գործուաներք փակուին...

ՀԻՆԳԵՐՈՐԻ ՏԵՍԱՐԱՆ

- Նոյն անձերը. Փրիսմ, Հեքրոք, ապա՝ Անորոմաք, ապա՝ Հելէնը:
- Պատճենը զոցուելու ատեն, Անորոմաք մէկ կողմ կը բաշտ փոքրիկն Փոլիքսէնը եւ անոր կը փսփայ պարտականութիւն մը կամ գազանիք մը:
- ՀեՔՔՈՐ**— Տեղի պիտի ունենայ:
- ՏէՄՈՔՈՍ**— Կր կարծէ՞ք, որ պատրաստ ենք հանդիսութեան:
- ՀէՔԻՓՊ**— Ինչպէ՞ս թէ ոչ. ծիծիկները կր լողան ձիթախի գին մէջ:
- ՀեՔՔՈՐ**— Ուրե՞մն:
- ՓՐԻՍՄ**— Հեքթոր, մեր բարեկամներու ն ըսել ու զածը այն է, որ պատերազմը անխուսափելի է: Ըստ մտածել: Անոնք սխալ չեն: Եթէ այդ գարգառները փակես, թերեւս պիտի ըլլայ մէկ վայրկեանէն զարձակ բանալ զանոնք:
- ՀէՔԻՓՊ**— Կ'արժէ գուրգուրայ խաղաղութեան մէկ վայրկեանին վրայ անպամ:
- ՀեՔՔՈՐ**— Հայր, դու ն պիտի չես հասկնաս սակայն, թէ ինչ կը նշանակի խաղաղութիւնը այն մարդոց համար, որոնք ամբողջովն վեր պատերազմ կը մղեն: Անոնք պիտի նմանէին ջրամուկներու ն կամ աւազախրած մարդոց, որոնք մտակցած են յատկապէս: Զգէ՛ որ մեր ռազմերը զինք խաղաղութեան կարճագոյն ճամբու ն մէջ, հպիւնք անոք՝ մինչեւ անպամ մեր սարերու ն մտաներով:
- ՓՐԻՍՄ**— Հեքթոր, մտածել, որ խաղաղութիւնը բարձր ջողաքին մէջ արձանկէ նոյնքան մեծ յանցանք պիտի ըլլար, ո՛րքան էթլ թոյն արակէնք

անոր վրայ: Պիտի նշանակել տակաւին թայցնել մեր գրահները: Ասա-
զազու թիւն բառին հետ դու ն գուր առիթ պիտի տայիր յիշատակնե-
րու, գուրդու բանքներու եւ յոյսերու: Ձկնու որները պիտի շտապէին
խաղաղութեան հասցը գնելու, խաղաղութեան գինին բժշկելու եւ
համբուրելու խաղաղութեան կիւրք, եւ մէկ ժամէն զանոնք պիտի
գնէիր պատերազմի դառն իրականութեան առջեւ:

ՀԵՔԹՈՐ.— Պատերազմը տեղի պիտի չունենայ:
(Սուսահանգիստի կողմէն աղաղակներ կը լսուին):

ՏԷՄՈՒՔՈՍ.— Տեղի պիտի չունենայ: Ո՞չ: Մտի՛կ բրէ:

ՀԵՔԹՈՐ.— Փակենք դարպասները: Հոս է, որ քիչ և ոչ պիտի հանդիպինք յոյ-
ներու ն: Բանակցութիւնը յայնանպէս դժուար պիտի բլլայ: Հաս է
որ զանոնք բնագունինք խաղաղ պայմաններու մէջ:

ՓՐԻԱՄ.— Չաւակս, արդևօք մենք վստահ ենք, որ թոյլ պիտի ասանք յոյնե-
րու ն նաւերէն վար իջնել:

ՀԵՔԹՈՐ.— Յոյները անպայման պիտի իջնեն նաւերէն: Ողիտես սի հետ մեր
տեսակցութիւնը պիտի բլլայ խաղաղութեան մեր վերջին առիթը:

ՏԷՄՈՒՔՈՍ.— Յոյները նաւերէն պիտի չիջնեն: Թնդբայ առարկայ է մեր պա-
տիր: Ողջ աշխարհին մէջ նշտակ պիտի գտնանք:

ՀԵՔԹՈՐ.— Եւ դու ն կը ստանձնես Մերակոյտին խորհուրդ տալու պատաս-
խանատուութիւնը, որ առնել պատերազմ նշանակող քայլ մը:

ՏԷՄՈՒՔՈՍ.— Ե՛ս: Երբե՛ք: Ի՞նչն սխալ բնարութիւն մը կատարեցիր: Մտե-
ցի՛ր, Պի գիրիս: Հոս կը սկսի քու առաքելութիւնդ:

ՀԵՔԹՈՐ.— Ո՞վ է այս առարկանը:

ՏԷՄՈՒՔՈՍ.— Ժողովուրդներու իրաւունքները պաշտպանող կենդանի մե-
ծագոյն գիտակիր: Մեծ բախտ է մեզի համար անոր Տրոփազա գտնու-
ելու սխալը: Չես կրնար ըսել, որ ան կողմնակալ վկայ մըն է: Պար-
զապէս չէզոք անձնաւորութիւն մըն է: Մեր Մերակոյտը պիտի բաժնէ
անոր կարծիքը, կարծիք մը, զոր վազը պիտի բաժնեն բոլոր ժողո-
վուրդները:

ՀԵՔԹՈՐ.— Իսկ ի՞նչ է քո՛ւ կարծիքդ:

ՊԻՒՋԻՐԻՍ.— Անձամբ տեսած բլլայով տեղեկագիրը եւ անոր յաջորդած
հարցաքննութիւնը, իմ կարծիքս, իշխաններ, ա՛յն է՝ որ յոյները յան-
ցաւոր են Տրոփազայի հանդէպ, գրժած բլլայով միջազգային երեք
օրէնք: Թոյլ տայ, որ իջնեն նաւերէն՝ պիտի նշանակէր ճշտութեան
թեւան ձեր հանգամանքը կորսնցնել, որ այս ընդհարում մին մէջ մեզի
պիտի արժէր միջազգային համակրանքին կորուստը:

ՀԵՔԹՈՐ.— Կրնա՞ս աւելի պարզել միտքդ:

ՊԻՒՋԻՐԻՍ.— Առաջին յոյները իրենց գրոշակը պարզած են ցուու կին եւ ոչ թէ
կայմին վրայ: Բազմանաւ մը, սիրելի իշխաններ եւ պաշտօնակիցներ,
ցուու կին վրայ կը բարձրացնէ իր գրօշակը միայն ա՛յն տտեւ, երբ
արջաւ սխալաբան յաւ մը կ'ողջունէ: Քաղաքի մը եւ անոր բնակ-
չութեան ուղղուած անարդարեւ ստոյգ օրինակ մըն է ասիկա: Այս
կապակցութեամբ՝ մենք արդէն նտիրիթաց մը ունինք: Անցեալ
տարի յոյները, Օֆէայի նաւահանգիստը մուտք գործած ատեն,
իրենց գրօշակը պարզած էին ցուու կին վրայ: Հակահարուածը ուժգին
էզաւ: Օֆէան պատերազմ հռչակեց իրենց ողմ:

ՀԵՔԹՈՐ.— Ի՞նչ պատահեցաւ:

ՊԻՒՋԻՐԻՍ.— Օֆէան պարտուեցաւ:

ՀԵՔԹՈՐ.— Հոյակա՛պ:

ՊԻՒՋԻՐԻՍ.— Բայց ազգի մը ոչնչացու մը ոչինչով կը փոխէ իր գիրքին բարո-
յական եւ միջազգային առաւելութիւնը:

ՀԵՔՔՈՐ.— Լաւ : Յետո՞յ :

ՊԻՒՋԻՐԻՍ.— Երկրորդ. Տրոփաղայի շուրերը թափանցելով՝ յունական նա-
ւատորմից որդեգրած է պատերազմելու ուղղակի ձևը : Մեր վերջին
խորհրդածողովին մէջ հարց եղած էր, որ այս միջոցառումը արձա-
նագրուի պաշտպանողական-յարձակողական բաժինին մէջ : Ուրախ
էի, որ այս կեցումը տուին իր խիստական անունը : Ասիկա ծովա-
յին բախումներու համար բնորոշում չուր բացասիկ ձև մըն է, որ
ինքնին համազոր է պաշարման : Այսինքն՝ կը յիշեցնէ առաջին կարգի
թերացում մը : Հոս ալ ունիք նախընթաց մը : Հինգ տարի առաջ,
յունական նաւերը որդեգրեցին այս ձևը, խարխախ նետկող Մա-
նիկղիայի մէջ : Այն ատեն Մանիկղիան անսպասելիորէն պատերազմ
հռչակած էր :

ՀԵՔՔՈՐ.— Ետե՞նց ա՛, պատերազմը :

ՊԻՒՋԻՐԻՍ.— Ո՛չ, կորսնցուց : Իր սահմանին մէջ քար քարի վրայ շմաց :
Բայց ի՞նչ անսովոր նա կանգուն է :

ՀԵՔԻԻՊ.— Ատոր համար կը շնորհուրեմ քեզ : Ակոսած կինք վախնալ :

ՀԵՔՔՈՐ.— Վերջացու՛ր :

ՊԻՒՋԻՐԻՍ.— Երրորդ թերացու մը նուր ծանրակշիւն է : Յունական նաւերէն
մէկը խարխախ նետած է առանց արատութեան, գաւազբարար :
Անունը նաւապետը, Օյաբա, յոյներուն ամէնէն անօրէն ու դաժան
ժարդը, գայթակղայից ու գրգռի : Ընդ որ մտնէ քաղաք, պատայով,
որ կ'ուզէ սպաննել Փարիսը : Միջոցառման առումով, սակայն, այս
թերացումը շատ շնչին բան է : Այս պարագան չէ արձանագրում
արեւազիրքին որեւէ մէկ կէտն :

ՏԵՄՈՔՈՍ.— Տեղեկութիւններ ունեցար : Կացուցիք երկու կէտ նի : Կա՛մ
բնդ ունի, կա՛մ փոխադարձ նախատիւրք : Ընտրէ՛ :

ՀԵՔՔՈՐ.— Օնի՛ն, գնա՛ տես Օյաբա : Անխատել չուր բերել գինը :

ՓԱՐԻՍ.— Հոս կը սպասեմ իրեն :

ՀԵՔՔՈՐ.— Լաւ կ'ըլլայ, որ դու ն պայտար մնաս, մինչեւ որ ձայն տամ քեզի :
Իսկ դու ն, Պի, գիրիս, գիտցիր, որ մէք քաղաքը որեւէ ձև ու յոյներէն
նախատուած չի գղար ինքզինք :

ՊԻՒՋԻՐԻՍ.— Չեմ գարձանար : Տրոփաղայի անեղծ հարատութիւնը առաւ-
պելական վարի մը ունի ամբողջ աշխարհի վրայ :

ՀԵՔՔՈՐ.— Հիմա, անմիջապէս ինձի պիտի ձարես գաղափար մը, որ թոյլ տայ
մէք Մերակոյտին բռնու, թէ մէք այցելու ներու ն կողմ որեւէ թերա-
ցում թոյլ տրուած չէ, իսկ մեզի՝ անպարտելի հարատեւում, արատել
գիրենք ընդ ունի իրքեւ ՚իբ :

ՏԵՄՈՔՈՍ.— Այս ի՞նչ խեղկատակութիւն է :

ՊԻՒՋԻՐԻՍ.— Իրականութեան հետ կապ չունի ատիկա, Հերթոր :

ՀԵՔՔՈՐ.— Միտելի Պի, գիրիս, մենք բոլորս գիտենք, որ կրեւակայութիւնը
գորոցներուն քորեղայոյնն է : Բանաստեղծ մը կրքեւ իցէ պատուովն
չէ կրցած մեկնարանել բնութիւնը այնքան, որքան օրենսդիր մը
կրցած է մեկնարանել ճշմարտութիւնը :

ՊԻՒՋԻՐԻՍ.— Ատիկա ի՞նչ խեղճութիւն գեմ է :

ՀԵՔՔՈՐ.— Քու խիղճը տեսած է անկու մը Օֆ(այի, Մանիկղիոյ, եւ հիմա նայ
ձեռ ու կ'ուզես Տրոփաղայի անկու մի՞նչ նաեղիսատես ըլլայ :

ՀԵՔԻԻՊ.— Այս, ուրիշ ի՞նչ ձեռ ու կ'ուզես, որ տեսնէ : Ի վերջոյ սիրաքիւզցի
է :

ՀԵՔՔՈՐ.— Կ'ազաչեմ, Պի, գիրիս, ինչոյն առաքեալ է կրկու ժողովուրդներու
կեանքը, օգնել՝ մեզի :

ՊԻԻԶԻՐԻՍ— Հիմարտութիւնը միակ օդնութիւնն է, զոր կրնամ քննել մեզի:
ՀԵՔՔՈՐ— Ճի՛շդ այդ: Գաի՛ր ճիմարտութիւն մը, որ փրկել մեզ: Ի՞նչ է ճիմարտութեան օգուտը, եթէ անիկա անմեղանքուն զէնքը պիտի չըզտուանայ: Գարբնէ մեզի ճիմարտութիւն մը: Իսկ եթէ ի մի՞նակի չես, ես կրնամ մէկ բան ըսել քեզի, շատ պարզ բան մը, որ պատերազմի ամբողջ տեսչութեան հոս պիտի պահենք քեզ:

ՊԻԻԶԻՐԻՍ— Ի՞նչ:
ՏԷՄՈՒՔՈՍ— Հանգամանքը կը շարաշահեն, Հեքթոր:
ՀԵՔՔԻԻՊ— Երբ պատերազմի բնթացքին մարդոց իրաւունքը կը բանտարկենք, պատճառ մը չի մնար, որ չկարծեսանք իսկուհի որդիք մը բունտարկել:

ՀԵՔՔՈՐ— Ես ըսելիքս ըսի, Պիզիրիս: Ես երբեք չեմ գրծած ո՛չ խոստումներս, ոչ ալ սպասեալիքներս: Կա՛մ այս պահակներով տարիներով կ'արզեշտփակեմ քեզ, կամ ալ այս դիչեր կը մեկնես սակեղններով բռնեալ որ: Այս բոլորը իմանալէ ետք, առաջագրուած հարցը նորէն ուշքէ անցուր, եւ ամենէն տնկողմնակալ մտաւեցու մով:

ՊԻԻԶԻՐԻՍ— Բնական է, որ լուծու մենք չեն պակսիր:
ՀԵՔՔՈՐ— Ես վստահ էի, որ այդ եզրակացութեան պիտի յանդէր:
ՊԻԻԶԻՐԻՍ— Ի՞նչ կը վերաբերի առաջին թերացումին, չե՞նք կրնար, օրինակի համար, մեկնարանել արջառներով բռնեալ որ նաւուս ողջոյնը՝ նաւաստիներուն կողմէ իբրեւ յարգանք ծովամերձ բերրի շրջաններուն:

ՀԵՔՔՈՐ— Տրամարանական է: Ասիկա, իր ամբողջութեանը մէջ, ծովուն կողմէ հոգին եղած ողջոյնն է:
ՊԻԻԶԻՐԻՍ— Կրնայ ըլլայ, որ արջառ փոխադրող նաւը միայն ցուցերով բռնեալ որ ըլլայ: Այդ պարագային, այս մէկը յարգանք ըլլալէ աւելի՛ փառաբանք մըն է:

ՀԵՔՔՈՐ— Ճի՛շդ, դուն հասկցար զիս: Վերադարձունք մեր տեսակետին:
ՊԻԻԶԻՐԻՍ— Ի՞նչ կը վերաբերի ճակատի կազմութեան, տոնկա շատ դիւրաւ կրնայ խոստում մը նշանակել կամ պատերազմի հրահրում մը: Կի՛նները, որոնք զուակ կ'ուզեն ունենայ, պիտեցնեն կ'ընդունին իրենց ամուսինները եւ ոչ թէ իրենց կողերէն:

ՀԵՔՔՈՐ— Անտարկեկի օրինակ:

ՊԻԻԶԻՐԻՍ— Այնքան ատեն, որ յոյները իրենց նաւերու ցուցերուն քանդակուած հակայ յաւերժանարար ունին, կրնանք ըսել, որ անոնց կողմէ տրոփազացիներուն ներկայացող նաւը ոչ թէ նաւային միայն որ մըն է, այլ յաւերժանարար ինքը՝ իբրեւ բեղմնաւորութեան խորհրդանշան: Այս իրականութիւնը նախատիքին ճի՛շդ հակասակն է: Կին մը, որ մօրէ մերկ եւ զրկարաց կ'առաջանայ զէպի քու կողմը, սպասուածի մը չէ, այլ՝ մատուցում մը: Ամէն պարագայի, մի՛նչի մատուցում մը:

ՀԵՔՔՈՐ— Ես այսպէս Տէմոքոս, մեր պատիւը փրկուած է: Ես մտքով քայլք խորհրդակցութիւն մը պիտի ըլլայ Պիզիրիսի մարդոց հետ: Մինչ այդ, Մինոս, շտապէ՛ նաւահանգիստի իշխանութիւններուն մօտ, որ թոյլ տան Ողիտեսի նաւէն իջնել առանց ժամանակ կորսեցնելու:

ՏԷՄՈՒՔՈՍ— Անկարելի կը գտնայ իսկիւն կուսպներու հետ մի՛նչի պատիւի մասին: Անոնք իրապէ՛ս կը շահագործեն այն իրողութիւնը, որ չենք կրնար գիբենք փառ համարել:

ԵՐԿՐԱԶԱՓԸ— Ամէն պարագայի, Հեքթոր, կարգա՛ դամբանական մը: Ասիկա քեզի մտածելի պիտի թա՛ւ: A.R. ©

ՀեճճՈՐ.— Հարկ չկայ գամբանական կարգայու :
ՓՐԻԱՄ.— Բայց գամբանականը հանդիսութեան մաս կը կապէ: Երբ դար-
պանները փակուին՝ յաղթական հրամանատարը պէտք է յարգանք
մատուցանել մեռելներու ն:

ՀեճճՈՐ.— Պատերազմին մէջ ինկողներու ն վրայ կարգացու ան գամբանա-
կանը ապրողներու ն համար կեղծապարիշա ճառ մըն է, հատուցման
պահանջ մը: Ատիկա փաստարաններու ն մտնուպիտու թիւնն է: Ես
չառ փտտա՛ չեմ իմ անմեղութեանս վրայ...

ՏԵՄՈՒՔՈՒ.— Հրամանատարու թիւնը պատասխանատու չէ:

ՀեճճՈՐ.— Ան ա՛յ, ոչ ոք պատասխանատու է: Նո՛յնիսկ աստուածները:
Մնաց որ, ես արդէն արտասանած եմ գամբանականս, մեռնողներու ն
կեանքի վերջին վայրկեանին, երբ, ուղիղապէս ձիթեղներու ն
կոթնած՝ զեռ կրնային քիչ մը տեսնել ու յսել: Ես ձեզի կրնամ կրկ-
նել, ինչ որ ըսի անոնց: Փորէն վերաւ որ եւ այքերը շմորած գինու-
րին ըսի. «Էա, սիրելիս, կացու թիւնը շատ այ փտ չէ...»: Լախտի
հարու անոյ կրկու քի բաժնու ան գլուխ մը կրողին ըսի. «Ի՛նչ տղեկ
պիտի ըլլայիր ձեզքու ան այս քիթով»: Եւ իմ պզտիկ ախտապանիս,
որու ն վերաւ որ ձախ թեւէն զեռ արեան վերջին կաթիլը կը հոսեր,
ըսի: «Բախտաւ որ ես, որ ազատեցար ձախ ձեռքէդ...»: Երջանիկ եմ,
որ անոնց ի բաքանչի բին կեանքի տղէն խմել տուի վսեմ կաթիլ մը:
Այս էր ինչ որ կը պահանջէին անոնք, եւ մեռան բմպելով այդ կտ-
թիլը...: Ես աւ ելցնելիք ու բիշ բառ չու իմ: Փակեցէ՛ր դարպասները:

ՓՈՔՐԻԿԻՆ ՓՈՒՄՔՈՒ.— Փոքրիկ ախտապանն այ մեռաւ:

ՀեճճՈՐ.— Այո, սիրելիս, մեռաւ: Ա՛յ ձեռքը վեր բարձրացուց: Ես չտեսայ, թէ
ոյ բոնեց ատող մեռաք: Եւ յետոյ մեռաւ:

ՏԵՄՈՒՔՈՒ.— Կը թուի, թէ մեր հրամանատարը կը շփոթէ մեռնողներու ն
ու զգու ան խօսքը գամբանականին հետ:

ՓՐԻԱՄ.— Ի՛նչ պնդիր, ՀեճճՈՐ:

ՀեճճՈՐ.— Շատ յաւ, շատ յաւ: Պիտի կատարեմ ձեր փափաքը...
(Կը մօտենայ զարպասներու):

ՀեճճՈՐ.— Օ՛, դու ք, որ մեզ չէք յսեր, մեզ չէք տեսներ. մտիկ բրէք. անսէք այս
չքախու մըր: Մենք շահեցանք պատերազմը: Ատիկա բան մը չ'ըսեր.
այնպէս չէ՞: Որովհետեւ դու ք եւս յաղթականներ էք: Բայց մենք
ուղրող յաղթականներն ենք: Հոս է, որ կը սկսի տարբերութիւնը մեր
միջեւ: Ա՛նա թէ ինչու եւ ամօթապարտ կը գգամ ինքզինքս: Վե՛մ
գիտեր, եթէ մեռելներու աշխարհին մէջ քոքարտով մը կը գատորոյ-
նին յաղթական մեռելները: Աւղրողները, յաղթական կամ ոչ, կը կրին
խակական քոքարա, գոյց քոքարա, — իրենց աչքերը: Մենք կրկու աչք
ու նիւք, խեղճ բարեկամներս: Մենք կը տեսնենք արհուր, կ'ընենք՝
ինչ որ կարելի է բնել արհուու ն տակ: Կ'ու տեսնք: Կը խմենք...: Եւ
յու անի լոյսին տա՛կ...: Կը պատկերք մեր կրներու ն հետ...: Նաեւ
ձե՛ր կրներու ն հետ...

ՏԵՄՈՒՔՈՒ.— Հիմա սկստք մեռելները նախատել:

ՀեճճՈՐ.— Այդպէ՛ս կը կարծես:

ՏԵՄՈՒՔՈՒ.— Կա՛մ մեռելները, կա՛մ ողջները:

ՀեճճՈՐ.— Տարբերութիւն մը կայ...

ՓՐԻԱՄ.— Վերջացնե՛մ...: Օ՛, դու ք, որ չէք գգար, չէք շօշափեր, չնշեցէք այս

ՀեճճՈՐ.— Վերջացնե՛մ...: Օ՛, դու ք, որ չէք գգար, չէք շօշափեր, չնշեցէք այս
խու նկր, գպէք այս բնծաններու ն: Քանի որ իրապէս անկեղծ հրամա-
նատար մըն է ձեզի խօսողը, գիտցէք, որ ես հաւասար գուրգուրանք:

Հաւասար յարգանք չաւելիմ ձեզի հանդէպ: Մեռած բլլայրով, ձեր մէջն
այ կայ արիներու եւ անարիներու նոյն համեմատութիւնը, ինչպէս
մեր՝ վերապրողներու մէջ: Եւ պարզ ծիսակատարութեան մը սիրոյն
ձգեցէք, որ չփոթեմ հիացում պատճառող եւ հիացում չպատճառող
մեռելիները իրարու հետ: Ինչ որ պիտի ուզէի շեշտել այսօր, այն է՝ որ
պատերազմը ինծի կը թուի մարդերը իրարու հաւասար դասելու
ամէնէն զազրելի եւ ամէնէն կեղծաւ որ եղանակը: Աւելի՛ն չեմ կրը-
նար բնդուելի, որ մահը վատերուն պատիժն է կամ քաւութիւնը,
ինչպէս նաեւ չեմ կրնար ընդունիլ, որ վարձատրութիւն մըն է անհի-
կա պարտողներուն համար: Ուստի՛ զուգ, ո՛վ այ բլլայք, բացականեր,
մտցուածներ, գոյութեան, պորձի, հանդիսով ու լինելու թեւէ զայ-
րածներ, մէկ բան յայտնի է, որ այս պարպատները փակելու պահուն
մենք ներողութիւն պէտք է խնդրենք ձեզմէ, մենք՝ վերապրող գա-
սախիներս, որոնք կը պահանջէինք, թէ երկու տասնամաշնորհում զպոզած
են ձեզմէ: Կը յաւաստ, որ անոնց անուանները երբեք պիտի չհասնին
ձեզի:— ապրող մարմինի մը փրճում: թիւնը եւ երկիրքը:

ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒԹՍՒԷՆ.— Մամա՛, դարպասները կը փակուին:
Հէ՛ՔԻԻՊ.— Այո, մադո:
ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒԹՍՒԷՆ.— Մեռելներն են, որ կը հրեն դանտեք:

Հէ՛ՔԻԻՊ.— Անոնք թիւ մը կ'օղնեն:
ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒԹՍՒԷՆ.— Ծառ կ'օղնեն: Մա՛նաւ անգ աջն:
ՀԵՔՔՈՐ.— Եղա՛, փակու եղա՛ն գարպասները:
ՊԱՀԱԿԸ.— Պատեանի մը պէս...
ՀԵՔՔՈՐ.— Խաղաղութիւն տրեց, հա՛յր, խաղաղութիւն:
Հէ՛ՔԻԻՊ.— Խաղաղութիւն:
ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒԹՍՒԷՆ.— Այսպէս յաւ է, չէ՞, մամո:
ՀԵՔՔՈՐ.— Իսկապէս, սիրելիս:

ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒԹՍՒԷՆ.— Ես շատ աւելի յաւ կը պահ ինքզինքս:
(Յանկարծ կը լսուի յոյներու երաժշտութիւնը):
ՊԱՏԳԱՄԱԻՈՐ ՄԸ.— Յոյները ցամաք ելան, Փրիամ:
ՏԷՄՈՔՈՍ.— Ի՞նչ երաժշտութիւն, ի՞նչ սարափելի երաժշտութիւն: Հակա-
արբովազական ծայրայտոյն երաժշտութիւնն է, որ կրնայ գոյութիւն
ունենայ: Երթանք, զիմաւորենք զանոնք ինչպէս պատշաճ է:

ՀԵՔՔՈՐ.— Ընդունեցէք զանոնք արքայական շուքով եւ հոս առաջնորդ եցէք
ապահով: Դուք պատասխանատու էք անոնց:
ԵՐԿՐԱԶԱՓԸ.— Ամէն պարագայի, պարտադրենք իրենց արովազական երա-
ժշտութիւնը: Հեքթոր, եթէ չկարենանք որեւէ ձեռով գայրանայ ու
բորբոքի, կրնանք արտօնել երաժշտական բախում մը:

ԱՄՐՈՒԸ.— Յոյները, յոյները:
ՊԱՏԳԱՄԱԻՈՐ ՄԸ.— Ողբեսիւր նաւահանգիստի մուտքին կանգ առած է,
Փրիամ: Ո՞ր պէտք է ստաջնորդել զինք:
ՓՐԻԱՄ.— Ճի՛շդ հոս: Սակայն նախօրօք անդեակ պահէլ պայատը... Դու նայ
եկուր, Փարիս: Չենք ուզեր, որ այս վայրկեաններու մէջտեղերը
բլլաս:

ՀԵՔՔՈՐ.— Երթանք պատրաստեք մեր ըսելիքը, հա՛յր:
ՏԷՄՈՔՈՍ.— Բիշ առաջ արտասանած զամբանականէղ աւելի յաւ պատրաս-
տել խոսքով, զուր աւելի հակասութիւններ պիտի գտնեն (Փրիամ
եւ իր գաւազները դուրս կ'ելլեն): Դո՞ւն այ կ'երթաս, Հէ՛ՔԻ պ:
Կ'երթաս՝ առանց մեզի բռնու, թէ ինչի կը նմանի պատերազմը:

Հէ՛ՔԻԻՊ.— Անպատշաճ է զիմաւորենք զիմաւորենք:

ՏԷՄՈՒՔՈՍ— Եթէ տեսած ես, բռն:
Հէֆթի Գ— Կապիկի յետոյքի: Երբ էդ կապիկ մը ծառի մը վրայէն մեզի ցոյց
 կու տայ թևփոտ ու ստամե կարմիր յետոյք մը, ազոտու մագոզ պա-
 տած, այդ պատկերին մէջ մենք կը տեսնենք պատերազմին զէմքը:
ՏԷՄՈՒՔՈՍ— Ուստի՛ պատերազմը երկու զէմք ունի, քու նկարագրածդ եւ
 Հելէնին զէմքը: (Տէմոնոս զուրս կ'ընկէ):
ԱՆՏՐՈՒՄԱՔ— Ահա ստիկ ի՛նքը՛ Հելէնը: Փոյթքսն, մի՞տքդ է՛ ինչ որ պիտի
 բսկիր Հելէնին:
ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒԲՍԷՆ— Այո...
ԱՆՏՐՈՒՄԱՔ— Ուրեմն, վազը ժուռ կ'ըլլաս...

ՎԵՅԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՀԵԼԷՆ ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒԲՍԷՆ

Հելէն— Հե՛տո կ'ու գէր խօսիլ, անուշիկս:
ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒԲՍԷՆ— Այո, Հելէն չօքքուր:
Հելէն— Կարեւոր բսկիք մը պէտք է ունեցած ըլլաւ: Շատ ջղայնացած կ'ը-
 թիս: Գրաւի՛ կու գամ, որ այդպէս է:
ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒԲՍԷՆ— Այո, Հելէն չօքքուր:
Հելէն— Չես կրնար առանց ջղայնութեան բսկիքդ բսկիլ չէ՞:
ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒԲՍԷՆ— Ո՛չ, չեմ կրնար, Հելէն չօքքուր:
Հելէն— Ըսելիքիդ մնացեալ մասը բռն ուրեմն: Պրկուած այս վիճակդ նեղու-
 թիսն կը պատճառէ ինձի:
ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒԲՍԷՆ— Հելէն չօքքուր, եթէ մեզ կը սիրես՝ գնա՛:
Հելէն— Ինչո՞ւ երթամ, սիրելիս:
ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒԲՍԷՆ— Պատերազմին պատճառով:
Հելէն— Արդէն իսկ գիտե՛ս ինչ կը նշանակի պատերազմ:
ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒԲՍԷՆ— Շատ լաւ չեմ գիտեր: Կը կարծեմ, որ կը մեռնինք,
 երբ պատերազմ ըլլայ:
Հելէն— Եւ գիտե՛ս ինչ է մահը:
ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒԲՍԷՆ— Ոչ այ մահը լաւ կը ծանշնամ: Կը կարծեմ, որ այլեւս
 բան չես զգար:
Հելէն— Ճիշդ ի՞նչ բաւ Անտրոմաք, որ բռն ինձի:
ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒԲՍԷՆ— Ըսաւ, որ մեկնիս, եթէ կը սիրես մեզ:
Հելէն— Շատ տրամաբանական չի թուիր ինձի ասիկա: Եթէ գուցէ մէկը սի-
 բիլի կը բամբուսէ ի՛ր անկէ:
ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒԲՍԷՆ— Օ՛, ո՛չ, երբե՛ք:
Հելէն— Ո՛ր մէկը պիտի նախընտրէր, Հէքի պէ՛ն բամբուսիլ, թէ ոչինչ զգայ
 այլեւս:
ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒԲՍԷՆ— Օ՛, ոչինչ զգայ: Պիտի նախընտրէր ժուռը մնայ եւ
 բնաւ բան մը չզգայ...
Հելէն— Կը տեսնես, որ ինքզինքդ լաւ չես արտայայտեր: Որպէսզի ես մեկ-
 նիմ, ընդհանրապէս պետք է որ մեզ շփրէի: Կը նախընտրես, որ քեզ
 շփրե՛մ:
ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒԲՍԷՆ— Ո՛, ո՛չ, պիտի ու գէի, որ սիրէիր դիս:
Հելէն— Ուրիշ խօսքով՝ չես գիտեր ինչ կ'ըսես, այդպէս չէ՞:
ՓՈՔՐԻԿՆ ՓՈՒԲՍԷՆ— Ո՛չ...
Հէֆթի Գ— Փոյթքսն...
 (Շար. 3)

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ԱՆՁԿՈՒԹԵԱՆ ԺԱՄԵՐ

Ամէն անգամ որ Նարեկը կ'արթննայ, գիճկ կ'օրո-
րնն հրեշտակները, հրեշտակները, հրեշտակները երա-
զին...

I

Ինչ գիշերներ կու գան
երբանկուրեան երկինքներէն լուսաբոյր
եւ չեն շօշափեր հեփաթը կոպերուդ

Ինչ գիշերներ կը հակին
մահինիդ լուսեան եղանակներուն
եւ չեն գերեր աչքերուդ մէջ
մետաքս շողերն աստղերուն

Լուսափայլ արցունքին պէս
ինչ երազներ դուն կ'ըլլաս՝
արեւուն
երազին
երազիս

Ինչ լո՛յս կը վրճել անհունի տարածքներուն՝
ինչպէս կանչերն ալիքներուն խաւարի

II

Եւ կ'արթննաս իմ արիւն
գիշերուան եւ գիշերուան միջեւ՝
ինչպէս դուք երկնային
կը հագուիս հրնուանքը լանջերուն
եւ արտոյտներուն կարմիր երգին հետ
գառիթափերը կը պարեն լոյսիդ սահանքէն

Լոյսն է լոյսիդ պատուհան
եւ տեղներու կրգարան

III

Բայց ինչն են դեռ թիթեռները մութին
 եւ աչքերուդ անհունին մէջ
 յոյսը բոյնն իր կը հիւսէ

Մատներդ կաթներանգ
 կը քնանան մութը գալիքին
 եւ չեն բռներ ապշանքն արշալոյսին

IV

Թող որ մեկնի ժամանակը մէզերուն
 եւ կանթեղներն արձակեն նշոյլներն իրենց
 որ յոյս կարկաչեն օրերն իմ ամէն

Թո՛ղ աչքերդ հարցական թիթեռներու գգուանքին
 որ երակներն իմ յորդին
 տաք շոգերովն սկիւին

V

Կ'անցնիմ մութէն մութ երազին
 եւ իմ արեան արեւուն մէջ
 ա՛յ աւելի կը խեղդուիմ

Ընդարձակէ՛ բիրերդ կոյս
 եւ գալիքի սկիծիծաղ մարգերուն
 լեցո՛ւր երգերն արեւներուն
 եւ կանչերը ծիլերուն

Սպասու՛մք պատասխանն է անորոշին

VI

Աշնանային ամպկոտութեամբ
 կը մերկացնես ոստ առ ոստ
 յիշատակի մութ ծառերը գալիքի
 ժամանակի ստուերներուն
 ստուերներուն անանուն

Սենեակին մէջ
 մանիւնիդ քով կը բնանան մշիկ-մշիկ
 երազներու բիւր նշոյլներ վիրաւոր
 գիշերուան եւ գիշերուան միջեւ՝
 մինչեւ վերջին հորիզոնը գիշերին
 քու գիշերիդ քմայքստ

Եւ որովհետեւ կ'արեւեւ
 գիշեր մը սպիտակ եւ գիշեր մը սեւ
 եւ որովհետեւ աչքերուդ
 գիշեր մը նենգ գիշերներն իր կ'օրօրէ
 քս լուռ կը ծխեմ օրերն իմ գիշեր

VII

Գիշերէդ դուրս կը բացուի
 այբուբենը քու շրթներուն շոգ առ շոգ
 անյիշատակ ժամանակի երկինքներէն

Սենեակին մէջ
 մամերուն հետ հեքիաթի
 հովերն է որ կը խաղան
 եւ շարժումներ կը կանչեն լոյսին շուարումէն

Թոզ բնակին քու մէջ սոխակներն ամէն
 քոզ բնակին քու մէջ քիթներն ամէն
 քոզ բնակի քու մէջ փախուստը արեւին
 ստուերներուն այգիներու ոսկիին

Իսկ մատները քու բամպակ
 քոզ լոյս սաւաննն դաշտերը քունին

VIII

Գիշերներս էին մաշումի ժամեր
 մէն մի դողիդ հետ
 նս ծնած օրէդ գահավիժեցի
 յաւերժի մթին անդունդներն ի վար
 սեւ քարքիչներուդ լոյս անմեղութեամբ
 եւ դարձայ սիրոյ խաբուած երիվար՝
 խեղդուած ճիչէդ նոյնիսկ աւելի
 օ՛ իմ նորածագ արեւ սոսկայի

digitised by A.R.A.R.®

IX

Ամէն անգամ որ ձեռքս երկարեցի
մահիննիդ գիշեր շղարշին վրայ
գիշերներն իմ ծանր լիացան դժուար
շարժումէդ անկար

Ամէն անգամ որ սոխակ մը անցաւ
արցունքի ծառէն ոստին հեքիաքի
կանչեց մատներուդ շուարու մը նուրբ

X

Հակելով դէպի ժամերը մութին
շողերն արիւնիդ կը թիավարեն սպիտակին մէջ

Մերկ ու ուրացուած
քու գիշերային գողէն ու տենչէն
դուն կ'ըլլաս երաշխ'
սոսապելներու ակնքարքն ինչպէս
եւ կ'ընես կրկին մարմինն իմ յոգնած
թափանցիկ ու լոյս'
նիշդ երազիդ պէս

XI

Ամէն անգամ որ կը հակիմ քեզմով
թափանցիկ ու լուռ արշալոյսներու հորիզոններուն
կը գտնեմ ես էեզ
դուն գիս կ'ամփոփես
եւ ես կը դառնամ շողն ադամանդին

Երբ երկինքներ չեն մնար
երբ հայեացքներն արեւուն
նշոյլ-նշոյլ կը ցօղուն են էութիւնն իմ
շողարձակումն այս
արեւն այս

կը դառնայ երկինք անհորիզոն

XII

Ոչինչ կը գերազանցէ արեւը երկինքին

*Ոչինչ կը գերազանցէ երկինքներն արեւիդ
եւ ամպերը կ'արձակեն
իրենց ախորժիկ կապոյտ*

*Փակէ՛ կոպերդ յոգնած
գիշերներու գիշերին մէջ այս անհուն
եւ աստղերը թող տեղան
տրոփ-տրոփ
նշոյլ-նշոյլ
դող առ դող
մեր կարօտի եւ երագի փլատակներուն*

ՍՊԻՏԱԿ ԲԱՑԱԳԱՆՉՈՒԹԻՒՆ՝

ՎԵՐՋԵՐԳԻ ՆՄԱՆ

I

*Այիֆին որ աչքերուդ յոյս կը ծաղկի
ես կը կրկնեմ ամէն օր
երգ մը պայծառ ու բարի*

*երբ մանուկներ տուն կու գան
կարօտներու ուղիներէ մոռցուած
երբ սոխակներ պար կ'ըլլան
երագներու երդեհներուն մշտարծարծ*

*Շարժումին որ աչքերուդ տօն կը ծաղկի
ես կը կրկնեմ ամէն օր
երգ մը պայծառ ու բարի*

*երբ բիբերուդ կը վառին
կարօտներու հառազայթներ ոսկեգոյն
եւ սրտիդ մէջ կը խաղան
ժամանակի բիւր խոստումներ մշտարթուն
անձկութենէ անձկութիւն՝
ինչպէս սպիտակ բացազանչութիւն*

*Նրկի՞նք է արդեօք կոպերուդ տակ
թէ փոթորիկ սանձարձակ*

digitised by A.R.A.R.@

II

Հայեացքներդ կը տարտղենն
 խաւարներն ու նենգ խաղերը գիշերին
 այգիները կը լիանան արեւուզ շոյանքէն
 եւ ես կ'ըլլամ երթանկութեան գինին

կը հաւաքես յուշերը գայիքին
 որ անոնց մէջ շեփորես ազազակներն արիւնին
 եւ քամիներու խօսքը քանդակես
 մինչեւ խորքը աչքերուդ լոյսին

Ուրեմն ծագէ՛ տողերուս
 ծագէ՛ տողերուս բոց համբոյրներն արփիին
 կամ գաւազանն այն հրաշագործ
 որ պիտի նեղէ անապատը խաւարին

(Ոս ինչպէ՛ս շատրուանեմ լոյսը սպասեալ
 երբ երկինքներ կան թազուած կոպերուս տակ
 եւ փոթորիկ — փոթորիկ
 խենթ ու վայրագ)

Շանթեր
 տեղացէ՛ք սրտիս աւերին
 կամ խեղդեցէ՛ք փոթորիկն իմ արիւնին

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Պէլյուր. Դեկտեմբեր 1988

ՄԱՀ



Ա Ն Դ Ր Ա Ն Դ Կ Ե Ա Ն Ի



Անցեալ տարուան Մայիսի կէսերուն, Փարիզի մէջ, եօթանասուն եօրր տարեկանին, հոգին դարձաւ Անդրանիկ Ծառուկեան, մէկը Համաշխարհային նրկորդ պատերազմի նախօրէին Միջին Արեւիքի անդաստաններուն ծլարձակած այն դէմքերէն, որ, ստեղծումներու եւ հրատարակութիւններու նամբով՝ աւելի էան յիսնամեակ մը ներկայութիւն եղաւ մտքի մեր կալուածներուն մէջ:

Ասպարէզին մէջ երեւցած օրէն սկսեալ, Գ. հաժակ, Ա. Ծառ, Վազգէն Տէրունեան թէ աւագանի անունով, իր հետաքրքրութիւններով, յանդգնութիւններով, յեզուական բարեմասնութիւններով ու ռնով՝ Անդրանիկ Ծառուկեան իր սերունդին առաջին անունը եղաւ, որ իր վրայ կեդրոնացուց մտաւորական դասուն թէ պարզ ընթերցողին ուշադրութիւնը, անգամ մը եւս հաստատելով այն նշմարտութիւնը, որ, ինչպէս արուեստի միւս ճիւղերուն, նաեւ գրական մարզին մէջ կանխահասութիւնը առասպել չէ:

Դեռ ուսանող՝ հրապարակագրական, բննադատական թէ բանաստեղծական կտորներով սկսաւ երեւիլ իր օրով լոյս տեսնող օրաթերթերուն, պարբերաթերթերուն ու ամսագրերուն մէջ, միշտ ըսելիք ունեցող եւ ըսելու ձեւ ունեցող ինքնավստահ մէկու մը պէս, եւ ուսանող էր տակաւին, երբ Գ. հաժակ ծածկանունով լոյս ընծայեց իր անդրանիկ հատորը, տպաւորապաշտ բննադատութեան կալուածին մէջ ինկող չորս կտոր, «Եղերարախտ քերթողներ» անունին տակ, ու ուսանողութեան հագիւ հրաժեշտ տուած, դարձեալ նոյն ծածկանունով, լոյս ընծայեց իր երրորդ գործը, վիպակ մը այս անգամ, «Մոխրաման»ը, որ չհաշուած բննադատութեամբ սկսող ու պատանեկան շարութեամբ վիրաւոր վերջին շուրջ տասը էջերը, շատ հեռու է սկսնակի մը գործը ըլլալու հասկնալի նուազումներէն: Այս երկուքին յաջորդեց չափածոներու հաւաքածոյ մը, «Առաքատներ», որ իբրեւ բանաստեղծ նուիրագործեց իր անունը Սփիւռքի գրականութեան մէջ, երբ դեռ քսանհինգ տարեկան չկար:

Յետոյ «Նայիրի» պարբերաթերթը, յետոյ «Թուղթ առ նրեւան»

պոետը, ապա՝ «Նայիրի» ամսագիրը, ապա՝ զինք արձակագիրի վարկի մը տէր կացուցանած «Մանկութիւն շուշեցոյ մարդիկ» հատորին առաջին պատմութեան հերթը հոյն ամսագիրին մէջ, ապա՝ «Նայիրի» շաբաթաթերթին առաջին հինգ տարիները, ուր, ինչպէս պարբերաթերթ ու ամսագիր «Նայիրի»ներու էջերուն, ստորագրեց գրական ու քննադատական իր լուսագոյն գործերը:

Ըսինք, որ քսանամեայ երիտասարդ, ան յայտնաբերեց կանխահաս հասունութիւն մը. հասունութեան տրամաբանական հանգրուանին, սակայն, պատահեցաւ հիշող հակառակը, ծնունդ տուաւ այնպիսի՝ դեռահաս գործերու, որոնք Անդրանիկ Ծառուկեան ստորագրութիւնը կրելու ռոսկական իրենց հանգամանքէն զատ հեռաւոր աղերս մը միայն ունին գրականութեան հետ:

Խառնուածով տաք, ղղային, կոռուական ու անհամբեր՝ Անդրանիկ Ծառուկեան շեշտուած հակում մը ունէր հրապարակագրութեան նկատմամբ, ու տէրն էր զանգուածներու տրամադրութիւններն ու շարժումներուն անդրադարձ յոյզերը բանաձեւելու բացայայտ շնորհի մը, որուն առաւելագոյն փոփոխումը եղաւ «Թուղթ առ Երեւան» պոետը եւ որ, սակայն, իր ետին քաշեց-տարաւ զինք ամէնուրեք եւ ի վերջոյ ճակատագրական եղաւ վերջին երեք տասնամեակներուն ստորագրած իր բոլոր գործերուն համար, «Հին Երազներ, նոր ճամբաներ» անունով հրապարակ եկած ուղեգրութիւնը ըլլան անունք. «Երազային Հայկեր» խորագրեալ յուշագրութիւնը ըլլան, թէ հատորներէ դուրս մնացած այլանուն շարքեր: Տարբեր բախտի մը տէր չեն նոյնիսկ «Վերջին անձեղը» եւ «Սկզբ Եղեւնի մէջ» տիտղոսով կնիւած վէպերը, որոնցմէ առաջինին համար Ծառուկեանի մը վայրէջքին պէտք չունէր հայ գրականութիւնը, տրուած ըլլալով, որ յայնկոյս արիւն ու սկոթ կազմած ունէ կոյտնակի կրնար այդքան էջեր սեւագրել, մինչ երկրորդը ծրագրային գրականութեան մը կայանաւորը մնաց, երբ սպասուածը «սէր»ով բռնկուեց եւ Եղեւնի անդրադարձով խոսկայոյց յղացման մը սրտառուչ հոսքն էր:

Վերը յուզուեցաւ տոկոսային խնդիր մը ու պէտք չէ մտնել այդ համեմատութիւնը, որովհետեւ անշահ տիպարներու եւ մակերեսային տպաւորութիւններու կուտակումին բովն ի վեր բնութեցող այդ կարն տարածութիւններուն վրայ կը հանդիպի առաջատարներու ու «Մանկութիւն շուշեցոյ»ներու Ծառուկեանին, նկարագրական տպաւորիչ էջերու եւ վարակիչ ապրումներու, շուտով դէմ-յանդիման գալու համար հրապարակագիրին, որ սպիտակ էջերուն դիմաց երբե՛ք ազատ չձգեց այս օժտեալ դէմքը:

Յաւով եկաւ աշխարհ, ցաւ եղաւ իր մանկութիւնը, ցաւ եղաւ պատանութիւնը, աւելի բախտաւոր չեղաւ երիտասարդութիւնը, տեսակ-տեսակ գրկանմանքով, հակառակորդներով ու թշնամիներով յագեցած շրջան մը եղաւ իր կեանքին գրեթէ առաջին կէտը, բով յագեցած շրջան մը եղաւ իր կեանքին գրեթէ առաջին կէտը, բայց «անիծեալ» այդ շրջանը, կրկնե՛նք, աւելի բեղուն եղաւ գրականութեան համար, քան երկրորդ շրջանը անոր, երբ գրկանմանքէ հեռու ապրեցաւ եւ «օրհնութիւնները» անպակաս եղան իր վրայէն...

Ա. ԾԱՌՈՒԿԵԱՆ

ՀԻՒԱՆՌԱՆՈՑ

Հիւանդանոցը, մեզի համար, երկնային գրախոն էր երկրի վրայ: Հոն անդամ մը մտնողը մէկ երազ միայն ունէր — երբեք դուրս չելլել: Ու դուրս գալէ ետք, զարմնայ մէկ երազ — վերադառնայ հիւանդանոց: Առասպելական բարեբեկերու շահմարանն էր հիւանդանոցը, մեր մտածու մեկրու ն մէջ Ծփացող երջանկութեան անկարելի կայք մը:

Առաջին՝ մահճակալ կտր հիւանդանոցին մէջ:

Երկրորդ՝ կաթ, հաւ կիթ և ճերմակ հաց կար:

Օրրորդ՝ բարի մայրիկներ կային, ճերմակ հագուած քոյրիկներ, որոնք միշտ կը ժպտէին ու բնաւ չէին բարկանար:

Ըսողներ կային, որ հիւանդանոցին մէջ եթէ կերակու ըին չհաւ նիս, իսկոյն կ'երևի ճերմակ քոյրիկը ևւ կ'աղաչէ, կը պաղատի՝ որ յայտնես փափաքդ ևւ անմիջապէս բերել կու տաս ուղան կերակուրդ:

Տղայ մը կը պատմէր, թէ կաթին հետ կտոր-կտոր շաքար տուած էին, ա՛յնչափ-այնչափ — մէկ ցուցամատը միւսին վրայ սղոցի պէս կ'երթար-կու գար, ճշդ էլու համար շաքարներու ն մեծու թիւնը, ևւ պատճառ գտնելով, որ նախանձին անանասանելի սղոցներու ն միւս նոյն երթիւ եկր կատարեն հոգիներու ն մէջ: Կաթը խմած էր ու շաքարը պահած: Քոյրիկը տեսած էր շաքարին պահուելը բարձին տակ, ևւ գիտէ՞ք ինչ ըրած էր...

— Մեծե՛ց, — կը հարցնէր լայնարաց աչքերով ու նկնդիր մը:

— Եկաւ, մտածով կըտրէր բրուս այտեղս, — ցոյց կու տար Ծնօտին տա-կը, — խնդաց ևւ ըսաւ...

— Ի՞նչ ըսաւ...

Միւսը կը լուր, չէր ուզեր շարունակել, ցուցամատը դարձնելով բերնին մէջ, կը ժպտէր, կը տնտնար, կ'որորուէր՝ կարծես վերզգայով շաքարներու ն համը, հիւանդանոցի քաղցր յիշատակին ընդ մէջէն: Եւ ի վերջոյ՝

— Ըսաւ, անուշի՛կս, այդ շաքարը թէյի համար է. ու տնչու շաքարը այս-պէս է... ևւ տուաւ ափ մը նուշով շաքար. ու կամացուկ՝ եզունգով կամիթ ըրաւ այտեղս, — ցոյց կու տար թուշը...

— Օ՛հ...

Բացազանչութիւնը՝ միամայն էր, հիւանդանոցին տննչաւքը՝ միա-սիրա, ամէն գնով հոն իյնալու վճարականութիւնը՝ բոնակալ:

Հիւանդանոցին սիրոյն, փորի ցաւեր կային, ճմայրիկ-ճմայրիկ լա-ցող-պտուացողները պակաս չէին: Ամէն հնարք ներելի էր հիւանդանոց հաս-նելու համար: Գիշերը բաց պտուկէլ, բոլորիկ սաքերով խաղալ թաց ջուրերու ն

մէջ: Տղայ մը նոյնիսկ մոռ կերած էր Հիւանդանալու յոյսով, բայց չհիւանդացաւ: Քիչ մնաց պիտի խեղդուէր, որովհետեւ մոռցած էր Հանել մոմին դէքմանը: Մոմին կտորները նոյնու թեւով: Գոյ բա բերին կոկորդէն: Բաւական չարչարուեցաւ, սակայն Հիւանդանոց չգնաց: Մեծ մը կերաւ ու նստաւ տեղը:

Տարբերակը այն էր, որ Հիւանդ բլլալու բոլոր պայմանները կը լրացնէինք, բայց չէինք Հիւանդանար: Հազուադէպ երեւոյթ էր իրական Հիւանդութիւնը: Բողոքի, կիսամեղի, կէտ-կուշտ, կէտ-անթի, խոնաւ սեւեակներու մէջ ու բարակ վերձակներու առկա՝ դարձնալ չէինք Հիւանդանար եւ կը մեռնէինք յուսահատականօրէն տուղլ ու կայտաւ: Այսօր, երբ անհասկանալի գործարանքի եւ Հողանու թեւան տարկայ մանուկներ կը անհնձ, որոնց մայրերը սրտերինն առկա կը պահեն ջերմաշափէն, ու պզտիկ նով մը անգամ վտանգ կ'ընդ նշմարեն իրենց գաւակներուն առաջնութեան, կը յիշեմ մեր մանկութիւնը ու կը ժպտամ: Անպայման հրաշք մը կար մեր դժբախտ գոյութիւններուն վերեւ: Աւ հրաշքը այն չէր, թէ ինչպէս կ'ապրէինք, այլ այն՝ թէ ինչպէս չէինք մեռնիր...

Մանկապարտէզի բնակիչներու փայփայած զլխուս որ երազը կը մնար Հիւանդանալու երջանիկ Հետանկարք: Այս մարդին մէջ եւս յաջողութիւնը հարպիկներու ն հետ էր: Հնարամիտներ միջոցը կը գտնէին կերպով մը Հիւանդանոց մանկու: Կը պատահէր նաեւ, որ ուսու Հիւանդը յաջողօրէն իսկ ետ նամբուէր եւ ճերմակ հացին ու շաքարին տեղ, գտնէր Մայրիկին գաւազանը:

Ամէնէն շատ փորձուած ձեւը «փորթի ցուած» էր: Բայց եւ ամէնէն աւելի ընթացիկ ու սկիւր եղանակը: Այնպէս որ, շատ միամիտ ու անճարակ պէտք է ըլլար մէկը, որպէսզի փորթի ցուած նկատէր Հիւանդանոցին ապահով նամբան: Առաջ մը, մեր սեւեակէն Մանուկը սկսաւ փորթի խաղին:

— Փորս, փորս, ա՛խ, փորս...

Ու շաղրու թիւն ընդ չեղաւ: Յիմարին մէկն էր: Առաջին սխալը այն էր արդէն, որ սկսած էր առատ ընէ: Ո՞վ կարեւորութիւն պիտի ապրէր, նախահաշի իրարանցումին մէջ: Որպէսզի այդ մաշած սագմամբութիւնը յաջողութեան յոյս ներշնչէր, հարկ էր, որ փորթի ցուած սկիւր գտնէ իրկիւնը, ընթրիքի եւ ջրանալու գանգակին մէջուց, ինչպէս կը պահանջէ ասորական խոնձուութիւնը: Ատիկա այն պահն է, երբ Հիւանդանոցի թեկնածուն կը սկիւր մզկաւալ ու գալարուի: Եթէ կ'ուզէ, որ ապաւորութիւնը աւելի ու ժգին ըլլայ, պէտք է հրաժարի նաեւ ճաշելէ, հացն ալ չուտէ եւ շարունակ ձեռքերը պահէ փորթին վրայ: Իր լացէն ու Հատալանքներէն աւելի, չկերուած հացին տեսքը կրնայ վախճանի մայրիկները, որոնք իրարու հետ միմեկով — «Տղան հացն ալ չէ կերեր» — «Տղան ձեռքը չերթայ» — «Տղան Հիւանդանոց հասցենէք», եւ այլն՝ բախուաւ որ արարածը կը գնեն հսկիչի մը շալակը ու կը գրկեն դրախտ:

Հիւանդանալը խելք, մանուանց գրահարութիւն կը պահանջէր: Իսկ այն փնթի Մանուկը իր մախորդ գերասանութիւնը սկսած էր ամէնէն անպատահելի մամուն: Անկողիները հաւաքեցինք ու թուանք գուրս: Մանուկին մասին մտածող չեղաւ: Կէտերին՝ Մանուկ սեւեակէն գոյ բա չէր կշտ ու կու լար: Մայրիկին իմացնողներ եղան, բայց նկատի չառնուեցաւ: Ընթրիքին՝ տեղն էր գարձեւայ, բայց հացը առած էր, նոյնիսկ կերած եւ վրան ջուր խմած: Ու կը շարունակէր բռնել մէկ կողմ ու լալ:

Մեր թերահաւատութիւնը սկսած էր նահանջի: Հողանու շրջապատողները գտնուեցան: Տրամադիր էինք հաւատալու, թէ Մանուկ իրապէս ցաւ ու նի: Գացինք յայտնեցինք մայրիկներուն: Դժբախտարար եղաւ թէ մայրիկն էր կողմը:

— Ի՞նչ ու նիս, ազալ:

— Փորս, մայրիկի, փո՛րթ, այտակ՛դ...

Մանուկը ցոյց կու տար փորկն վար տեղ մը ու երկու ձեռքերը դրած էր ցաւին տեղը, իրարու վրայ:

Մայրիկը բռնեց Մանուկին ու սերկն, ոտքի հանեց եւ այդպէս պահեց զմը: Մանուկ փորձեց կրկին ձեռքերը իրարու միացնել փորին վրայ, բայց Մայրիկը թող շտուտաւ եւ հրամայեց, որ չխտակ կենայ:

— Շխտակ, չիփ-չիտակ, այսպէս...

Շտու ծիծաղելի եւ ապուշ ձեւ մը առաւ Մանուկ: Լացն ալ դադարեց ու անշարժ կեցաւ Մայրիկին առջեւ, ափերը բաց, չբթու նքները դողահար, սպասողական դիրքով: Մայրիկը հրամայեց, որ լամբը բերեն, ու լոյսին մէջ ուշադրութեամբ դիտելէ ետք Մանուկին դէմքը, սկսաւ ապաստակել:

— Ստախո՛ւ, անամօ՛թ, ստախո՛ւ:

Առաջին հարուածէն իսկ Մանուկ փլաւ ինքն իր վրայ, կծիկ դարձաւ ու մնաց լուռ: Մայրիկը շարունակեց ոտքով հարուածել, առանց մասնաւոր տեղ մը փնտռելու Մանուկին մարմինին վրայ: Որոշ ազդեցութիւն մը ու նեցած բլուլու էր Մայրիկին զայրոյթը, որովհետեւ Մանուկ բացարձակ լուռ թիւն կը պահէր- ոչ կը բողբոջէր, ոչ կու լար:

Բարկութիւնը այսպէս յազդեցնելէ ետք, Մայրիկը դարձաւ մեղի.

— Դեռ մէջերնիդ փորի ցաւ ու նեցող կա՞յ...

Շածկուեցանք մեր անկողիններուն մէջ: Ոչ ոք համարձակեցաւ դուրսը դուրս հանել վերամակէն: Մայրիկին մեկնու մէն ետք, դարձեալ Մանուկն էր լուռ թիւնը խզողը:

— Փո՛րս, մայրի՛կ, փորս, կ'այրի, կը փրթի...

Համոզուած կիւք այլեւս, թէ չինձու չէ Մանուկին ցաւը, բայց չէինք համարձակեր օգնութիւն կանչել: Մայրիկին սարսափը շատ ու ժեղ էր եւ իր կատաղութեան պատկերը դեռ շատ թարմ մեր աչքերուն առջեւ, որպէսզի նոր միջամտութիւն մը փորձելիք ի նպաստ Մանուկին: Շատերը ծանձրացած էին արդէն ու քնացած: Ետնկան չէր ո՛չ Մանուկին անձը, ոչ ալ փորի ցաւը: Քոտնի մը հոգի միայն կային Մանուկին շուրջ, համակիր կարեկցութեամբ, բայց անոնց փաղաքշական խօսքերն ալ հետզհետէ կը կորսնցնէին իրենց ջերմութիւնը:

Ուշ առան Մանուկ բարձրացուց ձայնը, ազադակներ սկսաւ արձակել եւ արթնցուց ամբողջ սենեակը:

Վշիլուկ, իրարանցուց մ, զժողովութիւն: Որոշեցինք երթալ հակիչներու ն դուռը զարնել: Մայրիկին երթալու կը վախնայինք: Տղաքը յաջողեցան հակիչ մը արթնցնել, նայեցաւ, բաներ մը մտածաց ու գնաց:

Մեր ազմու կէն արթնցած էր նաեւ խոհարար մայրիկը: Բաւական գրողեցաւ Մանուկով: Տաք ջուր բերաւ, լաթ մը թրջեց ու շփեց Մանուկին փորը, խոտազաւ առտուն կանուխ հիւանդանոց գրկել, անուշ խօսքեր բրաւ ու գնաց:

Առտուն՝ Մանուկ չէր նստած նախկին ձեւով, կրկնցած էր անկողինին մէջ ու կը մղկտար: Բացինք վերամակը ու սարսափահար ետ փախանք: Կապոյտ էր Մանուկին մարմինը, կուրծքէն մինչեւ փորին սակր: Մութ կապոյտ էր մասնաւոր փորը եւ ուսած: Մանուկ չէր խօսեր այլեւս, մեղմ ձայնով կը տքար:

Քանի մը հոգի դուրս ուղացան ու բերին Մայրիկը: Երբ անտաւ Մանուկին վերակիր, այլայնեցաւ, շուարեցաւ, անհասկնալի բաներ կակաղեց: Երկու հակիչ կանչել տուաւ: Փաթթեցին Մանուկը վերամակի մը մէջ ու տարին հիւանդանոց:

Իրիկունը իմացանք, թէ մեռած էր Մանուկ հիւանդանոցին մէջ: Ըսուեցաւ, թէ շատ ու տեղէն աղիքները պայթած են փորին մէջ: Չհաստատեցինք: Մանկապարտէզին մէջ, սեւէ մէկուն աղիքները երբէք չէին լեցուեր, որպէսզի

պայթիւն: Ո՛նջ Մանուկը, եւ ոչ այ ուրիշ սեւէ մանուկ կրնար պայթելու առտի-
նան կուշտ ըլլալ: Ան՛հաս առաջին այն էր սակայն, որ Հակոբ Յարութիւն, որուն
խօսքերը ճշմարտութեան պտագամներ կրն մեղի համար, իր կարգին Հասա-
տեց դրոյցները, եւ աւելցուց.

— Այդ քանի էր Մանուկը մեռցնողը...

Որոշ էր, թէ այդ նախապատմեան մէջ զբաւըծ Սղոսրէթ մայրիկն էր,
բայց գարձեայ մութ կը ծնային մահուան պատճառները: Հակոբ Յարութիւն
ուրիշ բացատրութիւն չտուաւ մեղի ու իր խորհրդաւոր վճիռը կազմեց
զժրախտ Մանուկին միակ զամբանականը: Շուտով մտցուեցաւ նաեւ Մա-
նուկը: Ամէն ինչ շուտ կը մտցուէր Մանուկարուզին մէջ: Մանուկանց մահը
եւ ուրիշներուն զժրախտութիւնը: Կար կեանքի անողոք կուտ մը, որուն կա-
նող թունաւորութիւն մէջ կը թմրէին զգացական մեր բոլոր յատկութիւնները:

Մանուկը մտցուեցաւ, ու իրեն հետ, նաեւ՝ փորթ ցուբ: Հիւանդանոցի
ի խնդիր կիրարկուող կեղծ հիւանդութիւններուն մէջէն, վերջնապէս քննուե-
ցաւ այլեւս փորթ ցուբը...

Հէջ Մանուկին յիշատակը թուղթին յանձնելէ առաջ, Հարցուցի բժիշկ քա-
րկկամի մը, թէ մեր այն օրերու պայմաններուն մէջ, իրապէս ինչ բանէ կրնար
մեռած ըլլալ Մանուկը, քանի որ ան՛հիմք առասպել մը նկատուեցաւ օրին,
պայթող աղիքներու պատճառութիւնը: Իսկ Սղոսրէթ մայրիկին Հարուածները,
որքան ալ անխնայ, չէին կրնար Մանուկին մահուան պատճառը ըլլալ:

Կը սպասուէր, որ բժիշկը իր կարգին հերքէր պայթող աղիքներու հերթաթը
ու փորթի ցոյց առլ ըստրոսթին այլ պատճառ մը: Զհերքեց: Ընդհակառակն՝
վճռապէս Հաստատեց մեղի բոտածը, այնքան ինքնազատակալ պնդու մով, որ
կարծես իր ձեռքերուն մէջ իսկ մեռած ըլլար երեսուն տարի առաջ Հողին յանձ-
նուած անծանօթ Մանուկը: Պարզուեցաւ, թէ իրապէս պայթած աղիք մը կար
Մանուկին փորթին մէջ, բայց ոչ այն կիծկուած ու չոր աղիքները, որոնց պայթե-
լու առտիճան լեցուիլը անկարելի էր ջանկութեան զէպք մըն էր մեղի համար,
այլ կո՛յր-աղիքը, որուն զոյտութիւնը կ'անդիտանայինք երբ մանուկ կէնք,
որուն զկերթ կ'անդիտանանք նաեւ այսօր, երբ Հաստեմ մարդ կ'ը: Արարչու-
թեան մէկ վրիպանքը անշուշտ, այդ կոյր-աղիքը, որուն կոյր-կոյր զու՛ գնաց
մեր բարի Մանուկը:

Այսօրուան պէս ներկայ է Մանուկը այրերու ստղեւ, ձեռքերը փորթն
վրայ: Առտուն, երբ փորթ կը ցուէր ու մենք կատակ կը կարծելիք, կատակ չէր:
Գիշերը, երբ Մայրիկը սուտ կը կարծէր ու կ'ապտակէր, սուտ չէր: Ներքին մա-
կարոյճը շարժու մի մէջ էր կանուխին, եւ միշտ իրիկուն ու միշտ առտուտ,
նստու ննայով ու խաթարուելով, ի վերջոյ յանգած էր եղերական պայթումի:

Քանի՞—քանիներ յաջողեցան քանի՞—քանի սուտ ցաւերով հիւանդանոց
երթայ ու երանութեան օրեր ապրիլ այնտեղ, ու միակ իրական հիւանդը,
որուն կեանքը պիտի փրկուէր մամ առաջ չոն տարուելով, մեռաւ՝ հիւանդա-
նոցին կարօտով: Մտածու միս մէջ, Մանուկին պատկերէն անբաժան է պատ-
կերը Հակոբ Յարութիւնին, որ կարծես ուսիս դրած իր արջու թաթը, կը հրա-
մայլեր, որ այս դուրսը վերջացնեմ իր անվերաբեմնի դատաստանով:

— Այդ քանի էր խեղճ Մանուկը մեռցնողը...

ԱՆԳՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ

Ա. ԾԱՌՈՒԿԵԱՆ

**ՄՈՒՑՈՒԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՄԸ
ՇԻՐԻՄԻՆ ԱՌՋԵԻ**

Օրհնութի՛ւնքս օրօր օրհասի երգերուդ,
Իմ եզրայր, իմ բնկեր, իմ յոգնա՛ծ ուզեկից.
Արցունքներքս համբոյր, խաչանիշրս ազօթք
Վազամեռ գարունիդ, արեւիդ, արուեստիդ...

Գուն անցար, հեռացար, հոգին հետ նոյնացար,
Անհատնում գիշերէն, ծովերէն արցունքի,
Հոգիիդ մէջ արեւ, աչքերուդ մէջ խաւար՝
Գուն անցար երկինքէն ինչպէս ա՛ստղը կ'անցնի...

Նետեցիր երազիդ ծիածանը բիւրեղ
Հովերուն, վիհերուն, ամպերուն բնդմէջէն՝
Մարդերո՛ւն հոգիին... Այլ, անբա՛խտ սերմնացան,
Հունտերուդ լոկ բաժին ինկաւ հո՛գր խոպան...

Մամուռներ կը ծածկեն շիրմաբարդ հիմա,
Ջեփիւռներ կը շոյեն մամուռներդ խոնաւ.
Լճումին հարսը սեւ թեւն իր լա՛յն կը բանայ,
Ու կ'իջնէ մոռացումն անունիդ խաւ առ խաւ...

Ծառերէն, ջուրերէն, վարդերու բուրմունքէն,
Գարունէն ու կեանքէն ճեղ այս ճա՛րը մնաց...
Խոհերէդ, վիշտերէդ ու սրտիդ խոռովէն,
Անսանձա՛ն աշխարհէն՝ երկու թիզ հո՛գն այս թաց...

Ուրացան, ճեղ մոռցան սիրածներդ բոլոր,
Հեռացաւ ու մոռցաւ եւ ազդիկն այն ազուօր,
Որ երդում առ երդում ու համբո՛յր առ համբոյր
Սիրեց ճեղ, սիրեցի՛ր... Արտասուեց՝ բայց մոռցաւ...

Դեբացաւ, կ'եցաւ, ազօթեց ու մեռաւ,
 Յիշատակբոց սրտին ու երգերոց ականջին,
 Վերջին վանկն ամուսնիդ իր շունչի՛ն մէջ վերջին՝
 Մա՛յրդ հէ՛ք... կ'եցաւ, ազօթեց ու մեռաւ...

Մնացիր դուս միմակ փառքիդ հետ աւերակ,
 Զի նանչնար քեզ մանուկը, յիշեր՝ ծերունին...
 Կր թափին շրթներէ քերթուածներդ դեզին
 Ու կ'երթան վիհն ի վար մուսգման անյատակ...

Երգիչներ, քերթողներ, բնարներ եկան նոր,
 Նոր երգեր լեցուցին նոր մարդոց նոր հոգին,
 Բարձրացան մակրնքաց, յամբոնքաց այլ հզօր
 Ալիքնե՛րը կեանքին՝ հինը խո՛ր թաղեցին...

Հինին մէջ հի՛ն հե՛քիաթ, դուս քերթուա՛ծ հնարոյր,
 Ախորեայ մտածում, յիշատակ մահամերձ,
 Փշրուա՛ծ դուս ալիք ու մշուշ ու փրփուր՝
 Անամո՛ք ու անո՛ք մոռցուա՛ծ բանաստեղծ...

Օրհնութի՛ւնքս օրօր օրհասի երգերուդ,
 Իմ եզբայր, իմ բնկեր, իմ յոգնա՛ծ ուզեկից՝
 Արցունքներքս համբոյր, խաչանիշքս ազօրք
 Վաղամեռ գարունիդ, արեւիդ, արուեստիդ...

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ

Ա. ԽԱՌՈՒԿԵԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
— ԵՒ ՍՓԻՒՌՔԻ —
ՆՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐՈՒՆ**

Եւ ահա առիկ Հայաստանի նորագոյն գրողներէն մէկը, շնորհալի բանաստեղծներէն, որոնց մասին միշտ կը մտածենք, կը կարգանք ու կրկին կը կարգանք, առանց որ կարելի ըլլայ որոշ եզրակացութեան մը յանդիմ: Անու ններ են, բայց դիմադրի ու նեցող ղէմքեր չկան, եւ յաճախ կարելի է մէկը միսին հետ շփոթել, եթէ ստորագրութիւնները ճշգրտ չըլլան, թէ ո՛ր քերթուածը որուն գրչին կը պատկանի: Եւ որովհետեւ այս մէկը բարի եղած է փոռնջ մըն ալ ճշայնիտին զրկելու, փորձ մը ընենք եւ քանի մը ապաւորութիւններ քանակենք իր մասին, եւ իրմով՝ իր սերունդին:

Արեւմտեայ ազոց — եւ ազգիկներուն — բանաստեղծական շնորհք անփճելի է, ապրու մը՝ անկեղծ, արուեստի մտահոգութիւնը՝ բացայայտ: Եւ սակայն մասնաւոր նկի մը պէտք է թափանցելու համար անոնց քերթուածներուն իմաստին: Կը հասկնանք, թէ ինչ քանի կ'ուզեն (երբեմն հազիւ թէ կը հասկրնանք), բայց փերջին հաշուով, երբ ընթերցու մը աւարտի, կը դժուարանանք ըսել, թէ ինչ ըսած եղան:

Մաքուր եւ հանդարտ խնուցին թողած՝ դար ու փոս ճամբաներ փնտրող պիտներները կը յիշեցնեն: Թիւնել կը փնտսեն եւ յաճախ չուն ալ կը մնան կամովին, չեն ուզեր զուրս գալ: Մութին մէջ աւելի նանդիտա կը զգան, քան յոյսին: Արեւոյ կը գրեն եւ ուզեցի լարու մ կը պարասգրեն ընթերցողին: Իրենց բանաստեղծութիւններուն մէջ մտածու մը կը խեղդէ զգացու մը: Կը մոռնան, որ բանաստեղծութիւնը զգացական իր նոսաւնուտով ե՛րբ է նախ, ու յետոյ բառ կամ պատկեր: Աւերջին մէջ եղանակն է, որ կը շարկէ բառը: Ամէնէն աստուածային փռն տողերը ստուէր երամբիտի մը, որպէսզի երգ մը յորինէ, ու լաւ խօսքը կրնայ մտնիլ գէշ եղանակին մէջ, ինչպէս որ ամէնէն տափակ տողերը ու զգայի սիրտը կը գտնեն, շնորհիւ քնքուշ մեղեդիին:

Նու ազայնութիւնը (Սիւզիէ) ամէն բանէ առաջ, — կ'ըսէր Վերլէն, որ ո՛չ միայն գաւարիւն բանաստեղծն էր, այլեւ մեր Վաչան Տէրեանին... Նորեղբայր:

Գուով այս ազոց, կը հասկնանք, նոր կ'ուզեն ըլլալ: Զանձրացած են Ալազաններու միտքնակութեանն եւ Նույրի Զարեաններու կերպրեկայութեանն: Երբեքներու շարժական քնարերգութիւնն ալ կորսնցուցած է գրաւորութիւնը իրենց աչքին: Հազիւ թէ պիտի ուզէին գրելի Սիւզու կուպուտիկեանի մը կամ Պարոյր Սեւակի մը արուեստին, բայց այդտեղ ալ... չիլ մը դժուար է,

չու նշխրներն կարճ կու գայ, հողիին կապանքը արձակելու եւ շխրներն զուրս գալու պահանջ մը կը ստեղծուի, որուն շին ուզեր ենթարկուի: Եւ ուժ կու տան բարին, խօսքին ու պատկերին, կը սիրեն պեղել ու խորանայ, քան թէ յայննայ ու վերանայ: Իմացական բանու անքննութեան հետ են միտ, քան ժարժարէ քանդակներու ն, ժուրնով շին աշխատիր, այլ՝ սակերիչի նուրբ գործիքով: Ինքնատիպ կ'ուզեն ըլլայ, ժոռնայով, որ ինքնատիպութիւնը նախ ի'նքը ըլլայն է, եւ ոչ թէ ուրիշին նմանելու վտիւն՝ ուրիշ-ուրիշ անյայտութիւններու մէջ մուրհիւր:

**Ձայնդ բեր,
Ականքս ծարաւ է**

բանը՝ սկարստ եմ ձայնիդ ջ ըսելու ասորիք մեւ մըն է անշուշտ, աւելի՞ զհեղեցիկ, թէ նուազ զհեղեցիկ, այդ չէ խնդիրը բանաստեղծին համար, այլ ա՛յն՝ որ տարբեր է ուրիշներէն: Բայց թէ ուրիշին պէս ըլլալու իրապէս ի՞նքը ըլլալ է արդեօք — ճշգիւի պարագայ:

Խույ ականքս ինչպէս զնեմ ձայնիդ քարիդ:

Ականջ մը, որ խույ է եւ քար մը, որ ձայնիդ է՝ զօրեղ հակադրութիւններ են թերեւս, եւ մասնակցութեամբ զուցեւ եւ յաջողեց կոտակել, թէ ինչ ըսելու ուզած է քերթողը, բայց յամենայնդէպս նման խօսքերու սեղը հոգեբանական վերջու մասներ կար իմաստասիրական խոհեր տուող արձակ է, եւ ոչ քերթուածք: Բանաստեղծութիւնը նախ՝ պէտք է զրոնէ՞ մեզ եւ յետոյ մասնակցայ, իսկ այս նորերը նախ մասնակցու կու տան համակել տալու ու միջոցառ չի՞ ստեղծուիր, որովհետեւ բանաստեղծը ինքն այ չէ գտած իր միջոցառը:

**Արարում եմ, որ ինձ զտեսնեմ,
Նուազումս գտնեմ զտեսնեմ:
Իրիկնային իմ ստուերը
Յիշատակի առնձի փաթուի:**

«Փոստակցի ու ող նուազումս մը»՝ գէշ չէ, բայց սովորական էն աւելի ճիշդ կը պահանջէ պատկերացնելու համար իրիկնային ստուերը, որ շխրատակի ստեղծի փոխուի: Քարէ նման կարծրացած հացի պէս են այս սողերը, թերեւս յուս ցորենի եւ բնտիր ալիւրով հաց մը, որ ստեղծի ակոյայ կը փշրէ, ինք փշրուելէ, ըսել կ'ուզենք՝ հասկցուել տալ: Այս նոր բանաստեղծներու ընթացքով մին սկսուած պահուած պայման կը գտնուայ այնչաւ ասփրոյի տուփն այ ձեռքի տակ ու նենայ:

Բայց չի բուսեր հեղեղի կամ այգանի: Պէտք է հասկնալ, թէ ինչո՞ւ կուժովին եւ գիտակցարար կ'ուզեն անհասկնալի գտնուայ: Վախն է, վախը, ուրիշներու նմանելու, սովորական ու ստեղծի երեւելու վախը՝ որ կը մղէ զիւրեք մտային պեղու մներու, ու զհոգային նահողատեքներու: Ամբողջ տասնամեակներ Հայաստանի բանաստեղծութիւնը մնաց քանի մը ճշգրտած կադապարներու մէջ եւ նոյնիսկ ամէնէն տաղանդաւորները չուզեցին զուրս գալ պարներու մէջ եւ նոյնիսկ ամէնէն տաղանդաւորները չուզեցին — չկրցան այդ կադապարներէն, ինչպէս Սփիւռքի բանաստեղծները չուզեցին — չկրցան — թափափել թէրէհան-Վարու ժանի այլապէս քաղցր լուծը: Ու հիմա որ, նոր մամանակները նոր մեւ եւ նոր խորք կը պահանջեն, մեր ճնարարները, Հայաստանի թէ Սփիւռքի մէջ, բիրտ խզու մով մը անցնալէն, տաղանդաւոր եւ ըզային, ճիշդ կը թափեն ստեղծելու համար իրենց սեփական արուեստը:

Համակերպի ձգտում մը անշուշտ, բայց որ չի համոզեր եւ արդիւնքի մը չի յանդիր, որովհետեւ, խորքին մէջ, իրենց բուն նպատակը նոր ըլլալը չէ

այնքան, որքան Հիներու ն պէս շրջայր: Կր ժուռան մէ՛կ քան: Ձեռն ու գեղ յիշել, որ բանաստեղծութեան մէջ — ինչպէս բոլոր արուեստներու ն — իրական նութութիւնը միշտ ենթաւոյց ու նի սեռին անանդութիւնները, ինչպէս նարտարապետութեան մէջ ամենէն յանդուզն շինութիւնը, ապագայապաշտ բոլոր ձեւերով եւ սյաջքներով, անպայման պէտք է որ ունենայ իր խորհրտեր, փոյթ չէ թէ արագիւր պէս մէկ սաքի վրայ կանգնի ըման գանդու անոյ:

Վարուժան մը կամ Չարենց մը, սաւստնաթիւ թոխչոններէ տտաջ, տարիներով իրենց Հինգ ժառանգութեան վրայ յանդ ու վանկ կը հաշուէին, ինչպէս Փիքասո մը, մարդկային գէճքն ու մարմինը ասարթագրիչէ տտաջ ասարթներով մարդը կը նկարէր... մարդու պէս, եւ մարդկային գէճքը կրնար յար եւ նման կտաւով մը ներկայացնել: Բունցի՛ք Նրապարակը լիցնող սա ասարթական, ասարթապաշտ նոր նկարչներէն մէկը, թուղթ ու մաախա տուէք ձեռքը, առջեւ նայ մարդ մը նստեցուցէք, որ նկարէ եւ գոնէ ժառանգոր նմանութիւն մը մէջտեղ բերէ: Կասկածելի է, որ յայտը: Բայց եւ ի՛նչ նոր աստացոյցիչ տաղարի: Տարփոկ գծադրո՞ղ մը կարծեցիք ասարթները: Ինք՝ ասարթական նկարչի է, պէտք է գուրս տայ իր Հնդկին խոս՛վորը — ճոթիւնու անկողնի սաւան մը — իր արուժանի՛քը — յուսացի արտոտ լուրին մէջ ներկեր, խառնուած ու թափուած կտաւի մը վրայ — աստիճանները — պատկած գանդակի մը մէջէն անորոշ բաներ մը կ'ելլեն ու ամբողջ պատատար կը լիցնեն: Մարդու՝ մը մարդագործի նկարը կ'ուզէք: Սխալ հասցելի եկած էք: Ատոր համար լուսանկարիչը կայ եւ իր գործերը:

Այսպէս եւ մեր այս նոր բանաստեղծները: Պահանջեցէք, որ բնու ունի բերթու ան մը գրեն, պարթիկ-անուշ-գողարիկ երգ մը, արիւնակի համար Գեղամ Մարեանին պէս, Նորենցին պէս կամ Մարմենին: Արդէն իսկ վերաւորեցիք իրենց արժանապատուութիւնը (ներողութիւն, պէտք էր բախի՛ք ի՛նքնաստութիւնը) նման արտարկներով: Իրենք նոր են, անոնք Հին: Ի՛նչպէս կարելի է: Ջանքացած են Հրեշտակներէն եւ Հրեշտակային ժրպար մեղեդիներէն: Արուեստ ստանաններն են իրենք, եւ կ'ուզեն ծառայել զարժացնող ու ցնցող ստանանայական այս արուեստին:

Սե ինչու ոչ: Ետքարէն ու մեղրէն ալ մարդ ի վերջոյ կրնայ գանել, երբ ամէն օր սեղան գրուին: Կծու, թթու, նոյնիսկ լիզի համերն ալ կը փնտտել մարդ: Սե անաստի՛ ա՛յդ են իրենք — կծու-թթու-լիզի: Եթէ չէք ըմբռնել իրենց գրածները, համ չէք ատներ, գացէ՛ք մեր ժառանգին: Իրենք, կ'երթան իրենց ճամբան — իրիկնապահի Արտիկանն ի վար... — գլուխները բարձր, չհասկցու ան բանաստեղծներու արտուժ փնտութեամբ...

Ճիշդ է, տղա՛ք, յոգնած ենք Հրեշտակներէն, եւ զէջ պիտի չըսելինք Եթէ յանկարծ ստանաններ յայտնուէին մեր գրականութեան մէջ — հատ մը ելած էր, բայց աւա՛ղ, ինքնաշարժ անձիտ արկած մը սառա տարաւ — այո՛, կրնար ստանանայանալ եւ լաւ մը խառնել մեղեդացած գրական Նրապարակը, տտանց երբէք ժողովուրդ, որ ստանաններն իսկ, անցնելէ տտաջ իրենց զարժանայի ու զարժացնող կոչութիւն, նախ եղած են Հրեշտակներ:

Ուրեմն, Հերիք զարժացնէք մեր ընկեր-ընկերու Հիները գրական այլ լանդակութիւններով: Սաղի ժամանակ մը կայ: Սե ժամանակ մը, լրջանայու: Սխալ չհասկցու ինք:

Սխալն ոտանաւորով գրելու եւ տաղաչափութեան պերին գտնայու Նրալէր չէ, որ կը կարդացուի: Կարելի է փառաս որապէս անտեսել, նոյնիսկ արհամարհել յանդն ու վանկը, մինչեւ անգամ մերժել ճշտ աղայնութիւնը, պայմանաւ, որ այդ բոլորին կոնակ զարժնող բանաստեղծը գտած լլլայ իր սեփական կշռոյթը, ներքին ճայել, եւ հաստատութ մնայ այդ ճայելին: Սեփական շնչու եւ կշռոյթ, — անա՛րանային, բանաստեղծութեան տտեղծութեան:

Սխաճանթնն յանպէրու հետ գործ չունէր ու երաժշտութեան կանոնները կա-
 մովին կ'անդիտանար, որովհետեւ իր լայն շունչը եւ հնչեղ ձայնը կը բաւէին
 իր խօսքին: Պէտք է գանկ այդ ներքին շնչար, ճանշնայ, զարգացնել, որմէ ետք
 միայն բանաստեղծ մը կրնայ երգել իր երգը: Առանց այդ «ինքնացու մին»
 չկայ բանաստեղծ: Ինքնաստեղծութիւնը — բառին բառական իմաստը վկայ —
 ինքն իր տիրապէր ըլլալուն մէջն է եւ ուրիշ ոչինչ: Այնքան կարեւոր չէ, թէ ինչ
 կ'ըսենք, որքան թէ ինչպէս կ'ըսենք եւ այդ ինչպէսը՝ մե՛նք ենք: Վարպէտը
 մը կտեսնու տառը տարբեր մարդիկ կը լսենք, որոնք նոյն խօսքը կը կրկնեն ու
 կ'անցնեն, բայց ոչ մէկը միւսին հետ կը շփոթենք, որովհետեւ իրաքանչիւրը
 կը ճանչնանք իր ձայնն, տանց դէմքերը տեսած ըլլալու: «Սիրելի եսրա տա-
 րան» ողբը եւ «Ես սիրելի, մեղք է սիրել» պաղատանքը՝ բացարձակապէս նոյն
 բանը կ'ըսեն — եւ ի՞նչ ստորակական բառերով — բայց երբեք Թահապետի
 չենք շփոթելք Չարեանին հետ, ինչպէս ակամբ ու նեցողը կրնայ զանազանել
 իւր թախը Թաւ իւր թախէն, փոյթ չէ թէ նոյն եղանակը լսուի նոյնանիչ լարերու
 վրայ:

Բարոյախօսական բաները գրեզը, վերջին հաշուով, բանաստեղծու-
 թեան մէջ չբեր գրեզն է, եւ նոյնքան գժուար:

Իսկ բոլորովին նորեկներուն, սկսելու համար, կարելի էր առաջարկել
 այդ իմաստուն և պոստպամին և մէկ ուրիշ փոփոխակը — գաի՛ր գրեզ...

ՅԵՏ ԳՐՈՒԹԵԱՆ...

Եւ այս մէկն ալ, «Ենթարարութեան հակառակ» է, եթէ ներկի է բար: Այ
 մէկ նորութիւն, ո՛չ «չխառնակի սանձ», ոչ ալ «ձայնեղ բար», բայց կայ բան մը,
 որ «չը բռնէ», առանց զարժացնելու եւ ցնցելու: Սովորական բաներ, սովոր-
 ական մտածումներ, որոնք սակայն պահը կը սահգծեն եւ արամադրութիւն
 մը կ'արթնցնեն: Միջոցառում ու նին: Յաջող բանաստեղծութիւն մը այն չէ, որ
 չիտացու մով կը կարգանք ու կարգայլ վերջ կը խզուի ինք բառերու կախարդան-
 ղէն — պարահանգէլի պնդալարգար գեղութիւնը իրեն՝ իրենց շրջուցիչ արդու —
 զարդերով — ոչ ոչ ա՛յն՝ որ բնութեան մէկ կողմէն եւ բառերն ու պատկերները մտ-
 ցուելէ հետք՝ գեւ շարունակուի մեր մէջ իր պաճատած ապրու մով, ինչպէս խո-
 րու նկ նայու անք մը, որ կատարած կը մնայ յիշողութեան, որու ան մէջ տեսնու ան
 ունքան գեղեցիկ ուրիշ: Ղէմքերը բոլորովին տարբեր եւ անխոս:

Ինչո՞ւ այս մէկը չի տպու որեր — հակասակ անձխտելի գեղեցիկութեան
 — եւ այն միւսը կը չմայլ — բացայայտելն նուազ գեղեցիկ ըլլալով հան-
 գերմ: Թերեւս անոր համար, որ ճշմարիտ գեղեցիկութիւնը կտրիկայ չէ գեղեց-
 կապիտութեան, լսթթիթի շարժելն, ինչպէս իբրաւ բանաստեղծութիւնը
 արու հասի եւ թեքնթի կանոններն:

Այս բանաստեղծութիւնը կատարակ է՝ յաջու մով, լեզուով ու պատ-
 կերներով, բայց չես գիտեր ինչ, բան մը կայ, որ կը պակսի իրեն: Այն միւսը
 տկար մասեր ու նի եւ տեղ-տեղ կը կազայ՝ բայց չես գիտեր ինչ, բան մը ու նի,
 որ կը կապի իրեն: Մէկու ն ու նեցած եւ միւսին շունչած այդ անբացարձակ
 րա՛ճն է ա՛նա, րա՛ճաստեղծ ընկերներ, բանաստեղծութեան լուսթիւնը: Իսկ
 այդ «բար» ոչ ոք կրնայ ապ մեզի, ո՛չ թերթողական արու հար, ո՛չ լեզուի

Նորարարութիւնը եւ ոչ այ նորութիւն չափարարող, բայց ոչինչ չբացող պատկերները: Այդ սրանքն ու նիւթ կամ շուկանք, եւ անիկա մեր մէջն է, մեր ծնունդն է:

Ու մեզք պիտի ըլլայ, որ բնութենէն օժտուած եւ ի վերուստ սրանիւն շնորհ ստացած տղաք — ինչպէս մեր այս թաթուլը եւ իրեն պէս ուրիշներ — կաշկանդէն իրենց ներշնչու մը... սխալապէս սանձերով:

Ուրիշն՝ Մարիա Եակոբեան ինչոք այս աղջիկը (Ինչոքը՝ Նախասանցիներուն առումով, որ մեր ինչոքին է) որ «թիւնի» սիրող մը չէ, լոյսին մէջ կ'ապրի եւ նորութեանց չկողմ ցործ չունի: Փոխարէն՝ ունի առաքիւնութիւն մը — իր ապրումները կ'առնէ պէս թուղթին յանձնելու եւ պարզ մարդոց չկողմ ցործ սիրով խօսելու արժանիքը: Նորութեանց եւ նորարարութեանց չ'առջ չկայ իր տողերուն մէջ, հարիւր տարի առաջ ապրող կամ հարիւր տարի վերջը գոյիք ոեւէ մարդ, ոեւէ աղջիկ՝ կրնար նոյն բաները բռնի նոյն բառերով, ու թեւեւ բռնած ալ ըլլայ, բայց կականը այն է, որ այս մէկը գտած է իր ճամբան եւ վախ չկայ, որ մոռորի:

Եւ ինչոքինքն սրանկու չ'ամէնէն ապահով կերպը ի՞նչ է արդէն, էթի ոչ անւարար խօսիլ ինք իրեն չեա ի՛ր բառերով եւ ի՛ր ճայնով, առանց երբեք ժառանգուելու, թէ կրնանք նմանիլ ուրիշին կամ ուրիշը կրկնել: Այսպէս եկող արարածներէն ո՛չ մէկը մի սին կը նմանի, ու էթի ամէն որ — ամէն բանաւտեղծ — յաջողի անաղարատ պահել իր ինքնութիւնը, մեզի պարզեւած կ'ըլլայ արդէն իրական նորութիւն մը, որ ինքն է:

Վերջ ի վերջոյ ի՞նչ են Դուրեան մը, Մեծարեան մը, Տէրեան մը — յիշու չու չափար ամէնէն զճիտ անուանները — ի՞նչ նորարարութիւն, արու հատի ի՞նչ հնարք, քերթողական ի՞նչ մեծ վարպետութիւն բերած են Հայ գրականութեան, անոնց գործերը սուտ լեզուներու թարգմանելով ի՞նչ նոր շնչու, ի՞նչ մեծ գաղափար, ի՞նչ փայլուն անսխալ կրնանք աւելցնել չափարող կային քերթողութեան հարուստ փաստակին վրայ: Այնչէ, կամ գրեթէ ոչինչ: Բայց անոնք մեր անկողնի տրտէքներն են ու ոչինչով վար կը մնան իրենց դասի սուտ բանաստեղծներէն, որովհետեւ կրցած են ժամանակին մէջ թիւրեղացնել իրենց սեփական ճայնը, անկեղծ շնչու, մարդկային հարգաստ ապրումները եւ այդպէս ալ կ'ապրին յաւիտեան: Կր բաւ է, որ անոնցմէ ոեւէ մէկուն անուր արաստանենք, առանց որեւէ տող յիշելու իրենցմէ, պարզապէս ըսենք Տէրեան կամ Մեծարեանց, Վարու ժան կամ Չարեանց՝ եւ արդէն իսկ առնուած ենք բարեխառնութեան մասնու որ կլիմայի մը մէջ, միայն ու միայն իր բառանշիւրին յատուկ ոլորտէ մը ներս, ուր կայ անուանին չեա եկող անոնց ճայնը, շնչու, շնչուութիւնը, ջերմութիւնը՝ անկախ ստեղծագործական փաստակին որակէն ու քանակէն, եւ անկախ... ջերմաստիճանէն: Բանաստեղծը կ'ապրի իր ժամանակին մէջ եւ ժամանակէն անդին՝ ոչ այնքան իր արու հատով, այլ պարզապէս իր անձնաբնուորով: Պարզապէս:

Պարզութիւնը ծնաւ անկեղծութիւնը, անկեղծութիւնը ծնաւ հազարգականութիւնը, հազարգականութիւնը ծնաւ անմիջականութիւնը, անմիջականութիւնը ծնաւ ջերմութիւնը եւ ջերմութիւնն է, որ ծնաւ բանաստեղծութիւնը:

Սրտի՛ ջերմութիւնը, ոչ ուղեղի: Ամէն:

Ա. ԾԱՌՈՒԿԵԱՆ

Թ. ԲՈՒՐՁԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ

••

Ու դեռ չկաս,
 Դատարկութիւնն ինչպէ՞ս լցնեմ,
 Յետ եմ կանչում իմ խոոված աստուածներին,
 Արարում եմ,
 Որ քեզ գտնեմ,
 Որ ձորերը շողով լցուեն,
 Մտներն իրենց սրգից ծռուեն,
 Որ կցկտուր կածանի տեղ
 Համբայ փռուի մի աշուոր,
 Ջրի նոր շիթ կախուի քարից,
 Ստուեր ու թաց արեգակուի:
 Արարում եմ, որ ինձ գտնես,
 Նուադուսն գտնեցնողուի,
 Իրիկնային իմ ստուերը
 Յիշատակի սանձի փոխուի:
 Ու դեռ չկաս,
 Դատարկութիւնն ինչպէ՞ս լցնեմ,
 Խուլ ականջս ինչպէս գնեմ ձայնեղ քարիդ,
 Ինչ բարբառեմ,
 Անպարպելի գոյութեանդ հիւրն եմ հիմա:

••

Դու հիմա գրաւոր նամբայ ես,
 Գնում ես, գնում ես, գնում,
 Ջայնդ բեր,
 Ականջս ծարաւ է,
 Կանչում եմ նամբորդներն անցած:
 Խնջոյքի այս երգը բարակ է,
 Կը ցնդի, ես կ'երթամ նորէն,
 Կը փնտռեմ, ետ կը գամ նորէն,
 Ջայնդ բեր,
 Ականջս ծարաւ է:

Մէկ-մէկու կը շրջեն օրերը,
 Կը գնան, ետ կը գան նորէն,
 Կը փնտռեն, չեն գտնի նորէն,
 Զայնդ բեր,
 Ականջս ծարաւ է:

.

Նայն գետի ափերն ենք
 Ես ու դու,
 Մեր ջուրը մեր միջով գնում է,
 Մեր նամբին, մենք անվերջ
 Փնտռում ենք,
 Նայն նամբի տէրերն ենք
 Ես ու դու:
 Ամպ եղաւ՝
 Փրփրում, ելնում ենք,
 Պարզ եղաւ՝
 Աներեր գնում ենք,
 Ծովերում մենք իրար
 Գտնում ենք,
 Նայն ծովի նաւերն ենք
 Ես ու դու:

.

Արտոյտուէին դաշտերս,
 Հունձր լինէր թեւաւոր,
 Երեւայիւր դու իմ մէջ
 Մանգազի պէս կարճ ու կեռ...
 Ծտ փախչէիր սարերը,
 Քամին լինէր գլխաշոր,
 Քեզ անձրեւով հասնէի՝
 Ինձ քո գիրկը տանէր տուն:
 Պոտուէին ամպերը,
 Համբան լինէր ցիրուցան,
 Մշուշուէին սարերը,
 Քեզ հասնէի, հասնէի:

ԹԱԹՈՒԼ ԲՈՒՈՐՁԵԱՆ



Մի սիրտ է միայն մեր ծնուած օրից,
Մի սիրտ է սիրոյ ու յացի համար.
Յանախ խելօք է ինքը իրենից,
Յանախ բոլորից խենթ է ու յիմար:

Մենակ է յանախ ու անօգնական,
Ինչքան էլ գօրեց լինի ու յամառ.
Երբ մարդն ապրում է միայն մի անգամ,
Մի սիրտը քիչ է մի կեանքի համար:

Ես էլ իմ կեանքը այսպէս ապրեցի.
Մէկը ի՛նձ սիրեց, ե՛ս չսիրեցի.
Մէկին սիրեցի, նա՛ ինձ չսիրեց.
Մէկն ինձ սրտագին երգեր նուիրեց
Երգերս մէկին ե՛ս նուիրեցի...

Ես էլ իմ կեանքը այսպէս ապրեցի...

ՄԱՐԻԱ ՅԱԿՈԲԵԱՆ

ԱՌԱԿՆԵՐ

ԲՐՈՒՏԻ ԹԱԶԻՆ
*

Գայր սոված ուր-մուր
 կը չափչփէր գիւղին ուր-
 Շուներն յանկարծ որ իմացան,
 Կատաղեցան, իրար անցան,
 Հաջ ու կանչով դուրս էջեցին,
 Գիւղէն հեռու հալածեցին.
 Լեզուն հանած, շունչը կտրած
 Հա, կը վազէ գայր խրտնած,
 Սոված փորով, սար ու ձորով:
 Քիչ մ'ազատուած հալածանքէն,
 Ետ կը նայի աչքի տակէն.
 Եւ ինչ տեսնէ ետեւը իր,
 Մեծ շուները չեն ներելիր.
 Բայց բռնուտի փոքրիկ թագին
 Հակառակ իր հեւքն ու հագին,
 Միս-մինակը, յանդուգն, արի,
 Դեռ վագելու կը յամառի.
 Ու գայն յանկարծ կը դառնայ ետ,
 Ու կանգ կ'առնէ թագիին հետ:
 — Տարտդ ի՞նչ է, ա շան լակոտ,
 Այդպէս կատրած ու կրակոտ.
 Հաւն եմ տարեր ես Թարթոսի,
 Գառն եմ կերեր ես Մաթոսի,
 Համբարձումի շունն եմ խաբեր,
 Գիւղէն հաներ ու պատռտեր.
 Ճիշդ է, թագ գան, պատասխան տամ.
 Թէ՛ քու տիրաջդ անպիտան, ի՞նչ եմ բրեր.
 Կաւն ու կն՞ուսն եմ փախցուցեր,
 Կուժը կոկո՞րդս եմ անցուցեր,
 Որ կատրեր ես ու կրակոտ
 Դադար չես տար, ա շան լակոտ:
 Ըսաւ, պրծաւ, յարձակեցաւ,
 Թագին ըրաւ կտոր-կտոր,
 Կատրած գայլի սոված սրկոր:

ԱՐՄԱՏՆԵՐՆ ՈՒ ՏԵՐԵՒՆԵՐԸ



Տերեւները ծառի ծէրին,
 Ասում էին գեփիւններին.
 — Բա, էս հովտի արդն ու գարդը,
 Մենք չե՞նք ու մեր խիտ սաղարթը.
 Ի՞նչ կը յիներ ծառի հալը,
 Թէ չիներ մեր հով տալը:
 Ամբան շոգին.
 Ամբան տափն.
 էս ծառի մօտ ո՞վ կը գայ, ո՞վ,
 Թէ որ չտանք մենք հով ու գով:
 Արշալոյսին,
 Վերջալոյսին
 Մեր մէջ սոխակն երգ չէր ասի,
 Դուք, գեփիւններ,
 Համասփիւններ,
 Մեզ հետ անուշ չէիք խօսի:
 — Բաժին չունե՞նք այդ պարծանքից.—
 Ձայներ եկան ծառի տակից:
 — Ո՞վ է,— ասին տերեւները:
 — Այդպէս բազմած տերեւները,
 Բա դուք իսկի չէ՞ք ամաչում,
 Որ մեզ երբեք չէք գնաչում:
 Ձեր ծնունդը,
 Ձեր սնունդը՝
 Գարուն գալիս
 Ո՞վ է տալիս:
 Մենք այս ծառի արմատներն ենք,
 Ձեր ու ծառի գլխի տէրն ենք.
 Ինչ էք, ինչ չէք,
 Կանաչեցէ՛ք,
 Բայց այս բանը լաւ իմացէ՛ք,
 Տերեւներն են գնացական,
 Արմատները մնացական:
 Արմատները որ չորանան,
 Ծառ ու տերեւ ո՞ր կը մնան:

ԱԹԱՐԷԿ ԵՆՎՈՅՆԱՆ

ԱՌԱԿ



Մի մարդ անցնելիս՝ անտառի փոփոխվ,
 Հսեց ոչխարի անյոյս լաց ու կոծ.

Հայեացքը շրջեց՝

Տեսաւ, որ մի գայլ ահաւոր ու մեծ,

Ոչխարին բռնել՝ քաշում է քափով

Դէպ՝ անտառը մուր:

Մարդը շուտափոյր

Մահակի գորեղ զարկերով անշեղ

Փշրեց գազանի գլուխն ու ժանիֆ,

Եւ ոչխարն առած ուրախ գնաց տուն:

Գիշերն ոչխարը քնեց երջանիկ,

Միւս օրը սակայն, վազ առաւօտեան,

Մարդը սուր սրեց դանակն ահագին,

Թշուառ ոչխարին վայր զարկեց գետին,

Դանակը սրած

Դրեց կոկորդին.

Ոչխարը՝ ապշած

Նայելով մարդու աչքերին մռայլ՝

Հառաչեց, ասաց:—

— Երէկ փրկեցիր ինձ գայլի ձեռքից,

Բայց այսօր, ո՛վ մարդ, դու ես դարձել գայլ...

ԱԻՆՏԵՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ



ԱՌԻԻՄՆ ՈՒ ԱՐՋՈՒԿԸ



Առիւծ արքան վերին տէր էր,

Ձէր աշխատէր, միայն կ'ուտէր.

Անասուններն իրեն համար

կը բերէին որսեր յարմար.

Պետն էր եզած պարարտ ու գէր,

Անտանելի մի շատակէր:

Միշտ աւելին կը պահանջէր.

Քիչ բերողին շատ կը տանջէր.

Ժողովին մէջ մի օր ըսաւ.

— Ձեր հանգստի ժամը հասաւ

Հպատակներս, վեց ամիսէն

Հրաժարիմ պիտի միսէն,

digitised by A.R.A.R.®

Պիտի ոչինչ լափեմ, ծամեմ,
Տասը տարի պիտի ծումեմ,
Պիտի տամ ձեզ բաժինս արդար:
— Արջուկն ըսաւ. «Ատ ըսածիդ չեմ հաւատար»:
Շարունակեց արքան իր հառ.
— Կ'ընեմ ըսածս ես անպատեան.
Պիտ' ըլլայ ձեր փոր միշտ լիք,
Պիտ' ունենաք շատ ուտելիք,
Օրն երեք հեզ առատ սեղան,
Որսերն անուշ պիտի տեղան,
Պիտի որսամ ես անդադար:
— Արջուկն ըսաւ. «Ատ ըսածիդ չեմ հաւատար»:
Շարունակեց արքան իր հառ.
— Վկայ ըլլայ թող այս կանառ,
Պիտ' քլլայ ձեր կեանքն ուրախ,
Ամէն գիշեր խննայք, խրախ.
Պիտի ուտէք անյագաբար,
Պիտի դառնաք մեծ խմբապար,
Կը խոստանամ երգ ու կիթառ:
— Արջուկն ըսաւ. «Ատ ըսածիդ չեմ հաւատար»:
Արքան եղած էր հռետոր.
— Ձեզ սեկեմա կ'ըլլամ, մենտոր.
Կան որ կ'ընեն լայն-լայն խոստում,
Յետոյ լայնփին կ'ընեն ոտսում'
Թէ կը ստեմ բիւր մեղք կրեմ,
Խօսքս արիւնով կ'ստորագրեմ,
Բարիքս յիշուի թող դարէ դար:
— Արջուկն ըսաւ. «Ատ ըսածիդ չեմ հաւատար»:
Առիւծն ըսաւ ատ արջուկին.
— Թէ ընդմիջես հառս կրկին.
Քու արիւնդ կը դատարկեմ.
Օրը վեց ժամ քեզ կը տանջեմ,
Լեզուդ, աչքերդ ալ կը ջնջեմ,
Դեռ պատիժներ շատ գէշ կու տամ:
— Արջուկն ըսաւ. «Ատ ըսածիդ կը հաւատամ»:

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԱՒԱՆԱԿԻՆ ՈՒՂԵՂԸ



Առիւծ արքան, ձեր ու տկար.
Ամիս մը կար կը տփար:

Սաստիկ ցաւով հիւանդ էր.

Հոգին պիտի աւանդէր:

Այ կը հոտէր գերեզման:

Տասր բժիշկ չկրցան իրեն բերել մէկ դարման.

Իր որջին մէջ շուրջն իրեն բոլորն էին անշշուկ:

Եկաւ յովագն ու ըսաւ. «Պէտք է քեզի մի իշուկ.

Հարկ է ուզեզը ուտես, որ սոսկալի այդ ցաւէդ
Բժշկուիս առ յաւէտ»:

Առիւծն յանկարծ բարձրացաւ

Ու մոնջեց. «Կ'իմանա՞ք, բերէ՛ք ինձ մի աւանակ.

Ուտեմ անոր ուզեզը, որուն մէջն է իմ դեզը»:

Կենդանիները կը նային միայն մէկուն երեսին.

էջ գնելու պաշտօնը կը յանձնուի ազուէսին:

Կը ճամբորդէ մեր ազուէսն, հասնելով դաշտ մը դալար,

Ուր էջ մ'ամբողջ իր ձայնով գիլ կը գոռար, ու կու յար:

Կը մերձենայ այդ իշուն, կ'ըսէ. «Ինչո՞ւ դուն այդքան

Կու լաս, կ'ողբաս, ով եզրայր, գեռ չմեռաւ մեր արքան,

Թէ՛եւ հիւանդ է, սակայն, դեռ կ'ապրի ան ու կ'ըզայ

Հպատակներն իր տեսնել ու նուիրել մի ընծայ.

Պարտէ՞ք է երթալ իրեն մօտ, առնել իրմէ մի աւանդ.

Ձի դու իրմէ շատ սիրուած, մէկ գաւակն ես մանաւանդ»:

էջը, հպարտ, միասին վարպետորդի ազուէսին

Կը հասնի որջն արքունի, առիւծն յանկարծ տեսնելով

Իր միակ դեզն անուանի, իշուն վրայ կը խուժէ,

Որ իր ցաւերը բուժէ. էջը սակայն կը խրտչի,

Ամբողջ ուժով կը փախչի:

Կ'ըսէ ազուէսն. «Ով արքայ, պէտք էր մի քիչ համբերել,

Պէտք է նայնիսկ համբարել, պէտք էր որ էջն ապիկար

Ինքն իր ոտքով քեզի գար»:

Կենդանիները կը նային դարձեալ մէկուն երեսին.

էջը նորէն բերելու գործը կու տան ազուէսին.

Կը թափառի մեր ազուէսն, կը գտնէ էջը նորէն.

Սրամտութեամբ կը ստէ. «Ձեւ ամչնար, անօրէ՛ն,

Կոպտութիւնդ պէտք էր հետդ մինչեւ հող բերել,

Նրբ թագաւորը կ'ուզէր քեզի հօր պէս համբարել.

Հիմա արքան վշտակիր իր պոչով գիմք կը ծեծէ.

Իր սիրելի գաւակէն նախատակած, կը հեծէ»:

Կը զզրայ էջը սրտանց, եւ ազուէսը իր առջին

Կը մտնէ խորը որջին: Կը յարձակի թագաւորն

Ու էջն առած ոտքին տակ գայն կ'ընէ էջ նահատակ:

Գլուխն ապա յախջախած կը փնտռէ բնդերկար

Ուզե՞ր-ուզե՞ր որ չկար: Ու կ'որոտայ. «Աս ի՞նչ է,

Ուզե՞ր բուած բան չկայ»: Կ'ըսէ ազուէսն.

Գող ու գայլի հոտն էլ չի գգայու:
 Իր էքի տակ էլ,
 Շան օրն է բնկել՝
 էլ տուն չի պահէ, ու մարդ անբանը
 նաւակից դէպի ծովն հրեց շանը.
 Թշնամու նման
 Ծովն հրեց նրան՝
 Իր հաւատարմին,
 Իր հին մտերմին:
 Ապշեց մի վայրկեան դողաւար շունը.
 Նա, որ տարիներ պահում էր տունը,
 Հսկում էր բունը տիրոջ ապիկար:
 Գայլի հոտն անգամ չէր թողնում մօտ գար,
 Ձմրան գիշերն էլ՝ հագար գայլով լի,
 Բայց օր ծերութեան, հանդիպեց գայլի:
 Մարդը հրում էր, որ ծովը ձգէ,
 Շունը նզնում էր, որ կեանքը փրկէ,
 Տիրոջն էր կաշում՝ կառչում թաթերով,
 Լուռ կատաղութեամբ ու թէ լուռ սիրով,
 Նայնիսկ աչքերում արցունք երեւաց:
 Բայց, երբ որ մարդն էլ կատաղեց, հեւաց.
 Երբ անսիրտ մարդն էլ անմիտ կատաղեց՝
 Ծուռեց նաւակը՝ ծովն ընկաւ՝ թաղուեց.
 Ծովն ընկաւ մարդն էլ, բայց տես, ինչ տեսաւ,
 Շունը խեղդուող տիրոջը հասաւ
 Բերանով իսկոյն
 Բռնելով մարդուն
 Լողալով՝ մարդուն դուրս բերեց ծովից.
 Եւ ինքը մեռաւ իր սրտի ցաւից...

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ



Բ. ԵՂԻԱՑԵԱՆ

ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԻՆԸ

ԱՌԱԿԸ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Մարդու մէջ աստուածային ժառանգը իր իմաստութիւնն է: Ու մարդու այդ ստեղծարար իմացականութիւնը, գործերու ընթացքով ու սերունդներու կեանքով, արտայայտուած է բազմաձև՝ իբրև: գիտութիւն, իմաստասիրտութիւն, կրօնք, արուեստ ու գրականութիւն:

Ինչ որ սգրականութիւնն էր կոչուել, սակայն, բազմաարար նո՛ր մէկ արտայայտութիւնն է մարդու մէջ աստուածաշնորհ իմաստութեան: Մարդկային իմաստութիւնը, գրական արուեստի վերածուելն առաջ՝ բազմաթիւ սերունդներու մէջ՝ չողիներու գաստիարակելը իր գերը կատարած է իսսֆի արուեստով:

Ու մարդկային այդ բանաւոր իմաստութեան անդրանիկ ծնունդները եղած են դիցարանութիւնը, առասպելավէպը, լեգենդը, աւանգավէպը, դիւցազնեքզութիւնը, եմփաթը, գրայցը, — իր պատմութիւն մէջ՝ չերուտ պարտիկը դիւցալիմէն չեազնեալ մարդկային մկարտգրի ժառանգելով — միմեկն, որ ի վերջոյ ծնած է առակը, որուն պիտի յաջորդէին գրական միւս սեռերը՝ պատմագրութիւն, քառերգութիւն, վէպ ու շարժ պատմութեան:

Արդ, առակը պէտք է ճանչնանք իբրև: մայր գրական սեռերու:

Ամբողջ գրականութիւնը բազմաձև գ մէկ բնոյշայնութիւնն է առակին:

Առակը մէկ խոշորացոյցն է ճշմարտութեան:

Այդ է գրաւչութիւնը առակին, եւ անոր հրապուրիչ արուեստին չետեւելով է, որ մարդու որդիներ, անցնելով միւս գրական սեռերու անտաննութիւն՝ սիրով կ'երթան կր գիտեն մայր գրականութեան, որ է առակը, անկի յետոյ չամար աշխարհի եւ արարածներու մասին պարզ ճշմարտութիւնները:

Որովհետև, սկիզբները աստուածայայտ իմաստութիւնը մարդոց կը խօսէր միայն զից մեհնեական խորանին՝ խորհրդապատկեր լեզուով ու հարցու կային պատգամներով, իսկ զից ցարձակաբար կ'երգէին միայն կրեական պատգամներով, իսկ զից անցնելով զերմարդկային զիմանալու արուեստով: Իսկ երբ մարդու որդիները խելահաս եղան ու սիրապան զից ու զից ցարձակաբար կ'արդանիքներուն, իմաստութիւնը չբեց աւանդատու իր մեհնեանները, եւ իջաւմաստ մարդկային իրական բնակավայրեր եւ սխառ խօսիչ մարդու հասկացած կենդանի լեզուով:

Ու մարդու որդիներուն հասկացած ամենն պայծառ եւ ամենն մեղրալից լեզուն առակներու լեզուն է: Որովհետև, առակը մարդուն կը պարզը ճշմարտութիւնները հարուցատու քոչորովին բնասանի պատկերներով: Գրականութիւնը կը ճշմարտութիւն սկսած եղաւ, երբ առասպելավէպն ետք ծագեցաւ առակագրութիւնը, որ չեազնեալ գարդապա: իր ճիշտ արուեստներովը, միմեկն գրականութեան արգի առաինանները, վէպ ու պատմութեան:

Ուստի՝ առակագրութեան մասին խօսիր՝ գրական հին ու լուսն մէկ սեռի մասին խօսիչ չէ, այլ գրականութեան ամենին կենսու նակ ու շարու նակ կական մէկ նրակը նանչնայ է:

Արդի գրականութեան եւս անգացառելի մէկ մասն է առակագրութիւնը:

Ուստի՝ հրահանգիչ է խորանայ առակագրութեան նանչնայու մին մէջ:

Ա.— ԱՌԱՎԸ ԻՆՉՈ՞Վ ԿԸ ՏԱՐՔԵՐԻ ԴԻՑԱՐԱՆՈՒԹԵՆՆԵՆ ԵՒ ԱՌԱՍՊԵԼԱՎԵՊԷՆ

Ճիշդ է, թէ առակը ծնած է գիցարանութենէն եւ առաւելագլուկէն, բայց անիկա ասորեր է երկու բնէն այ:

Ամենին յայտնի ասորերութիւնը այս է,— գիցարանութիւնը իրեն հիմ ու սուսայ ու նի դից կեանքը, թէեւ մարդու երեւակայութեան ծնած բլլայ եւ մարդկային նկարագրի արտացոլացնէ: Մինչդեռ առակը իրեն հիմ ու նի ուզ-գակի մարդու կեանքը, թէեւ երբեմն գից կամ կենդանական կամ բուսական կեանքի պատկերներով ներկայացուած բլլայ: Իսկ առաւելագլուկէն, թէեւ տուելի հետացած բլլայ գից բնութեանն ու մտակցած մարդկային բնութեանն, բայց առակութիւնը մէջ կը պահէ գեր-մարդկային նկարագրի խառնուրդ մը, եւ ուստի՝ չի կրնար նոյնանայ առակին հետ, որ՝ ի՞նչ առաւելագլուկէն կատուցուած բլլայ՝ խորքով միշտ մարդկային կեանքը կը պատկերուի որ:

Եւ ինչո՞ւ մարդ արարածը ստեղծած բլլայ գիցարանութիւնը ու գից-ցաղնագլուկէն, որ կ'ուզէ պատմել մարդու բնութեանն վերէն կենդանութեան խորհուրդը:

Պատճառներն մէկը այս պէտք է նկատել, թէ հին մարդը, վայրի բնութեան մէջ նստած եւ անոր հակայ ուժերուն գլխ առ օրեայ իր պայքարին մէջ շփոթած, առանց լուս իմանայու, թէ ի՞նչ են գիցը շրջապատող բնութեան վարիչ ուժերը եւ իրեն պատանոց գէպերու պատճառներն ու օրէնքները, ինք-գիցը տկար գգացած է այդ ուժերուն գլխ: Ուստի՝ մէկ կողմէ բնութեան այդ ուժերը անհնարաւ որած, աստուածացուցած ու պաշտած է, ազնունքի խոստովանելու կամ բերքի ու յաջող գործի շնորհիւն արժանանայու տեսնով եւ, միս կողմէ՝ իր ստեղծութեանն զգացումը իրմէ վաճած է՝ շուրջը ստեղծելով իրեն սպաշտպանն հոգեկան հակաճեղքու տիպարներ:

Ինչպէս մանուկին հոգեբանութեան մէջ կը հանդիպինք իր տկարութեանը վարձատրելու այդ զգացումին, որով ան կը հպարտանայ իր գծնէ եզրորտ կամ «Շորտ» ուժովը, նոյնպէս նախամարդը իր տկար հոգեւոյն ապաւէն գտած է իր երեւակայած հակաճեղքու պաշտպանութեան մէջ: Ազնունքու ու պաշտարներու պահուն, ան իր վտիւր փարատած է՝ երգելով հորներու յաղթանակները, ինչպէս կ'ընէ սաղմոսերուսն:

Տէր ուժ իմ է եւ ապաւէն իմ.

Ես ումմէ՞ երկեայց:

Երկրորդ պատճառ, ժողովուրդներու առաջին պատմութեանը առաւելագլուկէն ելած են, այսինքն՝ աստուածասերու նոյն հերոսներու գրոցները, որովհետեւ անոնք նախապես են, թէ իրենց նախահայրերը աստուածներէ սերած են, այս կերպով իրենք իրենց ցեղային ազնուականութեան հասարակ մը արժարելով:

Ինչոր ժողովուրդները իրենց հնադոյն գրոցներուն մէջ ունին աստուածէ մը սերած բլլայու առանգագլուկէն: Ամեն ազգ տալլա՞ կոչուելու համար եւ միացեալ ցեղային ամբողջութիւն մը գաւանդու համար՝ հարկ զգացած է

ու նենայտու սեփական աստուած մը, որ իր հայրն է և որուն զաւակն է ինք: Բոյոր ազգերու հասարակաց հօր և համայն տիեզերքի միակ Աստուծոյ հաստոր շատ ու շ յայտնուած է մարդու, որդիներու միտքին մէջ, բաղարակրթութեան որոշ բարձրացու մէջ մը ետք: Ազգրնական հայեացքի մէջ՝ աստուածու թեան բմբունու մը եղած է տեղական և ցեղախմբային:

Օրինակ. ՚ի՛ն կոփպտացիներ կը դաւանէին, թէ իրենք ծնունդն էին Ամժունի, որուն ուղղակի սերունդն էր փարաւոնը և այս հանգամանքով ան կը վայելէր զԼըփիտանական անվիճելի իրաւունքներ: Թագաւոր աստուծոյ ներկայութեան կը մարդոց մէջ:

Նմանապէս, Նրեաները կը հաստատին, թէ իրենք միակ զրնորեայ ժողովուրդն էին իրենց ցեղապաշտպան Եհովային, որ այլամերձօրէն միայն ճիշտայնէր որդիներուն և աստուածն էր, միայն Իսրայէլի հողին վրայ բնակու թիւն հաստատած: Աւելի ուշ գարեհրուս, սաղմոսերգական ու մարգարեական գրականութեան մէջ է, որ պիտի շեշտուէր Աստուծոյ տիեզերականութեան հաստոր:

Նոյնպէս ՚ի՛ն յոյները հպարտ էին իրենք զիրենք ուղղակի ծնունդները դաւանելու ողիմպարնակ Չեւս աստուծոյ նահապետական երջանիկ բնասնիքին, իրենց իմաստութեան ու պատերազմներու մէջ միտ պաշտպան ու նենայտ միտ աստուածները:

Հայեր ևս ծնունդն էին այրարասարնակ Հայկ Պեպուն, որ — այսօր ամէն իմաստուն հայ յաւ գիտէ, թէ — նահապետ մը բլլայով հանդերձ՝ աստուածացուած Որինն էր:

Եւ այսպէս, ամէն մէկ ազգ ծնունդն էր իր ցեղային աստուծոյ:

Արդ, մարդու առաջին հերոսները աստուածները եղած են, և զիցարանութիւնը պատմութեան կ'այդ աստուածներուն:

Ժամանակի բնթացքին, սակայն, մարդ արարածը հեպտեկոտ հասուննայով իւր հաս եղած է, թէ մէծ հետու որութեան մը կայ աստուծոյ և իր միջև: Սոսի՛ ան ջանացած է հետու որութեան այդ անջրպետը կամ ըջի... և տեղեղծած է զից և մարդոց խառն նկարագիրներու ներկայացուցումը իր գիցցաղնավէպերով: Աստուածները վար կ'իջնէն իրենց խորհրդածածու կ'լեռներէն ու կը խառնուին մարդու որդիներուն հետ, և այդ երջանիկ կենցաղն կը ծնին մարդ-հսկաներ: Դիցարանութիւնը տեղ կու սայ գիցցաղնավէպի, որ աստիճան մը աւելի ժօտ է մորթկային բնութեան:

Այսպիսի տիտաններու մասին կը զիցցաղնեղ Պորենացի մեր Պասմահայրը, թէ աստուածները խառնուեցան մարդու որդիներուն հետ ու ծնան հերոս-հսկաներ, որոնցմէ մէկն էր Հայկ:

Ահեղք և երեսիլիք առաջինն ի զից, և աշխարհի մեծամեծ բարեաց պատճառք, որ սկիզբն աշխարհի և բազմամարդութեան... և ի սոցանէ հատեալ գտան Ազգ Ակայիցն յազրամոգամ մարմնով և վիթխարի... Բորոց մի է Յուպետոսիան Հայկ, անուանի և քաղ. գեղապատշաճ անձնեայ, քաղաքանցուր, խայտակն և հաստարագուկ (հոր. Ա. — Թ. Ժ.):

Աջանչելի է նկատել, թէ Հայկական միտքի ստեղծած գիցցաղնեները, իրենց վայրի բնութեան գիմաց՝ զրական և բարի ճկարագիր ու նին. աննք շակիկն են աշխարհի և բազմամարդութեան նախ: Ե՛ւ մեծամեծ բարեաց շակիկն են աշխարհի և բազմամարդութեան նախ: Ե՛ւ մեծամեծ բարեաց պատճառք ու զեղեցիկ: Մարդու որդիներ իրենց վայրած բնական բարուպատճառք ու զեղեցիկ: Մարդու որդիներ իրենց վայրած բնական բարութեան և աշխարհայինութեան ու բիւ բացատրութեան շին կրցած գտնել, քան նկայայաղթ գիցցաղնեներու ու մե ու աշխատանքը, և աստով սնուցած են իրենց մէջ ևս տեղիք զէպի բարութեան և աշխարհայինութեան:

Աստուածներու և մարդոց խառնակենցաղութեան ամէնէն մերկ գիցցարանական մէկ աւանդավէպն է երբայական Թմնոց գիրքին մէջ արուած

պատկերը «Աստուծոյ որդիներուն» և «մարդոց ազդեցիկներուն» երջանիկ
ամուսնութեան մասին:

«Եւ տեսեալ Որդւոցն Աստուծոյ զգոտերս մարդկան զի զեզեցիկ
էին, առին իւրեանց կամայս յամենեցուն զոր բնութեցին... եւ յետ այնորիկ
իբրև մտանէին Որդիքն Աստուծոյ առ դստերսն մարդկան, եւ ծնան իւր-
եանց որդիս: Առաւ էին Սկայքն որ յախտեմից, արք ամուսմիք» (ՊՈՆՂ. Զ.
1-4):

Սուրբ գրոց մէջ պատկանուած «Սկայք» ի տեսակէսին պատկերը
տարբեր չէ երբեք Թորենացի պատմած Նեթանաս Նուրեան «Սկայք» պատ-
մութենէն: Երկուքն այ գրուածն են մարդու առաջին զից ցաղնազկ պերու:

Եղևի սուրբգրական ամբողջ պատմութիւնը այսպիսի մէկ խառնա-
շիւս գիցարանութիւն է ու լեզուաւ, սակայն գեղեցիկն գերաբարձրաբար ան-
միաստուածութեան մեծ, բայց գերջամուս բնութեան մին շուրջ: Իր նախնա-
դոյն չի տուածքին մէջ, բայց այդ գիցարանութեան, Աստուած առաւ օտեան
զով օղով սփար կ'իջնէ, հոգին վրայ արուպիկ ստերով կը շայլ ցօղով թրջած
ստուներու մէջ, ու հանդիման չկը հոտուրայս: Հոգին ու ծագիկին բուրմուսնք
իր շուրջ: Այդ պարտազի գարգաւաններու մուտքին, կը սպասեն ճերմակ սուրբ
պատկաններ: Այնպէս կը ծագիկ կեանքի եւ անմահութեան ու գիտութեան
ժամանակ: Ու գարնանային այդ երջանկութենէն ներս կը սողոսկի խորաման-
կութիւնը՝ օձի լեզուով:

Եղևականին հետեւող սուրբգրական միւս պատմութիւններն այ —
Աշտարակաշինութիւն, Զրհնագ, Սողոմ-Գոմոր, եւ այլք — նմանապէս խառ-
նն գիցարանութեան, ամբողջ Հնդկաստանին մէջ: Մեծ նախնայեաներ Ար-
բանաբի, Իսահակի, Յակոբի եւ Յովսէփի, նոյնպէս Մովսէսի պատմութեանց
մէջ սակաւին խառն է գիցարանային տարբեր, հետզհետէ դէպի մարդկային
նկարագիր փոխանցուած շեշտով, մինչև որ «Ընդամատնանքն» կաթ «Թա-
ղաւորաց» գիրքերու պատմութիւնները կը զգենուն գերակշիւս օրին մարդ-
կային նկարագիր, թէև անդ-անդ սակաւին կը խառնուի չին գիցարանական
նկարագիրը:

Երբորդ մէկ պատմուած է, թէ չին առաւելազկ պերու ն մէջ կը բիւրեղա-
նան նախնացոյն մարդու կեանքի իմացու մն ու աշխարհաշայնացքը: Օրինակ,
չին յու նական գրականութեան մէջ, Հոմերոսի «Իլիական» ու «Ոդիսական»
նք ամբողջ գիցարանութիւն ու զից ցաղնազկ պերու, խառն՝ մարդկային տեմ-
զով: Եւ Հոմերական թանկագին այդ գործերուն գիտաւոր արժէքը, բայց մեզի,
անոնց շարականքն աւելի՛ դիցարանական հանդամանքն է: Հոմերոս սքան-
չելի սկզբնաղբիւր է չին յոյներու եւ չին մարդոց իմացու մներու ն՝ կեանքի եւ
աշխարհի մասին: Մա՛նաւանց «Իլիական» մարդկային իմացու մներու ն՝ կեանքի եւ
գոտարձախի մէկ կասակերպութիւնն է: Այնպէս, ողբիմարանակ աստուածներու
երջանիկ ընտանիքը կ'այլիկ ճիշդ մարդկային ընտանիքի կրկնապատկերով —
իրենց սէրերով, կոտորելով, նախանձներով: Հոմերոսի գիրք պարզապէս
խոշորացուած տիպարներն են երկրարանակ մարդերու, ասոնց թերութիւններով
եւ առաւելութիւններով: Այնպէս, աստուածները իրարմէ կը նախանձին եւ
իրարու դէմ կը դաւեն, վարք կուտոց մարդկային բանականներու հախն պահու-
թամ՝ կը խանդարեն իրարու ծրագրերն: Եւ նոյնիսկ Ջեւս՝ աստուածներու
հայրը՝ գերմ չէ այդ նկարագրին:

Օրինակ, շատ հետաքրքրական տեսարան մըն է այն, ուր փաստահանք իր
աթոռին բողմած Ջեւսին կը մտանայ աղերսագին շատուածու չին Գորաւ եւ
Ջեւսի մուսկերու ն փարկով՝ կը պաշտօն շնորհք մը իր դաս կի կեանքին...
Իսկ Ջեւս գայթակղած այդ կանացի համարակ մտանքու մէն, գայն մէկդի կը
հրէ իր մուսկերն, թէ — Հեռացի՛ր, շուտ կորսուէ՛ իմ ընդէս... Հիմա երէ

նութիւն եւ առասպել չին մարդու գիտութիւնն էր, որ թէ կեանքն ու բնութիւնը կը ներկայացնէր չրաշապատում մեկերով, բայց զոհացում կու տար մարդու ներքին հոգեկաշտ բնութեան ու որոնող միտքին:

Օրինակ, աւանդավկ է Լուսաւորչի Քոր Վերապն ու Կանթեղը, առասպել է արեգնագեղ Վահագնի ծնունդը, առասպելներ են՝ Արտաւազդի կալանու մը վիւապներու կողմէ, Մամիկոնեան քաջ Մուշեղի մարմինէն աւազատուած գլուխին եւ միացում մը յարալիզներու կողմէ, կամ սասու նցի վերջին շարաւիղ Մների փակուած ճեղքուած ժայռի ետին, քարայրի մը մէջ, առասպելներ են Մծրնայ Յակոբ Նայրապետի ազրի բը եւ Պետրոս Գևորգարծի կողմէ գետը եւ գլուխի բը ազրի բը գործնելը, կամ Նարեկացիի ապակուած ազու ներներու վերստին կենդանացումը...: Բայց այս առասպելներու ն եւ աւանդավկութիւն միջոցով չայ ժողովուրդը արասայտում է իր տեղերը, իր հայեացքները, իր հոգին: Եւ ո՛վ պիտի ուզէր չրաժարել այդ առասպելներէն ու մերկացնել իր ցեղին պատմութիւնը բանաստեղծութեանէն:

Հայ չին մատենագիրները առասպելաչիւս պատմութիւն տուած են մեզի, բայց անոնց առածը միայն ճառասպելօ չէ եղած, այլ եղած է հայու հուսաւորն ու աշխարհահայեացքն ու հոգեբանութիւնը: Առանց այդ աւանդավկութիւնն՝ անծանօթ պիտի մնար չին մարդու իմացական ու բարոյական աշխարհը մեզի:

ԺԹ. գարուն արթնցող մեր ազգային գրականութեան մէջ եւս՝ մեր ժողովուրդի ամէնէն թանկագին ստեղծագործութիւնները կը բերեն Ղազարոս Առաքեանի, Աթորեկ Քնկոյեանի, Գարեգին Սրուանձաւեանի, Յովհաննէս Թումանեանի, Աւետիք Իսահակեանի, Վրթանէս Փափագեանի, Ռուբէն Զարդարեանի եւ բացմաթիւ այլ մշակներու հուսաւորն չեղբայրները, որոնք հայկին են ժողովրդային հոգեբանութեան:

Այսպէս է մարդ արարածը, ան կ'առասպելաբանէ, Հերոսասիակ եւ սասու անային նկարագրով կը զգեցնէ իր պաշտած գէժերն ու անոնց գործերը: Առասպելականացում մը մարդու ներքին ու խորունկ, նոյնիսկ ենթագիտակից մէկ պահանջն է: Մարդկային հոգիի այս ներքին պահանջքն են ծնունդ առած իր չերոսպատում գրականութիւնը եւ արուեստը:

Ամէն գրական գործ չերոսպատում մըն է, ուստի՝ առասպելաբանութիւն:

Մենք երբեք չյաւակնինք, թէ այսօր գերծ ենք առասպելներու հուսաւորն եւ առասպելականացում մի չեթանու արտօք: Մենք ալ այսօր շարուսանակ կ'առասպելայեանք մեր մեծ ղէժքերը: Կ'առասպելագեանք Անգրաւիկ փաշան, անոր անուան ու յիշատակին շուրջ հիւսելով սքանչելի ղէպեր ու գրուաղներ: Նոյնը կ'ընենք, երբ կը խօսինք կոմիտասի մասին, Քրիմեան Հայրիկի մասին, կը փորձենք անոնց պատկերը բարձրացնել, անմարմնացնել, լուսեղինացնել: Ու նոյնը պիտի շարուսանակենք ընել յաջորդ սերունդները՝ նոր չերոսներու մասին:

Մարդկութեան ամբողջ պատմութիւնը չրաշաչիւս առասպելաբանութիւն մըն է: Եւ առասպելներ յունեցող ժողովուրդ մը գուրկ կ'ապրի կենսութեան թեւէ, ուստի՝ դասապարտուած է մնայու անարուեստ:

Երբեմն, իրեն սփոսած առասպելավկի ճանկու ու ստոյոյց նկարագրին, յատալ կը բերուի այն իրողութիւնը, թէ Ոսկեղարու մեր մատենագիրները մերժած բլլան առասպելները: Բայց այդ ճմրթում մը ո՛չ թէ ժխտում են իր առասպելի լուծեան, այլ՝ նորագործ հայութիւնը բրիտանիկութեան կապելու ճիգ: Քորեկացին ու Նղիշէն ու Փարպեցին կը մերժեն առասպելներ արձանագրել, որովհետեւ այդ առասպելավկութեանն չին դուստնականները հայ ժողովուրդը տակաւին կապուած կը պահէին չեթանուութեան:

Մակայն անոնք՝ իրենց կարգին՝ քրիստոնեական առասպելներ ներմուծեցին մերժուած Հեթանոսականներուն անդ: Ազաթանգեղոս ու Փաստոս Բի-
զանդ, նոյնիսկ Խորենացին ու Եղիշէն ու Կորին ու Եղեիկ յի են այսպիսի
առասպելներով, ինչպէս որչի 13 տարիներու Խոր Վիրապէն ու Տրդատի խո-
զանժան վայրենացու մէջ փրկու թեան, ու Ռեկի կոանով Միաննի էջրի աւերիչքն
սկսած մինչև: Վրթանէս Հայրապետի կողմէլ շարագործ բանակի մը անշարժու-
ցու մը, արտաքին կատոյցքով ճառասպելներ, որոնք սակայն, ներքին իմաս-
տով՝ արուեստի սաստկացուցիչ շափագանցու թիւններով պատկերացու մներ
են ժողովրդային հոգեբանու թեան:

Տարօրինակ է սակայն, թէ Խորենացին չի ժխտեր, որ առասպելները գեղ
ու նին մարդկային կեանքը այլաբանորէն մեկնարանելու մէջ: Հայկական
առասպելներու առթիւ, պարսկականին ակնարկելով՝ Խորենացի կ'ըսէ.
«Զի՞նչ քեզ առ ոչսոքիկ կարօտու քիւն առասպելի սուտ. կամ զի՞նչ պետք
անմիտ եւ անհանճար բանից յարմարանէ»: Ակնարկու թիւնք Վիրապետի
Աճառակայ փծուց եւ անճոռնի առասպելէ՞ք մասին է, որուն իբրև թէ
գեւերը կը սպասու որլին, եւ ուսերը համարու թելով ծնու նդ կու տար վիշապնե-
րու, եւ վերջապէս Հրու գէն զայն կապելով Դրժբաւ բնդ շեռը կը տանի, թա-
րայրի մը մէջ կը բանտարկէ, եւ այլն: Այսպիսի պարսկական ճառ ու եւ առաս-
պելս բաներու գիծաց, Խորենացին յունական առասպելները բժրանելի կը
նկատէ իբրև ճայլարանու թիւն ճարդկային կեանքի, եւ նոյն հատու անի շա-
րու նախու թեան մէջ կ'ըսէ. «Մի՞ արդեօք յունական պերճ եւ ոգորկ առաս-
պելին իցնն հանդերձ պատճառաւ, որք զնշմարտութիւն իրացն այլաբա-
նարար յիմեհանս ունին քաճուցեալս» (Պար. Ա. յր. Վեհ. 1881, էջ 132-3): Խո-
րենացի Պրոմիթթուր եւս կրակը աստուածներէն զողնելով մարդոց շնորհելը
այլաբանու թիւն ճարդկային կեանքի, եւ ինչ ընդէ՞ք սա գտակ իրոյ կամ Պրոմիթթուս գո-
ղացեալ գառ ի յասուածոցն հաւր եւ շնորհեալ մարդկան, որ է այլաբա-
նութիւն. եւ ոչ քերէ սակ կարգ բանիս» (Պար. Ա. է. էջ 11):

Ուրեմն Պատմահայրը, առասպել պատմելը գանց ընելով՝ նոնդերձ՝ չի
կրնար ուրանայ, թէ անոնց մէջէն կը յայտարարուի այլաբաններէն մարդ-
կային հշմարտու թիւնը: Եւ այս զիջու մով է անուշտ որ առ հանած է գոնն
մէկ-քանի հատը այդ առասպելներէն արձանագրել, իբրև իր պատմագրու-
թեան յունացքի գարդ եւ «Հանեցնելու» համար իր մեկնաստ երկտասարդ
Բապրատու նի իխանի ճողայական» հետաքրքրու թիւնը... Իսկ Եղիշէ Պատմիչ
Վարդանանց բոլորովին կը մերժէ առասպելները, ու վիպասանու թեանց ակ-
նարկած տառն դիտել կու տայ. «Եւ եթէ արժան է հաւատալ առասպելաբա-
նութեանդ»: Ու պարտից արքային ու զգուած Հայոց պատասխան-նամակին
մէջ բացէն կը գժուէ. «Մի՞ք ոչ եւս առասպելեացն հաւատամէք» (Նշլ. Բ., Վեհ.
1893ի տպգր. էջ 62):

Երանի թէ մեր Ռեկեղարու մասնագիրները, մանաւանդ Պատմահայր
Խորենացին, որ Հայ ազգի ամբողջականութեան թեան բժրանու մով կատուցուած
առաջին մեծ պատմագրու թիւնը առած է Հայ ժողովուրդի չին գիցարանու-
թեանց եւ առասպելապետներու մէջէն, փոխանակ այդպէս մէկ-քանի պատա-
սելներ յու շարքելու, այն այ՛ իբրև ճանկարի որք եւ աւելորդապաշտական
զրոյցներ, իբրեւ ու յայնորէն հաւարու մներ բրան ու մեղի կտակամ ըլլալին:
Այդ առասպելապետներու մէջէն մենք պիտի կարենայինք այսօր դիտել մեր ջե-
զին բոլոր չին ճշմարտու թիւնները:

Եւ արդէն այդ առասպելներու ն մեծարժէքու թեան անհերքելի փաստ
ու նինք, թէ Խորենացին ինքն իսկ իր կատուցած պատմու թեան առաջը թա-
ղած է այդ առասպելապետներէն, տեղ-տեղ ակնարկելով՝ «Վասն որոյ արդա-
բանայ թուի առասպելին, որ ասի ի մէջ գեղցկաց». կամ՝ «Զամանք երգիչքն
Գողթուն ուռասպելաբանին այսպէս»:

Այդ զիջարանական եւ առասպելավիպային նիւթերը մարդկային մշակոյթին համար այնքան կարեւոր են, որքան հնագիտական պեղումներով այսօր լայնի ընդունումը թանկագին առարկաները:

Այս բոլորը թանկագին ընդունելով հանդերձ, պիտի ըսենք, թէ զիջարանութիւն եւ առասպելավիպ առակ չեն:

Բ.- ԱՌԱՎՈՐ ԶԱՆԱԶԱՆԵՆԷՆ ԱՍԵՒ ՖԱՊԼԷՆ

Առակը պէտք չէ երբեք շփոթուի «Ֆապլ»-ի հետ, թէեւ ասոր եւս ճառակն կոչուի մը տրուած է հայերէն լեզուի մէջ:

Ֆապլը առասպելա ընդունական ու կենդանական աշխարհի պատկերներով հիւսուած առասպել մըն է, խորքին վրայ անուղղակի մարդկային բարոյականութիւն ներկայացնող հեքիաթային պատահումներով: Այս կարգէն, որինակ, հին Հնդկաստանի Դայիլի եւ Դրժնի առակները, հին Յունաստանի Եպիքուրի առակները, Միջին դարերու Փրանսական Լաֆոնթէնի առակները, եւ հայոց Միսիթար Գուշի եւ Վարդան Այգեկցիի առակները:

Մինչդեռ, իսկական առակը ուղղակի մարդկային կեանքէ բերուած պատահումներով հիւսուած է: Թէեւ երբեմն ներկայացուած է խառն՝ Ֆապլի ու հեքիաթի տարրերով, բայց հիմնական կառուցուածքով առակը անխառն է ու մարդկային դերերով միայն ներկայացուած:

Հայերէն լեզուին մէջ Ֆապլ եւ առակը երկու մեկերն ալ բնութագրուած են ճառակն բառով: Մինչդեռ եւրոպական լեզուներու մէջ առակին տեսակը կոչուած է «Ֆապլ», միւսը՝ «Փարապլոյ», անգլերէն՝ «Փելըկլոյ»: Այս փարապլոյ եւ հայերէն առակը բառը ապահովարար կեանքն յուսարէն «Փարապլոյ» — բնուածակն հետուած բառն է, որմէ հայերէն «Աւտրի»-ի ստուածքով առակ: Ուստի՝ հայերէնի մէջ եւս առակի դիւրապիտ կարեւորայինը զանազանի առակի երկու տեսակները, եթէ գործածելիք նախնազոյնին համար «Ֆապլ» բառը (որ միտմամբնակ ճառասպել) կոչուածով ալ գործածուած է հայոց մէջ), եւ միւս բարձրագոյն տեսակին համար միայն գործածելիք առակը:

Ֆապլը միջին օղակն է ճառասպել-Ֆապլ-առակն շարքին: Ֆապլին մէջ անուղղակի կերպով միայն կը ներկայանայ մարդկային տարրը, ինչպէս նաեւ երբեմն խառն զիջարան, զեր-մարդկային տարրերով, բայց իր իսկական բնութիւնով Ֆապլը կու գայ առասպելաբար բնութեան ստորին խառն, այսինքն՝ կենդանական ու բնական աշխարհի պատմութիւններէ:

Իրողութիւնն է, թէ երբեմն Ֆապլներն ալ կը խառնուին զիջարան մարդոց նկարագրով: Օրինակ, Լաֆոնթէնի «Փայտահատն ու մահը», Վարդան Այգեկցիի «Թագաւորն ու օճր», բայց իր հիմնական կառուցումով Ֆապլին մէջ կը խօսին ու կը զերպատարեն կենդանին ու ծառը ու երբեմն իսկ անկենդան ժայռը, գետը, ծովը կը կենդանացուին... Անխառն Ֆապլին մէջ Աստուած ու մարդ տեղ չունին: Աստուած անտեսուած է, իսկ մարդը հանդիսական մըն է միայն, ո՛չ զերպատար:

Ֆապլը Ֆապլ բլլայէ պիտի գագրէր ու վերածուէր առակի, անմիջապէս որ ուղղակի ու միմիայն մարդու կեանքը պատկերէր:

Այսպիսի կենդանական ու բնական ու հանրային բնութեան զայնու ու մարդկային աշխարհին խօսելուն հանգամանքովը՝ Ֆապլը զանց կ'ընէ, կ'անտեսէ ու յաճախ կը բռնաբարէ բնութեան օրէնքները: Իր զերպատարները մարդակերպ կը ներկայացնէ, եւ անկենդան բնութեան տարրերու ն եւ անբան արարածներու ն կը շնորհէ կենդանութիւն ու բնականութիւն ու լին-

դու եւ իմաստութիւն... Կր թոյլատրել, օրինակ, որ ծառերը փնտառու մի էլլին իրենց ճիւղացաւ որք ընտրելու, կամ ջուրին ձուկը էլլի ու ճիւղիք, կամ անասունք անասու նենքը ճոզողք զուժարեն...

Ճապինքու գերակատար կենդանիներն այ մարդոց նման իրենց կեանքը կը վարեն բնութեան ընդհանուր օրէնքներու շրջանակին մէջ եւ այդ օրէնքներու ն ենթակայ: Օրինակ, ազուէր ճնշակերոյթիք կը հրաւիրէ արագ զիւր, բայց ճնաւք անոր կը հրաժեշտ բաց-տափակ պնակի մը մէջ, ուրիշ ոչինչ կընայ շուտեղ խեղճ ճիւղիք: Կամ՝ կամուրջին շուտ ջուրին մէջ իր պատկերը տեսնելով՝ յանկարծ հաջկուն՝ ջուրին մէջ կը ձգէ իր իսկ բերանին ոսկորը: Կամ՝ անմիտ, ինքնահաւան ազոտաւք, որ հաւատարմով ազուէր փաղաքակցան գոյգրին, ճերգելու ճ նամար կատար բացած ասան գետին կը ձգէ իր պանիքը: Այսպէս, արասքին զէպքերը բնական օրէնքներու շրջանակին մէջ պահելով հանդերձ, Փապը բոլորովին գանց կ'ընէ կենդանական բնութեան ներքին պահանջները: Կր թոյլատրել, որ կենդանիներ բանականութիւն ու նենան, ճատեն, զգան ու գործեն ճիւղ մարդոց պէս:

Փաղաքակրթութեան այն աստիճանին, ուր մարդկութիւնը տակաւին ճմանուկ ճ սասակին մէջ էր եւ իր աշխարհայայտացքը դեռ անմիտիկ, աշխրհիկ՝ կըր տակաւին մարդ իր շրջապատը բնութիւնը շնչաւորուած ու կենսաւոր կըր տեսնէր, ան դիւրաւ կընար հաւատալ բնութեան տարբերու ճ ճիւղիք ու կամենալու ու գործելու կարելիութեան: Մարդ գանազանութիւն շէր գնէր իր եւ կենդանական ու բուսական աշխարհին միջև: Ընչպէս ինքն էր ապրող ու շարժող կակ մը՝ նոյնպէս կը նկատուր բնութեան բոլոր տարբերու: Աստիճակ կարելի էր մարդկային կեանքի հայելին ներկայացնել կենդանիներու ու բոյաներու այ կեանքին մէջ, ասոնց միջոցով անուղղակի մարդուն սայով խրատական թելադրանք:

